ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՋ

0010, ք. Երևան, Վ. Սարգսյան փ. 5

N _____

«09» 06 2025 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ԱԼԵՆ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Սիմոնյան,

ՀՀ «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ Սահմանադրական օրենքի 108-րդ հոդվածով և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով սահմանված կարգով՝ ներկայացնում եմ ՀՀ Ազգային ժողովի ութերորդ գումարման պատգամավոր Սեյրան Մուշեղի Օհանյանի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելուն համաձայնություն տալու մասին միջնորդագիրը և պատգամավորի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելուն համաձայնություն տալու մասին ՀՀ Ազգային ժողովի որոշման նախագիծը:

Առդիր՝ միջնորդագիրը՝ «74» թերթ, ՀՀ Ազգային ժողովի որոշման նախագիծը՝ «1» թերթ:

Հարգանքով՝

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ
ԴԱՍԻ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ ԱՆՆԱ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ

Նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ ՍԵՅՐԱՆ ՄՈՒՇԵՂԻ ՕՀԱՆՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՔՐԵԱԿԱՆ ՀԵՏԱՊՆԴՈՒՄ ՀԱՐՈՒՑԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը ՈՐՈՇՈՒՄ Է.

ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Սեյրան Մուշեղի Օհանյանի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելուն տալ համաձայնություն:

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ ԱԼԵՆ ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

0010, ք. Երևան, Վ. Սարգսյան փ. 5

N _____

«09» 06 2025 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ԱԼԵՆ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

ՄԻՋՆՈՐԴԱԳԻՐ

ՀՀ Ազգային ժողովի ութերորդ գումարման պատգամավոր Սեյրան Մուշեղի Օհանյանի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելուն համաձայնություն տալու մասին

ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչությունում թիվ 90101617 քրեական վարույթով կատարված նախաքննությամբ փաստական տվյալներ են ձեռք բերվել այն մասին, որ «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տարածքում ընդգրկված, պետական սեփականություն հանդիսացող՝ Գեղարքունիքի մարզի Դրախտիկ համայնքի 1-ին փողոցի 71 հասցեում գտնվող 10526 քմ հողատարածքը զավթվել է և 2010-2015 թվականներին, առանց կառուցապատման իրավունքի, հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձի կողմից նշված հողատարածքի վրա ինքնակամ կառուցվել է առանձնատուն: 2016 թվականի դեկտեմբերի 12-ին միջգերատեսչական մրցութային հանձնաժողովի կողմից անցկացված մրցույթի արդյունքում միանձնյա հաղթող է ճանաչվել Երևան քաղաքի բնակիչ Բենիամին Սուրենի Ղալեչյանը, ում նշված հողամասը տրամադրվել է վարձակալության և կառուցապատման իրավունքով 25 տարի ժամկետով՝ 2 տարվա ընթացքում 250.000.000 ՀՀ դրամի ներդրումով հանգստի գոտի կառուցելու համար:

Նախաքննությամբ տվյալներ են ձեռք բերվել նաև, որ «Սևան» ազգային պարկ»

ՊՈԱԿ-ի տարածքում ընդգրկված, պետական սեփականություն հանդիսացող՝ Գեղարքունիքի մարզի Դրախտիկ համայնքի 1-ին փողոցի 71 հասցեում գտնվող 10526 քմ հողատարածքը և դրա վրա ինքնակամ կառուցված առանձնատունը 2010 թվականից սկսած փաստացի տիրապետվում է հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձի կողմից:

Նախաքննության ընթացքում զննվել են հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձի կողմից 2021 թվականին ներկայացված՝ պաշտոնեական պարտականությունները ստանձնելու և տարեկան հայտարարագրերը, որոնցում վերոգրյալ անշարժ գույքի վերաբերյալ որևէ նշում առկա չէ:

Ձեռք բերված տվյալների հիման վրա քննիչի կողմից հաղորդում է ներկայացվել այն մասին, որ ՀՀ Ազգային ժողովի ութերորդ գումարման պատգամավորը, հանդիսանալով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձ, 2021 թվականին ներկայացված՝ պաշտոնեական պարտականությունները ստանձնելու և տարեկան հայտարարագրերում թաքցրել է հայտարարագրման ենթակա տվյալը, ինչը հանգեցրել է առանձնապես խոշոր չափերով գույքի չհայտարարագրմանը:

Նշված հաղորդման հիման վրա 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 314.3-րդ հոդվածի 2-րդ մասով (համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի 444-րդ հոդվածի 2-րդ մասին) 2023 թվականի մայիսի 25-ին նախաձեռնվել է թիվ 90152923 քրեական վարույթը:

2023 թվականի հունիսի 6-ին թիվ 90152923 քրեական վարույթով նախաքննությունը շարունակելը ՀՀ գլխավոր դատախազի կողմից հանձնարարվել է ՀՀ ԱԱԾ քննչական գլխավոր վարչությանը:

2024 թվականի հունվարի 5-ին քրեական վարույթով նախաքննությունը շարունակելը ՀՀ գլխավոր դատախազի կողմից հանձնարարվել է ՀՀ քննչական կոմիտեին:

2025 թվականի հունվարի 29-ին թիվ 90152923 քրեական վարույթով նախաքննությունն իրականացնող քննիչի կողմից հաղորդում է ներկայացվել այն մասին, որ պետական քաղաքական պաշտոն զբաղեցրած բարձրաստիճան պաշտոնատար անձը 2010-2015 թվականների ընթացքում զավթել՝ առանց իրավական հիմքերի զբաղեցրել է

«Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տարածքում գտնվող, պետական սեփականություն հանդիսացող, Գեղարքունիքի մարզի Դրախտիկ համայնքի 1-ին փողոցի 71 հասցեի 10526 քմ հողատարածքը և հիշյալ տարածքում իր ենթակայությամբ գործող՝ ՀՀ ՊՆ վարչության պետի պաշտոնը զբաղեցրած անձի, ինչպես նաև այլ անձանց անմիջական մասնակցությամբ, առանց կառուցապատման իրավունքի, իր և իր ընտանիքի կարիքների համար կառուցել է ինքնակամ շինություններ, որոնց արժեքը գերազանցում է ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված հանցավոր ճանապարհով ստացված գույքի առանձնապես խոշոր չափի նվազագույն շեմը:

Վերոհիշյալ ժամանակահատվածում նշված պաշտոնատար անձինք առանձնատան վերանորոգման և վերակառուցման աշխատանքների կատարմանը ներգրավել են իրենցից ծառայողական կախվածության մեջ գտնվող անձի հետ փոխկապակցված կազմակերպությանը, որի կողմից իրականացված շուրջ 58.000.000 ՀՀ դրամի շինարարական աշխատանքները պաշտոնատար անձանց պահանջով որպես առավելություն տրամադրվել է նրանց՝ իշխանական, ծառայողական լիազորությունները և դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով կաշառք տվողի և նրա հետ փոխկապակցված անձանց օգտին գործողություններ կատարելու համար:

Բացի այդ, ըստ ներկայացված հաղորդման՝ ՀՀ բնապահպանության նախարարության համապատասխան պաշտոնատար անձինք, տեղեկացված լինելով, որ «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տարածքում գտնվող, պետական սեփականություն հանդիսացող, Գեղարքունիքի մարզի Դրախտիկ համայնքի 1-ին փողոցի 71 հասցեի 10526 քմ հողատարածքը զավթված է պետական քաղաքական պաշտոն զբաղեցրած բարձրաստիճան պաշտոնատար անձի կողմից և հողատարածքի վրա արդեն իսկ ինքնակամ կառուցված են անօրինական շինություններ, դրանք քողարկելու և դրանց օրինական տեսք տալու համար, չարաշահելով իրենց ծառայողական լիազորությունները, կազմակերպել են հողամասի վարձակալության ձևական մրցույթ:

Վերոնշյալ պետական քաղաքական պաշտոն զբաղեցրած՝ բարձրաստիճան պաշտոնատար անձը, «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տարածքում գտնվող վերոհիշյալ հողատարածքն իր կողմից զավթված լինելու և դրա վրա առանց կառուցապատման իրավունքի ապօրինի շենք-շինությունները կառուցելու հանգամանքները, անշարժ գույքի հանցավոր ծագումը թաքցնելու, ապօրինի գործարքում իր մասնակցությունը

չբացահայտելու, այդպիսով գույքի իրական պատկանելությունը թաքցնելու և խեղաթյուրելու դիտավորությամբ, ինչպես նաև փաստացի իր կողմից զավթված հողատարածքը և դրա վրա կառուցված շինություններն օրինականացնելու նպատակով ապահովել է իր վարորդի մորաքրոջ որդու կողմից նշված հողամասի վարձակալության և կառուցապատման իրավունք ձեռք բերելու համար համապատասխան հայտի և կառուցապատման գործարար ծրագրի ներկայացումը ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքների հողամասերը վարձակալության և (կամ) կառուցապատման իրավունքով տրամադրելու նպատակով ստեղծված միջգերատեսչական մրցութային հանձնաժողովին: Այնուհետև, նշված միջգերատեսչական մրցութային հանձնաժողովի կազմում գտնվող պաշտոնատար անձինք, խախտելով մրցույթի կարգը սահմանող՝ ՀՀ կառավարության 2008 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ 1578-Ն որոշման պահանջները, անձնական շահագրգռվածությունից և խմբային շահերից ելնելով, ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքի վերոնշյալ հողամասը վարձակալության և կառուցապատման իրավունքով, 25 տարի ժամկետով տրամադրել են նշված անձին, որն անզգուշությամբ առաջացրել է ծանր հետևանքներ:

Վերոգրյալ հաղորդման հիման վրա 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասով, 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով, 38-190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով, 311-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով և 312-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 314.3-րդ հոդվածի 1-ին մասով (համապատասխանում են 2022 թվականի հուլիսի 1-ին ուժի մեջ մտած ՀՀ քրեական օրենսգրքի 441-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 5-րդ կետերին, 296-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերին, 46-296-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերին, 435-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետին, 436-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետին և 445-րդ հոդվածի 1-ին մասին) ՀՀ քննչական կոմիտեի պետության, սահմանադրական կարգի հիմունքների և հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների քննության գլխավոր վարչությունում 2025 թվականի հունվարի 29-ին նախաձեռնվել է թիվ 58201825 քրեական վարույթը, որն ուղարկվել է ՀՀ գլխավոր դատախազություն:

2025 թվականի փետրվարի 03-ին ՀՀ գլխավոր դատախազի կողմից որոշում է կայացվել թիվ 58201825 քրեական վարույթի քննչական ենթակայության կանոնը փոխելու

և նախաքննության կատարումը ՀՀ քննչական կոմիտեին հանձնարարելու մասին:

2025 թվականի փետրվարի 12-ին թիվ 58201825 քրեական վարույթը միացվել է թիվ 90152923 քրեական վարույթին՝ նախաքննությունը շարունակելով 90152923 համարի ներքո:

2025 թվականի մարտի 20-ին թիվ 90152923 քրեական վարույթով նախաքննությունն իրականացնող քննիչի կողմից հաղորդում է ներկայացվել այն մասին, որ պետական քաղաքական պաշտոն զբաղեցրած՝ բարձրաստիճան պաշտոնատար անձը շահադիտական և անձնական շահագրգռվածությամբ պաշտոնեական դիրքը ծառայության շահերին հակառակ օգտագործելով 2010-2015 թվականների ընթացքում զավթել՝ առանց իրավական հիմքերի զբաղեցրել է բնության հատուկ պահպանվող տարածք հանդիսացող, «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տարածքում ընդգրկված, պետական սեփականություն հանդիսացող, Գեղարքունիքի մարզի Դրախտիկ համայնքի 1-ին փողոցի 71 հասցեում գտնվող 10526 քմ մակերեսով հողատարածքը և կառուցապատման իրավունքի բացակայության պայմաններում հանձնարարել է իր ենթակա, ՀՀ պաշտպանության նախարարության կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության պետի պաշտոնը զբաղեցրած Աշոտ Գրիգորյանին և այլ անձանց, ՀՀ պաշտպանության նախարարության կողմից իրականացված գնումների գործընթացներին մասնակցություն ունեցած շինարարական կազմակերպությունների ու դրանց ծառայողների ներգրավմամբ, կազմակերպել և ապահովել հիշյալ տարածքում իր համար առանձնատան կառուցումը:

Միևնույն ժամանակ, նշված տարածքի և այնտեղ գտնվող գույքի պահպանությունը պետական քաղաքական պաշտոն զբաղեցրած՝ բարձրաստիճան պաշտոնատար անձի հանձնարարությամբ իրականացվել է ՀՀ պաշտպանության նախարարության ռազմական ոստիկանության ծառայողների կողմից, որոնց 2011-2016 թվականներն ընկած ժամանակահատվածում ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին վճարվել է առնվազն 13.120.000 ՀՀ դրամ աշխատավարձ:

Պետական քաղաքական պաշտոն զբաղեցրած՝ բարձրաստիճան պաշտոնատար անձի զբաղեցրած պաշտոնով և դիրքով պայմանավորված՝ համապատասխան տեղական ինքնակառավարման մարմնի, ինչպես նաև «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի ծառայողների կողմից առհասարակ միջոցներ չեն ձեռնարկվել պետական

սեփականություն հանդիսացող հողամասի ինքնակամ զավթումը, շենքերի և շինությունների ինքնակամ կառուցումը կասեցնելու, իրավախախտումներն արձանագրելու, օրենսդրությամբ նախատեսված պատասխանատվության միջոցներ կիրառելու, իրավախախտումների հետևանքները վերացնելու ուղղությամբ:

ՀՀ պաշտպանության նախարարության կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության պետի պաշտոնը զբաղեցրած Աշոտ Գրիգորյանը, գործելով իր վերադասի՝ պետական քաղաքական պաշտոն զբաղեցրած՝ բարձրաստիճան պաշտոնատար անձի հանձնարարությամբ, նաև ՀՀ պաշտպանության նախարարության կողմից իրականացված գնումների գործընթացներին մասնակցություն ունեցած շինարարական կազմակերպությունների ու դրանց ծառայողների ներգրավմամբ, 2010-2015 թվականների ընթացքում կազմակերպել և ապահովել է ինքնակամ զավթված, բնության հատուկ պահպանվող տարածքում առանձնապես խոշոր չափերի հասնող արժողությամբ մի քանի շինություններից կազմված առանձնատան ինքնակամ կառուցումը, որի արդյունքում պետական քաղաքական պաշտոն զբաղեցրած՝ բարձրաստիճան պաշտոնատար անձի գույքն ավելացել է նրա օրինական եկամուտներն էականորեն գերազանցող չափով:

Նույն հաղորդման համաձայն՝ բարձրաստիճան պաշտոնատար անձանց կողմից շահադիտական, անձնական այլ շահագրգռվածությամբ պաշտոնեական դիրքը ծառայության շահերին հակառակ օգտագործելու, պաշտոնեական լիազորությունները չարաշահելու հետևանքով էական վնաս է պատճառվել հասարակության, պետության օրինական շահերին և անզգուշությամբ առաջացել են ծանր հետևանքներ՝ խաթարվել է ՀՀ պաշտպանության նախարարության և դրա ստորաբաժանում հանդիսացող՝ կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության բնականոն գործունեությունը, հիշյալ պետական մարմնի և ստորաբաժանման մասնակցությամբ գնումների բնականոն ընթացքը, պաշտոնատար անձինք և պետական գնումների գործընթացներին մասնակցություն ունեցող կազմակերպությունները ներգրավվել են զավթված բնության հատուկ պահպանվող տարածքում ինքնակամ շինությունների կառուցմանը, «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ն զրկվել է հիշյալ տարածքը նպատակային նշանակությամբ օգտագործելու հնարավորությունից, ՀՀ ՊՆ ծառայողները ներգրավվել են ծառայության խնդիրից չբխող գործառույթների իրականացմանը և ՀՀ պետական բյուջեի միջոցների

հաշվին վերջիններիս որպես աշխատավարձ վճարվել է առանձնապես խոշոր չափերով գումար:

Վերոգրյալ հաղորդման հիման վրա 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասով (համապատասխանում է 2022 թվականի հուլիսի 1-ին ուժի մեջ մտած ՀՀ քրեական օրենսգրքի 441-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ, 4-րդ և 5-րդ կետերին) ՀՀ քննչական կոմիտեի պետության, սահմանադրական կարգի հիմունքների և հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների քննության գլխավոր վարչությունում 2025 թվականի մարտի 20-ին նախաձեռնվել է թիվ 58207825 քրեական վարույթը, որն ուղարկվել է ՀՀ գլխավոր դատախազություն:

2025 թվականի մարտի 21-ին ՀՀ գլխավոր դատախազի կողմից որոշում է կայացվել թիվ 58207825 քրեական վարույթի քննչական ենթակայության կանոնը փոխելու և նախաքննության կատարումը ՀՀ քննչական կոմիտեին հանձնարարելու մասին:

2025 թվականի մարտի 24-ին թիվ 58207825 քրեական վարույթը միացվել է թիվ 90152923 քրեական վարույթին՝ նախաքննությունը շարունակելով 90152923 համարի ներքո:

2025 թվականի հունիսի 9-ին թիվ 90152923 քրեական վարույթի նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազի կողմից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով սահմանված կարգով ներկայացվել է առաջարկություն՝ քրեական հետապնդման անձեռնմխելիությունից օգտվող անձի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու համաձայնություն ստանալու միջնորդությամբ իրավասու մարմնին դիմելու վերաբերյալ:

Հսկող դատախազի ներկայացրած առաջարկության համաձայն՝ կատարված քննությամբ ձեռք են բերվել բավարար փաստեր, որոնք հիմք են տալիս ՀՀ ազգային ժողովի ութերորդ գումարման պատգամավոր Սեյրան Օհանյանի նկատմամբ հանրային քրեական հետապնդում հարուցել 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասով, 311-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով, 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 314.3-րդ հոդվածի 2-րդ մասով (համապատասխանում են 2022 թվականի հուլիսի 1-ին ուժի մեջ մտած ՀՀ քրեական օրենսգրքի 441-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ, 4-րդ և 5-րդ կետերին, 435-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետին, 296-րդ

հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետին, 444-րդ հոդվածի 2-րդ մասին) այն բանի համար, որ նա, 2008 թվականի ապրիլի 14-ից մինչև 2016 թվականի սեպտեմբերի 9-ն ընկած ժամանակահատվածում զբաղեցնելով ՀՀ պաշտպանության նախարարի պաշտոնը, ՀՀ Սահմանադրության 85-րդ հոդվածի համաձայն՝ հանդիսանալով ՀՀ կառավարության անդամ, ՀՀ կառավարության և նրան ենթակա պետական կառավարման այլ մարմինների գործունեության կազմակերպման կարգը սահմանելու մասին ՀՀ նախագահի 2007 թվականի հուլիսի 18-ի՝ ՆՀ-174-Ն հրամանագրի համաձայն՝ հանդիսանալով պաշտպանության բնագավառում ՀՀ կառավարության քաղաքականության մշակումն ու իրականացումն ապահովող հանրապետական գործադիր մարմնի ղեկավար, իրավասու լինելով ղեկավարել, համակարգել և վերահսկել ՀՀ պաշտպանության նախարարության համակարգի մեջ մտնող մարմինների և կազմակերպությունների գործունեությունը, արձակել հրամաններ, տալ ցուցումներ, «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ իրականացնելով զինված ուժերի անմիջական ղեկավարումը, իրավասու լինելով կազմակերպել և վերահսկել զինված ուժերի ու ՀՀ պաշտպանության նախարարության համակարգի մեջ մտնող այլ մարմինների և կազմակերպությունների գործունեությունը, պարտավոր լինելով հսկողություն իրականացնել ֆինանսական միջոցների ծախսման, նյութատեխնիկական միջոցների և ունեցվածքի օգտագործման նկատմամբ, պետական մարմնում մշտապես իրականացնելով կազմակերպական-տնօրինչական, վարչատնտեսական գործառույթներ, հանդիսանալով պաշտոնատար անձ, շահադիտական և անձնական շահագրգռվածությամբ պաշտոնեական դիրքը ծառայության շահերին հակառակ օգտագործելով 2010-2015 թվականների ընթացքում զավթել՝ առանց իրավական հիմքերի զբաղեցրել է բնության հատուկ պահպանվող տարածք հանդիսացող, «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տարածքում ընդգրկված, պետական սեփականություն հանդիսացող, Գեղարքունիքի մարզի Դրախտիկ համայնքի 1-ին փողոցի 71 հասցեում գտնվող 10526 քմ մակերեսով հողատարածքը և կառուցապատման իրավունքի բացակայության պայմաններում հանձնարարել է իր ենթակա, ՀՀ պաշտպանության նախարարության կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության պետի պաշտոնը զբաղեցրած Աշոտ Գրիգորյանին և այլ անձանց, ՀՀ պաշտպանության նախարարության կողմից իրականացված գնումների գործընթացներին մասնակցություն ունեցած շինարարական կազմակերպությունների ու

դրանց ծառայողների ներգրավմամբ, կազմակերպել և ապահովել հիշյալ տարածքում իր համար առանձնատան կառուցումը:

Միևնույն ժամանակ, նշված տարածքի և այնտեղ գտնվող գույքի պահպանությունը Սեյրան Օհանյանի հանձնարարությամբ իրականացվել է ՀՀ պաշտպանության նախարարության ռազմական ոստիկանության ծառայողների կողմից, որոնց 2011-2016 թվականներին ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին վճարվել է առնվազն 13.120.000 ՀՀ դրամ աշխատավարձ:

Սեյրան Օհանյանի զբաղեցրած պաշտոնով և դիրքով պայմանավորված՝ համապատասխան տեղական ինքնակառավարման մարմնի, ինչպես նաև «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի ծառայողների կողմից առհասարակ միջոցներ չեն ձեռնարկվել պետական սեփականություն հանդիսացող հողամասի ինքնակամ զավթումը, շենքերի և շինությունների ինքնակամ կառուցումը կասեցնելու, իրավախախտումներն արձանագրելու, օրենսդրությամբ նախատեսված պատասխանատվության միջոցներ կիրառելու, իրավախախտումների հետևանքները վերացնելու ուղղությամբ:

ՀՀ պաշտպանության նախարարության կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության պետի պաշտոնը զբաղեցրած Աշոտ Գրիգորյանը, գործելով վերադասի՝ Սեյրան Օհանյանի հանձնարարությամբ, նաև ՀՀ պաշտպանության նախարարության կողմից իրականացված գնումների գործընթացներին մասնակցություն ունեցած շինարարական կազմակերպությունների ու դրանց ծառայողների ներգրավմամբ, 2010-2015 թվականների ընթացքում կազմակերպել և ապահովել է ինքնակամ զավթված, բնության հատուկ պահպանվող տարածքում 124 892 985 ՀՀ դրամ արժողությամբ մի քանի շինություններից կազմված առանձնատան ինքնակամ կառուցումը, որի արդյունքում Սեյրան Օհանյանի գույքն ավելացել է նրա օրինական եկամուտներն էականորեն գերազանցող չափով:

Նշված առանձնատան լողավազանի և շոգեբաղնիքի վերանորոգման և վերակառուցման աշխատանքները կազմակերպելու վերաբերյալ Սեյրան Օհանյանի հանձնարարությունը կատարելու նպատակով, Աշոտ Գրիգորյանը, ի պաշտոնե տեղեկացված լինելով, որ իր անմիջական ենթակա, նույն վարչության արտադրատեխնիկական բաժնի պետի պաշտոնը զբաղեցրած Գրիգոր Լևոնի Բարսեղյանի ընտանիքին պատկանող, շինարարական աշխատանքների իրականացմամբ

զբաղվող «Սիտտա Գրուպ» ՍՊ ընկերությունը մասնակցել է Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կողմից հայտարարված մրցույթներին և, հաղթող ճանաչվելով, իրականացրել շինարարական աշխատանքներ. 2015 թվականի ապրիլին դիմել է Գրիգոր Բարսեղյանին՝ առաջարկելով հիշյալ ընկերության միջոցով իրականացնել առանձնատան լողավազանի և շոգեբաղնիքի վերանորոգման և վերակառուցման աշխատանքները, որին Գրիգոր Բարսեղյանը համաձայնել է:

Այնուհետև «Սիտտա Գրուպ» ՍՊ ընկերությունն իր ֆինանսական միջոցներով վերոհիշյալ առանձնատանը կատարել է շուրջ 64.500.000 ՀՀ դրամի շինարարական աշխատանքներ, որից հետո շինարարական աշխատանքները 2015 թվականի սեպտեմբեր ամսին դադարեցվել են՝ ընկերության ֆինանսական միջոցները սպառվելու պատճառով. ինչի մասին Գրիգոր Բարսեղյանը և վերջինիս հայրը՝ Լևոն Բարսեղյանը, 2015 թվականի վերջին հայտնել են Աշոտ Գրիգորյանին և խնդրել վճարել փաստացի կատարված աշխատանքների դիմաց չվճարված շուրջ 58.000.000 ՀՀ դրամը:

Աշոտ Գրիգորյանը, գործելով Սեյրան Օհանյանի գիտությամբ և հանձնարարությամբ, հրաժարվել է տրամադրել հիշյալ գումարը՝ պատճառաբանելով, որ նշված աշխատանքների դիմաց վճարվելիք առանձնապես խոշոր չափերի՝ շուրջ 58.000.000 ՀՀ դրամ գումարը համարում է նախկինում ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հայտարարված մրցույթներում նրանց ընկերությանը հաղթող ճանաչելու, գնումների գործընթացի շրջանակներում կատարված աշխատանքներն անխոչընդոտ ընդունելու և դրանց դիմաց վճարումները կատարելու համար, այսպես կոչված, «ատկատի», այսինքն՝ կաշառքի գումար, ինչպես նաև խոստացել է իր պաշտոնեական դիրքն օգտագործելով՝ հետագայում ևս ապահովել ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հայտարարվելիք մրցույթներում անխոչընդոտ և շահավետ պայմաններով Ընկերությանը հաղթող ճանաչելու, գնումների շրջանակներում կատարված աշխատանքներն անխոչընդոտ ընդունելու և դրանց դիմաց վճարումները կատարելու գործընթացները:

«Սիտտա Գրուպ» ՍՊ ընկերության փաստացի սեփականատեր Լևոն Բարսեղյանը, գիտակցելով Սեյրան Օհանյանից ու Աշոտ Գրիգորյանից իր Ընկերության հետագա գործունեության և Աշոտ Գրիգորյանի ղեկավարած վարչությունում բաժնի պետի պաշտոն

զբաղեցնող որդու պաշտոնավարման կախվածությունը, հետագա գնման գործընթացներում ապօրինի առավելություններ ստանալու ակնկալիքով, առանձնապես խոշոր չափերով՝ շուրջ 58.000.000 ՀՀ դրամի կատարված աշխատանքը որպես կաշառք տվել է Սեյրան Օհանյանին և Աշոտ Գրիգորյանին՝ վերջիններիս տրամադրելով նշված գումարի չափով առավելություն:

Այսպիսով, Սեյրան Օհանյանը, շահադիտական, անձնական այլ շահագրգռվածությամբ պաշտոնեական դիրքը ծառայության շահերին հակառակ օգտագործելով, չարաշահել է պաշտոնեական լիազորությունները, որպիսի գործողությունների հետևանքով էական վնաս է պատճառվել հասարակության, պետության օրինական շահերին և անզգուշությամբ առաջացել են ծանր հետևանքներ՝ խաթարվել է ՀՀ պաշտպանության նախարարության, դրա ստորաբաժանում հանդիսացող՝ կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության և առևտրային կազմակերպությունների բնականոն գործունեությունը, հիշյալ պետական մարմնի, ստորաբաժանման և կազմակերպությունների մասնակցությամբ գնումների բնականոն ընթացքը, պաշտոնատար անձինք և պետական գնումների գործընթացներին մասնակցություն ունեցող կազմակերպությունները ներգրավվել են ինքնակամ զավթված բնության հատուկ պահպանվող տարածքում ինքնակամ շինությունների կառուցմանը, «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ն զրկվել է հիշյալ տարածքը նպատակային նշանակությամբ օգտագործելու հնարավորությունից, ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին 2011-2016 թվականների ընթացքում առնվազն 13.120.000 ՀՀ դրամ աշխատավարձ ստացած ՀՀ ՊՆ ծառայողները ներգրավվել են ծառայության խնդիրից չբխող գործառույթների իրականացմանը:

Բացի այդ, Սեյրան Օհանյանը Աշոտ Գրիգորյանի հանցակցությամբ Լևոն Բարսեղյանի ընտանիքին պատկանող «Սիտտա Գրուպ» ՍՊ ընկերությանը ՀՀ ՊՆ իրականացրած գնման գործընթացներում ապօրինի առավելություններ տրամադրելու, նշված կազմակերպության և ՀՀ պաշտպանության նախարարությունում բաժնի պետի պաշտոն զբաղեցնող Գրիգոր Բարսեղյանի օգտին գործողություն կատարելու, այդպիսի գործողություն կատարելուն նպաստելու, ինչպես նաև թողտվության համար ստացել է առանձնապես խոշոր չափերով՝ 58.000.000 ՀՀ դրամ կաշառք:

Այսինքն՝ Սեյրան Օհանյանին վերագրվում են 2003 թվականի ապրիլի 18-ին

ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասով և 311-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով (համապատասխանում են 2022 թվականի հուլիսի 1-ին ուժի մեջ մտած ՀՀ քրեական օրենսգրքի 441-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ, 4-րդ և 5-րդ կետերին և 435-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետին) նախատեսված հանցավոր արարքների կատարում:

Բացի այդ, Սեյրան Օհանյանը նշված հանցավոր գործողությունների արդյունքում «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տարածքում ընդգրկված, պետական սեփականություն հանդիսացող, Գեղարքունիքի մարզի Դրախտիկ համայնքի 1-ին փողոցի 71 հասցեի 10526 քմ մակերեսով հողատարածքն իր կողմից զավթված լինելու և դրա վրա առանց կառուցապատման իրավունքի, ապօրինի, իր և ընտանիքի անդամների օրինական եկամուտները զգալիորեն գերազանցող և դրանցով ողջամտորեն չհիմնավորվող 125 394 158 ՀՀ դրամ արժողությամբ շենք-շինությունների հանցավոր ծագումը թաքցնելու, գույքի իրական բնույթը, ծագման աղբյուրը խեղաթյուրելու, ապօրինի գործարքներում իր մասնակցությունը չբացահայտելու, հիշյալ գույքի նկատմամբ իրական իրավունքները և պատկանելիությունը քողարկելու, հանցավոր ճանապարհով ձեռք բերված անշարժ գույքին օրինական տեսք տալու նպատակով ապահովել է ՀՀ պաշտպանության նախարարի պաշտոնը զբաղեցնելու ժամանակահատվածում իր վարորդ հանդիսացած Արթուր Առաքելյանի մորաքրոջ որդի Բենիամին Ղալեչյանի, ինչպես նաև իր օգնական հանդիսացած Արթուր Գրիգորյանի եղբայր՝ Էդգար Գրիգորյանի մասնակցությունը նշված հողատարածքի վարձակալության և կառուցապատման իրավունքի տրամադրման համար անցկացվող մրցույթին:

Հանցակիցների կողմից նախապես մշակված հանցավոր սխեմայի կիրառման և հանցավոր վերջնարդյունքին ուղղված՝ միմյանց փոխլրացնող գործողությունների արդյունքում Բենիամին Ղալեչյանը մրցութային հանձնաժողովին է ներկայացրել մրցույթի հայտ և հանգստի գոտու կառուցապատման գործարար ծրագրի փաթեթ, որում թաքցվել է հողատարածքն արդեն իսկ շինություններով ծանրաբեռնված լինելու հանգամանքը, իսկ գործարար ծրագրով առաջարկվել է կառուցել ադմինիստրատիվ, հանգստի, ժամանցի և սպորտային շինություններ:

ՀՀ բնապահպանության նախարարի և միջգերատեսչական մրցութային հանձնաժողովի նախագահի պաշտոնները զբաղեցրած Արծվիկ Մինասյանը, տեղյակ լինելով, որ նշված հողատարածքը ծանրաբեռնված է շենք-շինություններով, որոնք

փաստացի պատկանում են Սեյրան Օհանյանին, խմբային շահերից ելնելով, չկատարելով ծառայողական պարտականությունները, պաշտոնեական դիրքն օգտագործելով ծառայության շահերին հակառակ ոչ միայն որևէ միջոց չի ձեռնարկել նշված իրավախախտումների արձանագրումը, պատասխանատվության միջոցների կիրառումն ու հետևանքների վերացումն ապահովելու ուղղությամբ, այլև ապահովել է մրցութային հանձնաժողովի կողմից, ակնհայտ կեղծ տեղեկություններ պարունակող փաստաթղթերի հիման վրա, ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքի նկատմամբ կառուցապատման իրավունքի տրամադրումը Ս.Օհանյանի հետ փոխկապակցված և նրա կողմից որոշված անձին՝ Բենիամին Ղալեչյանին:

«Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի խորհրդի՝ 2016 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 16-03 որոշմամբ հավանություն է տրվել ՊՈԱԿ-ի և Բենիամին Ղալեչյանի միջև կնքվող 1.0526 հա չափով հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման մասին պայմանագրին՝ կառուցապատման վճարի չափ սահմանելով 631560 ՀՀ դրամ/տարի, իսկ պայմանագրի ժամկետ՝ 25 տարի:

«Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի և Բենիամին Սուրենի Ղալեչյանի միջև 2017 թվականի մայիսի 3-ին կնքվել է պետական սեփականություն հանդիսացող՝ հիշյալ հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման մասին թիվ 1552 պայմանագիրը, որի հիման վրա 2017 թվականի մայիսի 22-ին կատարվել է Բենիամին Ղալեչյանի իրավունքների պետական գրանցում և վերջինիս տրվել թիվ 22052017-05-0015 վկայականը՝ այդ կերպ փաստացի ապահովելով Ս.Օհանյանի կողմից նշված անշարժ գույքի հետագա անխոչընդոտ տիրապետումն ու օգտագործումը:

Այսպիսով, Սեյրան Օհանյանն օրինականացրել է հանցավոր ճանապարհով ձեռք բերված առանձնապես խոշոր չափերով գույքը:

Այսինքն՝ Սեյրան Օհանյանին վերագրվում է 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով (համապատասխանում է 2022 թվականի հուլիսի 1-ին ուժի մեջ մտած ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետին) նախատեսված հանցավոր արարքի կատարում:

Բացի այդ, Սեյրան Օհանյանը, 2021 թվականի օգոստոսի 2-ից ստանձնելով ՀՀ ազգային ժողովի ութերորդ գումարման պատգամավորի պետական քաղաքական

պաշտոնը, հանդիսանալով «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածով սահմանված՝ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձ, 2021 թվականի հոկտեմբերի 19-ին ՀՀ կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին իր կողմից ներկայացված, պաշտոնատար անձի՝ պաշտոնեական պարտականությունները ստանձնելու օրվա դրությամբ առկա գույքի, եկամուտների և շահերի վերաբերյալ հայտարարագրում, իսկ այնուհետև նաև 2022 թվականի մայիսի 31-ին ներկայացված՝ պաշտոնատար անձի տարեկան՝ 2021 թվականի գույքի, եկամուտների, շահերի և ծախսերի վերաբերյալ, 2023 թվականի հունիսի 2-ին ներկայացված՝ պաշտոնատար անձի տարեկան՝ 2022 թվականի գույքի, եկամուտների, շահերի և ծախսերի, 2024 թվականի մայիսի 24-ին ներկայացված՝ պաշտոնատար անձի տարեկան՝ 2023 թվականի գույքի, եկամուտների, շահերի և ծախսերի վերաբերյալ հայտարարագրերում թաքցրել է փաստացի իրեն պատկանող, սակայն Բենիամին Ղալեչյանի անվամբ կառուցապատման իրավունքով գրանցված «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տարածքում ընդգրկված, Գեղարքունիքի մարզի Դրախտիկ համայնքի 1-ին փողոցի 71 հասցեում գտնվող 10526 քմ մակերեսով հողատարածքը, ինչպես նաև դրա վրա կառուցված, իրեն պատկանող և իր կողմից տնօրինվող շինությունների վերաբերյալ հայտարարագրման ենթակա տեղեկությունները, որի հետևանքով չի հայտարարագրվել 2021 թվականի դրությամբ՝ 123 369 193 ՀՀ դրամ, 2022 թվականի դրությամբ՝ 145 065 256 ՀՀ դրամ, 2023 թվականի դրությամբ՝ 166 402 824 ՀՀ դրամ արժողությամբ գույքը:

Այսպիսով, Սեյրան Օհանյանը թաքցրել է հայտարարագրման ենթակա տվյալը, ինչը հանգեցրել է առանձնապես խոշոր չափերով գույքի չհայտարարագրմանը:

Այսինքն՝ Սեյրան Օհանյանին վերագրվում է 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 314.3-րդ հոդվածի 2-րդ մասով (համապատասխանում է 2022 թվականի հուլիսի 1-ին ուժի մեջ մտած ՀՀ քրեական օրենսգրքի 444-րդ հոդվածի 2-րդ մասին) նախատեսված հանցավոր արարքի կատարում:

ՀՀ ազգային ժողովի ութերորդ գումարման պատգամավոր Սեյրան Օհանյանի կողմից վերոնշյալ հանցավոր արարքների կատարումը հաստատվել է քրեական վարույթի նախաքննությամբ ձեռք բերված մի շարք փաստական տվյալներով:

Մասնավորապես.

1. **Վկա Գրիգոր Բարսեղյանի ցուցմունքներով** այն մասին, որ 2008-2017

թվականներին ծառայել է ՀՀ ՊՆ-ում, մասնավորապես՝ 2008-2011 թվականներին աշխատել է ՀՀ ՊՆ կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչությունում, որպես արտադրատեխնիկական բաժնի գլխավոր մասնագետ, այնուհետև՝ մինչև 2017 թվականի օգոստոսի 29-ը, զբաղեցրել է նույն բաժնի պետի պաշտոնը: ՀՀ պաշտպանության նախկին նախարար Սեյրան Օհանյանին ճանաչում է ՀՀ ՊՆ-ում ծառայության բերումով, միմյանց հետ գտնվել են աշխատանքային, ծառայողական փոխհարաբերությունների մեջ: «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տարածքում՝ Գեղարքունիքի մարզի Դրախտիկ գյուղի հարակից հատվածում՝ Սևանա լճի ափին գտնվող ամառանոցի կառուցման աշխատանքների կատարմանն իր մասնակցության վերաբերյալ հայտնել է, որ 2015 թվականի ընթացքում իր ընտանիքին է պատկանել «Սիտտա գրուպ» ՍՊԸ-ն, որը ՀՀ տարածքում իրականացրել է տարբեր շինարարական աշխատանքներ: Որպես Ընկերության տնօրեն գրանցված է եղել իր ընկեր Աշոտ Արմենի Դավթյանը, սակայն հիմնականում գործունեությամբ զբաղվել են հայրը՝ Լևոն Բարսեղյանը և եղբայրը՝ Գարեգին Բարսեղյանը: Ընկերությունը, իր գործունեությամբ պայմանավորված, շինարարական աշխատանքներ է իրականացրել նաև ՀՀ ՊՆ կարիքների համար հայտարարված համապատասխան մրցույթներին հայտեր ներկայացնելով և հաղթող ճանաչվելով: 2015 թվականի ընթացքում ՀՀ ՊՆ կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության պետի պաշտոնը զբաղեցրած Աշոտ Բենիկի Գրիգորյանը, ով հանդիսացել է իր անմիջական ղեկավարը և տեղյակ է եղել, որ իր ընտանիքին պատկանող հիշյալ ՍՊԸ-ն ՀՀ ՊՆ կարիքների համար իրականացնում է շինարարական աշխատանքներ, դիմել է իրեն՝ «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տարածքում՝ Գեղարքունիքի մարզի Դրախտիկ գյուղի հարակից հատվածում՝ Սևանա լճի ափին գտնվող ամառանոցի տարածքում լողավազանի և շոգեբաղնիքի շինարարական աշխատանքների կատարման հարցով: Ինքը՝ որպես Աշոտ Գրիգորյանի ենթակա, չի մերժել նրա խնդրանքը: Այնուհետև պայմանավորվածություն են ձեռք բերել և օրեր անց միասին այցելել են այդ ամառանոցի տարածք, տեղում ծանոթացել աշխատանքների ծավալին, որից հետո ինքը համաձայնեցրել է Աշոտ Դավթյանի և իր հոր հետ, ապա սկսվել է նախատեսված շինարարական աշխատանքների կատարումը: Երբ Աշոտ Գրիգորյանն իրեն դիմել է նշված ՍՊԸ-ի միջոցով այդ աշխատանքների իրականացման համար, հայտնել է, որ այդտեղ կառուցվող ամառանոցը պատկանում է ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան

Օհանյանին, իրենք իրենց աշխատանքները կատարեն, որից հետո համապատասխան հաշվարկները կներկայացվեն և վճարումները կկատարվեն, սակայն կոնկրետ ի՞նչ եղանակով, չի հստակեցրել, ինքն էլ, հաշվի առնելով Աշոտ Գրիգորյանի անձը, զբաղեցրած պաշտոնը և ամառանոցի տիրոջ հանգամանքը, այլ հարցեր չի տվել: Բացի դա, այդ շինարարությամբ պայմանավորված՝ Աշոտ Գրիգորյանը խոստացել է, որ ՍՊԸ-ի համար անհրաժեշտ աշխատանքներ կապահովվի: Ընկերության կողմից այդ ամառանոցում պետք է իրականացվեին արդեն իսկ կառուցված շինության ներքին և արտաքին հարդարման, կոմունիկացիաների անցկացման, լողավազանի և շոգեբաղնիքի կառուցման աշխատանքները: Աշոտ Գրիգորյանն իրեն հայտնել է, որ այդտեղ որոշակի շինարարական աշխատանքներ արդեն իսկ կատարված են, մասնավորապես՝ բետոնային և կարկասային աշխատանքները մինչ այդ կատարվել են «Բաղրամյանշին» ԲԲԸ-ի կողմից: Իրենց պայմանավորվածության համաձայն՝ մինչև 2015 թվականի սեպտեմբեր ամիսը, այդ տարածքում իրենց ՍՊԸ-ի աշխատուժի միջոցով կատարվել են հսկայածավալ շինարարական աշխատանքներ: Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում հիմնականում ինքն է այցելել շինհրապարակ, իր այցելությունների ժամանակ, երբեմն այնտեղ է եղել նաև Աշոտ Գրիգորյանը, տարածքում տեսել է ինչպես Սեյրան Օհանյանին, այնպես էլ նրա կնոջը՝ Ռուզաննա Խաչատրյանին, ովքեր անձամբ աշխղեկին, ինչպես նաև այդտեղ հրավիրված համապատասխան դիզայներներին ցուցումներ են տվել: Այդ աշխատանքների իրականացման ընթացքում հիմնականում հսկողություն է իրականացրել Աշոտ Գրիգորյանը, և ինքը հիմնականում նրա հետ է առնչություն ունեցել, իսկ Սեյրան Օհանյանի հետ մեկ անգամ է ամառանոցի տարածքում շրջել և իրականացվող աշխատանքների կատարման վերաբերյալ զրույց ունեցել, ստացել ցուցումներ: Մինչև 2015 թվականի սեպտեմբեր ամիսն ամառանոցի տարածքում իրենց ֆինանսական միջոցների հաշվին շինաշխատանքներ կատարելու պայմաններում, քանի որ արդեն առանց համապատասխան վարձատրության դրանք շարունակելն անհնար է եղել, ինքն Աշոտ Գրիգորյանին հայտնել է, որ այլևս չի կարող աշխատանքների իրականացումը շարունակել, դադարեցնում է և այդպես էլ արել է, որից հետո, որքանով տեղյակ է, մնացած շինաշխատանքներն իրականացրել է Համլետ Ծառուկյանը: Կոնկրետ իրենց ՍՊԸ-ն այդտեղ կատարել է մոտավորապես 64.500.000 ՀՀ դրամի շինաշխատանքներ, որոնց դիմաց իրենց կատարվել են վճարումներ՝ բանվորներին վարձատրելու համար: Հիշում է,

որ մեկ անգամ վճարվել է մոտավորապես 3-4 միլիոն ՀՀ դրամ, որը վճարել է Աշոտ Գրիգորյանը՝ անձամբ իր աշխատասենյակում, որի ժամանակ այդտեղ ներկա է եղել աշխղեկ Գագիկը, ազգանունը չգիտի, մնացած գումարները չեն վճարվել մինչ օրս: Բացի այդ, երբ ինքը ընդհանուր հաշվարկներ է կատարել և պարզել, որ Սևանի այդ ամառանոցում կատարված իրենց աշխատանքների դիմաց պետք է վճարվեր մոտ 58.000.000 ՀՀ դրամ, իր հետ հերթական հանդիպման ժամանակ Աշոտ Գրիգորյանը հայտնել է, որ այդ գումարը նրանք չեն վճարելու, քանի որ իրենց ՍՊԸ-ի հետ ունեցած այլ պայմանագրերով պայմանավորված՝ իրենք նրան գումար են պարտք և Սևանում կատարված շինաշխատանքների գումարն ինքը դիտում է որպես «ատկատի» գումար՝ ՍՊԸ-ի շահած պայմանագրերի դիմաց: Այդ ընթացքում, քանի որ ՍՊԸ-ի կողմից կատարված շինաշխատանքներից հետո որոշ բանվորներ և աշխատուժ մնացել էր այդ տարածքում և աշխատանքներ կատարել, նրանցից ոմանց Աշոտ Գրիգորյանը կատարված աշխատանքների դիմաց վճարումներ կատարել է, իսկ թե որքան, տեղյակ չէ, միայն հիշում է, որ աշխատանքներ իրականացրած «Կարապետ» ՍՊԸ-ին շոգեբաղնիքի կառուցման համար վճարվել է մոտ 12.000.000 ՀՀ դրամ, թեև աշխատանքների կատարման արժեքը եղել է ոչ թե 12.000.000 ՀՀ դրամ, այլ 24.000.000 ՀՀ դրամ, ինչի մասին իրեն տեղեկացրել է նշված ՍՊԸ-ի տնօրեն Դավիթը: Ինքը չի կարող ասել, թե Աշոտ Գրիգորյանն ի՞նչ միջոցներով է նրանց գումարներ տվել: Նշված ամառանոցում իրենց կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ պայմանագրեր չեն կնքվել, դրանք կարարվել են բանավոր պայմանավորվածությունների հիման վրա: Իրենց կողմից փաստացի կատարված շինաշխատանքների դիմաց վճարումները կատարելու համար անձամբ ինքը Սեյրան Օհանյանին չի դիմել, քանի որ իր պայմանավորվածությունն անմիջականորեն նրա հետ չի եղել, այլ եղել է Աշոտ Գրիգորյանի հետ, սակայն քանի որ իմացել է, թե դա ում ամառանոցն է և ում համար են կատարվել այդ աշխատանքները, ծանոթ լինելով Սեյրան Օհանյանի քրոջ ամուսին՝ ներկայումս ԱՄՆ-ում բնակվող Ռշտունի Սիմոնյանի հետ, դեռևս 2017 թվականի հունվար-փետրվար ամիսներին, երբ Ռշտունին գտնվել է ՀՀ-ում, դիմել է վերջինիս՝ հայտնել խնդրի մասին, որից հետո նրա հետ միասին գնացել են Երևան քաղաքի Վարդանանց փողոցում գտնվող՝ Սեյրան Օհանյանի այդ ժամանակվա «ՕՐՕ» դաշինքի կուսակցական գրասենյակ, ինքը սպասել է դրսում, իսկ Ռշտունին մտել է ներս՝ իր հարցով Օհանյանի հետ զրուցելու: Քիչ անց նա դուրս եկել և

փոխանցել, որ Սեյրան Օհանյանն իրականում տեղյակ է կատարված շինաշխատանքների վերաբերյալ, սակայն ինքը ոչնչով չի կարող օգտակար լինել՝ իրենց առաջարկելով դիմել Աշոտ Գրիգորյանին: Եվ այդպես, մինչ օրս այդ գումարներն իրենց չեն տրվել: Դավիթ Առաքելյանին ճանաչում է՝ որպես Սեյրան Օհանյանի անվտանգության աշխատակից, ում տեսել է վերջինիս հետ՝ այդ ամառանոցի տարածք գալ-գնալուց: Դավիթի կրտսեր եղբորը ևս տեսել է ամառանոցում՝ հսկողություն իրականացնելիս:

2. Մեղադրյալ Լևոն Բարսեղյանի՝ որպես վկա և մեղադրյալ տրված ցուցմունքներով այն մասին, որ «Սիտտա գրուպ» ընկերությունը հիմնադրվել է Ջիվան Պետրոսյանի կողմից, սակայն տարբեր ժամանակահատվածներում տնօրեն է հանդիսացել իր որդի Գրիգոր Բարսեղյանի ընկեր Աշոտ Դավթյանը, իսկ ինքը եղել է ընկերության շինարարության ղեկավարը: ՍՊԸ-ի հիմնական գործունեությամբ՝ շինարարական աշխատանքների հետ կապված, ինքն է զբաղվել, սակայն պայմանավորվածությունները հիմնականում ձեռք է բերել որդին՝ Գրիգոր Բարսեղյանը, ով աշխատել է ՀՀ ՊՆ կապտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչությունում՝ որպես բաժնի պետ: Աշոտ Դավթյանը զբաղվել է միայն Ընկերության փաստաթղթերով, իսկ բուն աշխատանքներով՝ ինքը: Քանի որ Գրիգոր Բարսեղյանն աշխատում էր ՀՀ ՊՆ կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչությունում, իրենց Ընկերությունը շինարարական աշխատանքներ է իրականացրել Եղվարդի զորամասում և «Մոնթե Մելքոնյան» վարժարանում: Այդ ընթացքում՝ 2015 թվականի գարնանը, վարչության պետ Աշոտ Գրիգորյանը դիմել է որդուն՝ առաջարկելով ստանալ իր համաձայնությունը՝ իրենց պատկանող նշված Ընկերության միջոցներով շինարարական աշխատանքներ իրականացնել Սեյրան Օհանյանին պատկանող՝ Սևանա լճի ափին գտնվող հողամասի վրա: Ըստ Գրիգորյանի՝ իրականացվելու էին ներքին հարդարման, որոշակի կոմունիկացիաների կառուցման, սարքավորումների տեղադրման, լողավազանի և այլ աշխատանքներ: Այդ ամենի մասին որդու կողմից իրեն տեղեկացնելուց հետո, հաշվի առնելով, որ որդին երկար տարիներ աշխատում է ՊՆ-ում, իսկ դա նախարարի խնդրանքն է, տվել է իր համաձայնությունը՝ պատրաստակամություն հայտնելով զբաղվել այդ աշխատանքներով: Վատառողջ լինելու պատճառով՝ կատարվելիք աշխատանքների ծավալին տեղում ծանոթանալու նպատակով իր փոխարեն ամառանոց է գնացել որդին՝ Գրիգորը, ինչպես նաև Ընկերության աշղեկը և մասնագետներ: Վերադառնալով Սևանա

լճի ափին գտնվող՝ Սեյրան Օհանյանին պատկանող այդ առանձնատանից՝ որդին հանդիպել է իրեն ու միասին արդեն քննարկել են պլանավորված աշխատանքները, որից հետո սկսվել են այդ շինարարական աշխատանքները, որոնց արժեքը կազմել է մոտ 65.000.000 ՀՀ դրամ: Այնուհետև Աշոտ Գրիգորյանին խնդրել են վճարել կատարված աշխատանքների գումարները, սակայն վերջինս հրաժարվել է վճարելուց՝ ասելով, որ իրենք աշխատում են ՊՆ-ի հետ, այսինքն՝ մրցույթ ունեն շահած, կատարում են շինարարական աշխատանքներ, շահույթ են ստանում՝ առաջարկելով այդ միջոցներով կատարել ամառանոցի ծախսերը: Երբ որդին տեղեկացրել է իրեն այդ ամենի մասին, ինքը նշել է, որ Ընկերությունը մեծ շահույթներ չունի, իրենք չեն կարող իրենց հաշվին իրականացնել այդ աշխատանքները և պահանջելու են իրենց գումարը: Երբ որդին իր դիրքորոշման մասին տեղեկացրել է Աշոտ Գրիգորյանին, վերջինս բառացի որդուն ասել է, որ նրանք իրենցից «ատկատ» չեն պահանջի և դրա փոխարեն կստացվի, որ իրենք այդ աշխատանքներն իրականացրել են դրա փոխարեն, այսինքն՝ Ա.Գրիգորյանը «ատկատը» չի ուզի, իրենք էլ իրենց կատարած աշխատանքների գումարը չեն պահանջի: Դրանից հետո ինքն անձամբ գնացել է ՊՆ, Աշոտ Գրիգորյանի աշխատասենյակում հանդիպել նրա հետ՝ պահանջելով իրենց գումարը, սակայն նա տվել է նույն պատասխանը՝ ինչը որ որդուն էր ասել: Ինքը չի համաձայնել, վիճել է Աշոտ Գրիգորյանի հետ՝ ասելով, որ եթե գումարները չտան, իրենք կդիմեն համապատասխան մարմիններին և թողել հեռացել է ու մինչ օրս այդ գումարը չի ստացել: Իրենց այդ խոսակցությանն այլ անձ ներկա չի եղել: Սկզբնական փուլում իրենց լռելու հիմնական պատճառներից է եղել այն, որ Աշոտ Գրիգորյանը հայտնել է Եղվարդում ևս երկու զինապահեստների կառուցման մասին՝ ասելով, որ մեկ անձից գնման կամ մրցույթով հաղթող ճանաչվելու միջոցով իրենք կիրականացնեն այդ աշխատանքները, կունենան հավելյալ շահույթ: Բացի այդ, որդին աշխատել է Աշոտ Գրիգորյանի ենթակայության ներքո, որով պայմանավորված վերջինիցս գումար չեն կարողացել ստանալ, ստիպված լռել են և քայլեր չեն ձեռնարկել:

Լևոն Բարսեղյանը հայտնել է նաև, որ ընդհանուր խոսակցություններից տեղյակ է, որ «ատկատը» կազմել է ստացված գումարի մոտ 10 տոկոսը, որը տրվել է աշխատանքներն ընդունած համապատասխան ստորաբաժանմանը:

3. Վկա Գարեգին Բարսեղյանի ցուցմունքով այն մասին, որ 2013 թվականին ծառայությունից զորացրվելուց հետո օգնել է իրենց ընտանիքին պատկանող «Սիտտա

գրուպ» ՍՊ ընկերության գործունեության իրականացմանը՝ հիմնականում զբաղվելով մատակարարման հարցերով: Ընկերությունը զբաղվել է շինարարությամբ և հիմնականում մասնակցել ՀՀ ՊՆ կողմից հայտարարված մրցույթներին: Ճանաչում է ՀՀ ՊՆ ծառայող Աշոտ Բենիկի Գրիգորյանին, ով իր եղբայր՝ Գրիգոր Բարսեղյանի անմիջական ղեկավարն է եղել՝ զբաղեցնելով վարչության պետի պաշտոնը, իսկ եղբայրը ծառայել է այդ վարչությունում՝ որպես բաժնի պետ:

Այն հարցին, թե ինչ տեղեկություններ ունի ՀՀ պաշտպանության նախարարի պաշտոնը զբաղեցրած Սեյրան Օհանյանի կողմից «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տարածքում՝ Գեղարքունիքի մարզի Դրախտիկ համայնքի I-ին փողոցի 71 հասցեում 10526 քմ հողատարածքը ձեռք բերելու, այնուհետև հաջորդող ժամանակահատվածում՝ մինչև 2015-2016 թվականներն այդտեղ կառուցված շինությունների վերաբերյալ, հայտնել է, որ տեղյակ է, որ այնտեղ ամառանոց է կառուցվել, իսկ եղբայրը՝ Գրիգոր Բարսեղյանը և հայրը՝ Լևոն Բարսեղյանը, կատարել են որոշ շինարարական աշխատանքներ, մասնավորապես՝ շոգեբաղնիքի և լողավազանի կառուցման և վերանորոգման աշխատանքները: Եղբայրը և հայրը հայտնել են իրեն, որ պետք է Սևանում գտնվող՝ Սեյրան Օհանյանին պատկանող ամառանոցում կատարվեն վերը նշված աշխատանքները, իսկ գումարները վճարվելու են աշխատանքների ավարտից հետո: Այդ աշխատանքների կատարման համար Աշոտ Գրիգորյանը դիմել է եղբորը՝ Գրիգոր Բարսեղյանին, ով համաձայնել է, քանի որ իրեն դիմողը եղել է իր ղեկավարը: Այդ աշխատանքները կատարվել են 2015 թվականի ընթացքում: Ինքը ևս մասնակցել է այդ աշխատանքների կատարմանը, մասնավորապես՝ մատակարարել է տարբեր շինարարական ապրանքներ, լողավազանի կառուցման և շոգեբաղնիքի համար անհրաժեշտ շինանյութ, որոնք վերցվել են Երևան քաղաքի «Նոր տուն» խանութի՝ Նարդոսի մասնաճյուղից և առաքվել այնտեղ: Կատարվել են մոտ 60-ից 65 միլիոն ՀՀ դրամի չափով աշխատանքներ, կոնկրետ թիվը չի հիշում: Կատարված աշխատանքների դիմաց, որքանով տեղյակ է, վճարվել է մոտավորապես 5 կամ 7 միլիոն, ընդհանուր պարտքը մնացել է մոտ 58.000.000 ՀՀ դրամ: Եղբայրը և հայրն իրեն հայտնել են, որ շինարարական աշխատանքները կատարելուց հետո, երբ Գրիգոր Բարսեղյանը դիմել է Աշոտ Գրիգորյանին գումարի պահանջով, վերջինս հայտնել է, որ դա «ատկատի» գումար է և չի պատրաստվում վճարել այն: Այնուհետև իրենց հայրն է անձամբ զրուցել Աշոտ

Գրիգորյանի հետ, սակայն՝ ապարդյուն: Քանի որ այդ ժամանակ եղբայրը ծառայում էր ՊՆ-ում՝ Աշոտ Գրիգորյանի անմիջական ենթակայության ներքո, իրենք գումարի հարցով չեն դիմել որևէ կառույցի: Տեղյակ է, որ եղբայրը նշված հարցով 2017 թվականի հունվար-փետրվար ամիսներին դիմել է իրենց ծանոթ, Սեյրան Օհանյանի քրոջ ամուսին Ռշտունուն, սակայն Օհանյանը փոխանցել է, որ նա իրենց գումարներ չունի վճարելու՝ առաջարկելով այդ հարցով դիմել Աշոտ Գրիգորյանին:

4. Վկա Ջիվան Պետրոսյանի ցուցմունքով այն մասին, որ 2013 թվականի սեպտեմբերից մինչև 2017 թվականի հունիսն աշխատել է շինարարական աշխատանքներով զբաղվող «Սիտտա Գրուպ» ՍՊԸ-ում՝ որպես գլխավոր ինժեներ և հիմնադիր: Գրիգոր Բարսեղյանն իր դստեր ամուսինն է: ՀՀ ՊՆ նախարար Սեյրան Օհանյանին պատկանող՝ «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տարածքում գտնվող հողատարածքի վրա իրականացված շինարարական աշխատանքների ականատեսն է եղել մեկ անգամ, քանի որ 2015 թվականի աշնանն Ընկերության բանվորական ուժով, Գրիգորի պահանջով այդ տարածք շինանյութ է տեղափոխել: Նշված տարածք տեղափոխել է ամրաններ, գաջ, ցեմենտ, խողովակներ և այլ անհրաժեշտ ապրանքներ: Իր տեղեկություններով տարածքում շինարարությունը կատարվել է Գրիգոր Բարսեղյանի անմիջական ղեկավար Աշոտ Գրիգորյանի խնդրանքով, գումարի չափը կազմել է մոտավորապես 60.000.000 ՀՀ դրամ, հնարավոր է՝ մի փոքր քիչ: Աշխատանքները կատարվել են բանավոր պայմանավորվածության հիման վրա, առանց պայմանագրի: Երբ ինքը Գրիգոր Բարսեղյանից գումար է ուզել՝ շինանյութերի գումարները վճարելու համար, նա ասել է, որ դեռ չեն փոխանցել իրենց փողերը: Սկզբից պետք է մաս-մաս վճարեին, սակայն հետո արդեն հրաժարվել են և չեն տվել: Ինքը կոնկրետ պատճառը չգիտի, սակայն ըստ Գրիգորի՝ իրենց «քցում են» և գումարը չեն տալիս: Այդ տարածքում ինքը տեսել է արդեն իսկ կառուցված, ինչպես նաև կիսակառույց շինություններ: Ամառանոցը պատկանել է ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանին, որի մասին բոլորն են իմացել: Երբ այնտեղ շինանյութ տեղափոխելիս է եղել, ճանապարհին հարցափորձ անելով տարբեր բնակիչների, նրանց ուղղորդմամբ է գտել Սեյրան Օհանյանի ամառանոցի տեղը:

5. Վկա Աշոտ Դավթյանի ցուցմունքով այն մասին, որ 2015 թվականի փետրվարից մինչև 2016 թվականի սկզբները հանդիսացել է «Սիտտա գրուպ» ՍՊԸ-ի տնօրենը, որը զբաղվել է շինարարական աշխատանքներով: Թեև ինքն է հանդիսացել տնօրենը, սակայն

Ընկերության փաստացի գործունեությամբ հիմնականում զբաղվել են Գրիգոր Բարսեղյանը և Լևոն Բարսեղյանը: ՀՀ պաշտպանության նախկին նախարար Սեյրան Օհանյանին տեսել է հեռվից՝ Սևանա լճի ափին գտնվող, նրան պատկանող ամառանոցի տարածքում կառուցվող շոգեբաղնիքում: Ըստ Գրիգորի, այդ տարածքում պետք է որոշ շինարարական աշխատանքներ կազմակերպվեին: ՀՀ ՊՆ ծառայող Աշոտ Գրիգորյանին անձամբ չի ճանաչում, տեղյակ է, որ նա հանդիսացել է Գրիգոր Բարսեղյանի ղեկավարը: Մեկ անգամ Աշոտ Գրիգորյանին տեսել է այդ ամառանոցի տարածքում, երբ այնտեղ է եղել նաև Սեյրան Օհանյանը: Երբ առաջին անգամ եղել է ամառանոցի տարածքում, արդեն իսկ առկա է եղել պահակատուն, առանձին ամառանոցի պատրաստի շինություն, իսկ ներքևում՝ դեպի լիճ, պատրաստի կանգնած տեսել է ևս մեկ այլ շինություն, հատակ, պատեր: Գրիգորը հայտնել է, որ այդտեղ պետք է որոշ աշխատանքներ կատարվեն՝ տանիքի և ներքին հարդարման հետ կապված: Այդ շինությունը նախատեսված է եղել որպես լողավազան և շոգեբաղնիք ծառայելու համար: Ըստ Գրիգորի՝ տարածքում աշխատանքներ կատարելու համար իրեն դիմել է իր ղեկավար Աշոտ Գրիգորյանը: Այդ աշխատանքների կատարման վերաբերյալ որևէ փաստաթղթ չի կազմվել, դրանք կատարվել են բանավոր պայմանավորվածության հիման վրա: Աշխատանք կատարած անձանցից հիշում է աշխղեկ Գագիկին: Այդ ամառանոցի տարածքում շուրջ 60.000.000 ՀՀ դրամի չափով աշխատանքներ են իրականացվել, իսկ աշխատանքների կատարման համար վճարումներ եղել են, թե՝ ոչ, նման բան չի մտաբերում, կոնկրետ որևէ բանկային փոխանցումներ չեն եղել:

6. Վկա Վասիլ Գրիգորյանի ցուցմունքով այն մասին, որ 2015 թվականի ապրիլին Ջիվանի միջոցով ծանոթացել է նրա փեսա Գրիգոր Բարսեղյանի հետ: Վերջինիս ընտանիքին պատկանող «Սիտտա Գրուպ» ընկերությունում որպես վարորդ աշխատել է 2015 թվականի ապրիլ ամսից մինչև 2016 թվականի մայիսի 18-ը: Այդ ժամանակահատվածում Ընկերությունն աշխատանքներ է կատարել Նուբարաշենի զորամասում, Սևանա լճի ափին գտնվող՝ ՀՀ ՊՆ նախարար Սեյրան Օհանյանին պատկանող ամառանոցի տարածքում, Ամասիայի տարածքում գտնվող ինչ-որ դպրոցում, Եղվարդի տարածքում: Եղվարդի պահեստների աշխատանքներով զբաղվել է Գրիգորի եղբայր Գարիկը, Նուբարաշենի աշխատանքներով՝ Գրիգորի աներ Ջիվանը, Օհանյանին պատկանող ամառանոցի տարածք ապրանքներ տեղափոխելու համար

հանձնարարություններ ստացել է Ջիվանից և Աշոտ Դավթյանից: Մասնավորապես՝ վերջինիս կարգադրությամբ չորս անգամ Երևան քաղաքից ցեմենտ, ներկեր, խողովակներ է տեղափոխել տվյալ ամառանոց:

7. Վկա Համլետ Ծառուկյանի ցուցմունքով այն մասին, որ 2010-2016 թվականներին զբաղվել է շինարարությամբ, մասնակցել է տարբեր մրցույթների և կատարել է շինարարական աշխատանքներ, որոնք իրականացրել է իրեն պատկանող «Աշխատանք» ՍՊԸ-ի միջոցով, որի հիմնադիրը և տնօրենն ինքն է հանդիսանում: Մեծ շինարարական աշխատանքներ է կատարել նաև ՀՀ ՊՆ կողմից հայտարարված մրցույթներին մասնակցելով և հաղթելով: ՀՀ պաշտպանության նախկին նախարար Սեյրան Օհանյանին ճանաչել է աշխատանքի բերումով, մասնավորապես՝ պաշտպանության նախարարության պատվերների կատարման ընթացքում շինտեղամասեր Սեյրան Օհանյանի կողմից այցելելու ընթացքում: Աշոտ Գրիգորյանին ճանաչում է կրկին աշխատանքի բերումով՝ որպես ՊՆ կապիտալ շինարարության վարչության պետ, իսկ Գրիգոր Բարսեղյանը հանդիսացել է այդ վարչության աշխատակից: Գարեգին Բարսեղյանին չի ճանաչում, իսկ Լևոն Բարսեղյանին վաղուց ճանաչում է՝ որպես շինարար: Տարեթիվը չի հիշում, Աշոտ Գրիգորյանն իրեն հայտնել է, որ Գեղարքունիքի մարզի Դրախտիկ համայնքի տարածքում՝ Սևանա լճի ափին գտնվող ամառանոցում նախարար Սեյրան Օհանյանը խնդիրներ ունի և խնդրել է ամառանոցի տարածքում հանդիպել և տեղում որոշ հարցերի պարզաբանումներ տալ: Ինքը համաձայնել է, որից հետո շաբաթ կամ կիրակի օրը, պայմանավորվածության համաձայն, Աշոտի հետ գնացել են տվյալ ամառանոց, որտեղ եկել է նաև Օհանյանը և ասել, որ այդ շինությունում ցանկանում է սպա կենտրոն հավաքել, այսինքն՝ լողավազան ու շոգեբաղնիք: Շրջել են այդ կիսակառույցի տարածքում, ինքն իր պատկերացումները հայտնել է՝ ասելով, թե որտեղ և ինչ կարելի է կառուցել, նախարարը հավանել է իր կարծիքը, որից հետո պայմանավորվել են, որ ինքը կհրավիրի համապատասխան մասնագետների, ովքեր կծանոթանան աշխատանքին, կներկայացնեն գնային առաջարկներ, որից հետո, ցանկության դեպքում, կկատարվեն աշխատանքները: Դրանից հետո մասնագետները նայել են, ձեռք է բերվել աշխատանքի ու գումարի շուրջ պայմանավորվածություն և նրանք դա կատարելուց հետո ստացել են իրենց գումարներն ամբողջությամբ: Գումարի չափը եղել է մոտավորապես 6 կամ 7 միլիոնի չափով, հստակ չի հիշում: Աշխատանքները կատարվել են բանավոր

պայմանավորվածությունների հիման վրա՝ կանխիկ եղանակով: Կոնկրետ իր ՍՊԸ-ն այդտեղ որևէ աշխատանք չի կատարել, աշխատանքները կատարվել են իր հրավիրած մասնագետների կողմից: Վկայակոչելով Աշոտ Գրիգորյանին՝ նշել է, որ շինությունը կառուցվել է «Բաղրամյան շինի» Գագիկի կողմից, իսկ մնացած աշխատանքները կատարում է Գրիգոր Բարսեղյանը՝ «Սիտտա Գրուպ» ՍՊԸ-ի միջոցով: Արթուր և Դավիթ Մարտիկի Առաքելյաններին տեսել է այդ ամառանոցի տարածքում՝ պահակակետի մոտ, ովքեր հսկողություն են իրականացրել տարածքում: Կոնկրետ իր և Աշոտ Գրիգորյանի միջև մինչև իր կողմից այդ տարածք այցելելը եղել է հետևյալ խոսակցությունը. Աշոտ Գրիգորյանն իրեն հայտնել է, որ Սևանա լճի ափին Սեյրան Օհանյանն ունի ամառանոց, որտեղ որոշ շինարարական աշխատանքներ պետք է կատարվեն, խնդրել է, որ ինքը գնա այնտեղ և խորհուրդներ տա, ինքն էլ համաձայնել է:

8. Վկա Գագիկ Հայրապետյանի ցուցմունքով այն մասին, որ 2015 թվականի գարնանը հանդիպել է իր ծանոթ Գրիգոր Բարսեղյանի հետ, ով իրեն առաջարկել է կատարել Գեղարքունիքի մարզի Դրախտիկ գյուղի մոտ գտնվող՝ ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանին պատկանող ամառանոցի լողավազանի շինարարական աշխատանքները: Քանի որ այդ ժամանակ ինքը գործ չի ունեցել, համաձայնել է, որից հետո պայմանավորվածություն է ձեռք բերվել, որ ինքը բանվորներ կբերի ու կսկսեն շինաշխատանքները, իսկ շինանյութը նրանք պետք է ապահովեին: Աշխատանքների կատարման համար գումարի չափ չեն խոսել, քանի որ պետք է վերջում հաշվեին՝ ըստ փաստացի կատարված աշխատանքների: 2015 թվականի գարնանն ինքը գնացել է այդ ամառանոցի տարածք, որտեղ Գրիգորը և ՍՊԸ-ի տնօրեն Աշոտը Փոքր Վեդիից 4 հոգի սվաղ անող էին բերել: Ամառանոցն եղել է պարսպապատ, որում առկա էին երեք շինություններ՝ առանձնատունը, լողավազանը՝ իր շինությունով և ևս մեկ օժանդակ կառույց: Իրենք կոնկրետ աշխատել են լողավազանի երկհարկանի շինության վրա, որն ունեցել է նաև նկուղ: Երբ ինքը գնացել է այդ տարածք, այդտեղ գործ անողներ չեն եղել: Ինքը նշված բանվորների հետ կատարել է այդ շենքի պատերի սվաղը և դրանք երեսպատել է բազալտե սալիկներով: Այդ ընթացքում ինքը Երևանից բերել է ևս երկու բանվորի, որոնք շարել են շենքի ներսի պատերը, կատարել են շինության հատակի կառուցման աշխատանքները, դրսում սարքել են շինության մուտքի հարթակը: Բացի այդ, ինքը այդ տարածք է տարել ևս մեկ բանվորի, ով տարածքի բնակիչների հետ կառուցել է

2-րդ հարկի աստիճանները: Բերել է նաև երկու հոգու, ովքեր շինության ներսի պատերն են սվաղել՝ ցեմենտ-ավազով և գաջով: Բացի այդ, կատարել է ամբողջ շենքի հատակների սալիկապատման աշխատանքները: Լրացրել է լողավազանի մետաղական ծածկը, տեղադրել է նաև ամառանոցի դռներն ու պատուհանները, այդ թվում նաև մուտքի դուռը, որի ընթացքում իրենք սվաղել են դռան կողքերը: Նաև հրավիրել է երեք էլեկտրիկների, որոնք ճանապարհի մոտից մալուխով բերել են հոսանք և կատարել են բոլոր էլեկտրատեխնիկական աշխատանքները: Արդեն 2015 թվականի գարնան վերջերին կամ ամռան սկզբներին տարածք են գնացել Համլետ Ծառուկյանը և այլ աշխատողներ, ովքեր կատարել են ամառանոցի տարածքի ասֆալտապատման և բարեկարգման աշխատանքները: Աշխատանքներ կատարող ամեն մի խումբ ունեցել է իր ղեկավարը: Հիշում է, որ Գրիգոր Բարսեղյանը «Նոր տուն» խանութից բերել է ամբողջ շինության ջեռուցման համակարգը, որն էլ այդ ընկերության մասնագետները տեղադրել են: Իր կողմից կատարված՝ վերը նշված աշխատանքների համար ամբողջ շինանյութը բերել են Գրիգորը և նրա աշխատող Աշոտը: Այդ ամառանոցում ինքն իր խմբով աշխատել է 2015 թվականի ապրիլ ամսվա վերջերից սկսած՝ շուրջ 5 ամիս, որի ընթացքում իրեն ու իր բանվորներին և աշխատողներին Գրիգորն ընդհանուր տվել է մոտ 10 միլիոն ՀՀ դրամ, սակայն թե նա որքան էր ծախսել նյութերի համար, չի կարող ասել: Աշխատանքների կատարման ընթացքում ամառանոցի տարածք պարբերաբար այցելել են Սեյրան Օհանյանը, ՀՀ ՊՆ կապշին վարչության պետ Աշոտ Գրիգորյանը, Գրիգոր Բարսեղյանը, ովքեր նայել են աշխատանքները, որոնց ընթացքում Սեյրան Օհանյանը ցուցումներ է տվել այդ երկուսին՝ ընթացիկ աշխատանքների հետ կապված: Նրանք այդտեղ եկել են շաբաթական մեկ անգամ, իսկ վերջին օրերին՝ ավելի հաճախ: Ինքն ամեն ամսվա վերջում Գրիգորի և նրա աշխատող Աշոտի հետ կատարել են հաշվարկներ, որոնք կազմել են տարբեր թղթերի վրա: Գործի վերջում, նաև Գրիգորի խնդրանքով, կազմել է կատարված բոլոր աշխատանքների հաշվարկ, որը Գրիգորի հետ տարել են Աշոտ Գրիգորյանի մոտ՝ ՀՀ ՊՆ-ի նրա աշխատասենյակ: Աշոտ Գրիգորյանին հայտնել է իրենց կատարած աշխատանքների վերաբերյալ, գնի, ինչպես նաև Գրիգորի կողմից իրեն կատարած վճարման չափի մասին, արդյունքում պարզվել է, որ իրենց պարտք են մնացել 3.000.000 ՀՀ դրամ, որն էլ տեղում իրեն վճարել է Աշոտ Գրիգորյանը:

Գրիգոր Բարսեղյանն իրեն հայտնել է, որ այդ տարածքում կատարված

շինաշխատանքների դիմաց իրեն վճարումներ չեն կատարվել:

9. Վկա Արամ Եգանյանի ցուցմունքներով այն մասին, որ ՀՀ պաշտպանության նախկին նախարար Սեյրան Օհանյանին ճանաչում է դեռևս Արցախյան առաջին պատերազմի տարիներից: Միմյանց հետ ունեցել են ընկերական փոխհարաբերություններ: Գեղարքունիքի մարզի ներկայիս Դրախտիկ բնակավայրի վարչական տարածքում՝ Սևանա լճի ափին՝ Դրախտիկ համայնքի 1-ին փողոց 59/1 հասցեում, դեռևս 2002 թվականից ինքն ունի հողատարածք, որը ձեռք է բերել «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի հետ կնքված վարձակալական պայմանագրի հիման վրա և օգտագործում է որպես ամառանոց: Նշված ամառանոցի հարևանությամբ էլ գտնվում է ՀՀ պաշտպանության նախկին նախարար Սեյրան Օհանյանին պատկանող ամառանոցը, որն ինքը տեղյակ չէ, թե կոնկրետ ինչ հանգամանքներում է Սեյրան Օհանյանը ձեռք բերել, ում անունով է այն գրանցված, սակայն դա փաստացի նրան է պատկանում: Այդ տարածքում Սեյրան Օհանյանն իրեն պատկանող ամառանոցը սկսել է կառուցել դեռևս 2010 թվականից և շինարարական աշխատանքները տևել են մինչև 2018 թվականի ամառը: Նշված տարածքում կատարված շինարարական աշխատանքների ընթացքում տեսել է, որ այդ աշխատանքները կատարել, դրանց նկատմամբ հսկողություն է իրականացրել Ճամբարակ քաղաքի բնակիչ, ներկայիս հանգուցյալ, Սեյրան Օհանյանի հետ մտերիմ Աղասի Հարությունյանը: Բացի վերջինից, այդ տարածքում շինաշխատանքներ կատարելիս տեսել է նաև Երևան քաղաքից ժամանած տարբեր շինարարների: Ինքը տեղյակ չէ, թե այդ ամառանոցում առկա շինություններն ինչ ֆինանսական միջոցներով է Սեյրան Օհանյանը կառուցել: Ճամբարակ քաղաքի բնակիչ Դավիթ Առաքելյանը, Սեյրան Օհանյանի հետ գտնվելով մոտ փոխհարաբերությունների մեջ, ամառանոցի կառուցման հենց սկզբից, Օհանյանի հանձնարարությամբ, հսկողություն է իրականացրել այդ տարածքում, սակայն դրա դիմաց վարձատրվել է, թե՞ ոչ, տեղյակ չէ: Բենիամին Ղալեչյանը հանդիսանում է Դավիթ Առաքելյանի մորաքրոջ որդին, ում հետ մեկ անգամ է հանդիպել նշված ամառանոցի մուտքի մոտ: Սեյրան Օհանյանին պատկանող ամառանոցը վարձակալական հիմունքներով «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ից վերցված է հենց Բենիամին Ղալեչյանի անունով, իսկ թե ինչու է նրա անունով այն ձևակերպված, տեղյակ չէ: Ճիշտ է, Բենիամինի անունով է այն գրանցված փաստաթղթերով, սակայն ինչպես ինքը, այնպես էլ տարածաշրջանում բոլորը գիտեն, թե դա իրականում ում ամառանոցն է:

Կոնկրետ տարեթվերով ինքը ստույգ տվյալներ ըստ ժամանակահատվածի և օրերի չի կարող ասել, սակայն ամառանոցը փաստացի կառուցվելուց հետո, կարելի է ասել, 2016-2017 թվականներից հետո, Սեյրան Օհանյանը կամ նրա ընտանիքի անդամներն այդ ամառանոց այցելել են, սակայն որքան ժամանակով, չի կարող ասել: Այցելությունները եղել են հիմնականում ամռան ամիսներին, սակայն կոնկրետ ով, քանի անգամ է եկել, քանի օր է մնացել, այդպիսի տեղեկությունների չի տիրապետում, քանի որ ինքն անձամբ իր ամառանոցում այնպես չէ, որ ամեն օր լինում է: Ինչ վերաբերում է, թե բացի Սեյրան Օհանյանի ընտանիքի անդամներից, այլ ովքեր են այցելել ամառանոցի տարածք, այդ կապակցությամբ հայտնում է, որ տեղյակ չէ և ստույգ ոչինչ ասել չի կարող, բայց այն, որ այցելություններ եղել են, դա փաստ է:

10. Աշոտ Գրիգորյանի՝ որպես վկա և մեղադրյալ տված ցուցմունքներով այն մասին, որ 22.04.2005-03.11.2008 թվականներին զբաղեցրել է ՀՀ ՊՆ կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության զորանոցային ու բնակելի ֆոնդի շահագործման և զորքերի բնակավորման ծառայության պետի, 03.11.2008-25.10.2010 թվականներին՝ ՀՀ ՊՆ կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության պետի տեղակալի, իսկ 25.10.2010-13.07.2018 թվականներին զբաղեցրել է նույն վարչության պետի պաշտոնը: ՀՀ պաշտպանության նախկին նախարար Սեյրան Օհանյանին ճանաչում է երկար տարիներ, միմյանց հետ գտնվել են ծառայողական փոխհարաբերությունների մեջ, բացի այդ, նրա կողմից ՀՀ ՊՆ նախարարի պաշտոնը զբաղեցնելու ժամանակահատվածում, երբ ինքը զբաղեցրել է ՀՀ ՊՆ կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության պետի պաշտոնը, Սեյրան Օհանյանը եղել է իր անմիջական վերադասը: 2015-2016 թվականներին, երբ ինքը զբաղեցրել է ՀՀ ՊՆ կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության պետի պաշտոնը, իսկ Ս.Օհանյանը հանդիսացել է ՀՀ ՊՆ նախարարը, ծառայության բերումով միասին այցելել են Գեղարքունիքի մարզի զորամասերից մեկը, իսկ երբ շարժվել են դեպի Երևան ու հասել են Գեղարքունիքի մարզի Դրախտիկ գյուղի վարչական տարածք, ճանապարհին Օհանյանը հայտնել է, որ տարածքում՝ Սևանա լճի ափին, մի ամառանոցում է իր հանգիստը կազմակերպում՝ չմանրամասնելով, թե դա ում է պատկանում, իսկ ինքը, ծառայողական ենթակայությունից ելնելով, իրեն իրավունք չի վերապահել ավելորդ հարցեր տալ: Օհանյանի առաջարկով իրենք երկուսով մտել են տվյալ

ամառանոց, միասին ճաշել, ապա շրջել են տարածքով, որի ժամանակ Օհանյանը հայտնել է, որ ցանկանում է այդ ամառանոցում որոշակի շինարարական աշխատանքներ իրականացնել՝ լիարժեք հանգիստն ապահովելու համար, մասնավորապես՝ կառուցել լողավազան և շոգեբաղնիք: Սեյրան Օհանյանը, տեղյակ լինելով, որ ինքը մասնագիտությամբ շինարար է, խնդրել է օգնել իրեն համապատասխան մասնագետների հարցում՝ ասելով, որ բոլոր ֆինանսական հարցերը կլուծի: Օհանյանը խնդրել է նաև շաբաթվա ընթացքում, հարկ եղած դեպքում նաև ոչ աշխատանքային օրերի, իր հետ գալ այնտեղ՝ կատարվող աշխատանքներին հետևելու: Քանի որ Օհանյանը որևէ անօրինական բան չէր խնդրում, որևէ անօրինական պահանջ չէր ներկայացնում, ելնելով իրենց ունեցած փոխհարաբերություններից, ինքը համաձայնել է, որից հետո սկսել է մասնագետներ փնտրել, ապա այդ աշխատանքների իրականացման համար դիմել է «Բաղրամյանշին» ՍՊԸ-ի տնօրեն Գագիկ Վարդանյանին և «Աշխատանք» ՍՊԸ-ի տնօրեն Համլետ Ծառուկյանին՝ հայտնելով, որ այդ տարածքում Սեյրան Օհանյանն ամառանոց ունի և ցանկանում է այդտեղ շինարարական աշխատանքներ կատարել: Վերջիններիս հետ ձեռք են բերվել համապատասխան պայմանավորվածություններ, որից հետո միասին գնացել են այդ տարածք՝ տեղում աշխատանքներին ծանոթանալու նպատակով, իսկ այդ ընթացքում այնտեղ հանդիպել են նաև Օհանյանին: Ինքը նրանց հավաստիացրել է, որ Սեյրան Օհանյանը բոլոր ծախսերը կհոգա, որից հետո սկսվել են շինարարական աշխատանքները, որոնց ավարտից հետո Օհանյանը կատարել է բոլոր վճարումները: Ինքը տեղեկություններ չունի, թե այդ հողատարածքը, որի վրա Օհանյանը շինություններ է կառուցել իր հանգստի համար, ինչ կարգով է ձեռք բերվել, ում կողմից և ինչ փաստաթղթերի հիման վրա: Ինչպես բոլորը, ինքը ևս լսել է, որ ամառանոցն իրականում պատկանում է Սեյրան Օհանյանին, սակայն այլ անձի անվամբ է գրանցված:

Ինչ վերաբերում է Գրիգոր Բարսեղյանին, ապա ճանաչում է նրան, վերջինս հանդիսացել է ՀՀ ՊՆ կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության արտադրատեխնիկական բաժնի պետը, ով ծառայել է իր ենթակայության ներքո, քանի որ ինքն է հանդիսացել այդ վարչության պետը: Լևոն Բարսեղյանը Գրիգորի հայրն է, իսկ Գարեգին Բարսեղյանը՝ Գրիգորի եղբայրը: Վերջիններիս ևս ճանաչել է, քանի որ Լևոն Բարսեղյանը մասնագիտությամբ շինարար է, նա ՀՀ ՊՆ կարիքների համար երկար տարիներ աշխատել է կապալառու կազմակերպությունում: Ըստ իր տեղեկության՝

«Սիտտա Գրուպ»-ի տնօրենը եղել է Գրիգոր Բարսեղյանի կնոջ հայրը, անունը չի հիշում, իսկ թե նրանք ինչ կապ ունեն այդ կազմակերպության հետ, չի կարող ասել: Նշված ընկերությունը ՀՀ ՊՆ-ի հետ առնչվել է տարբեր շինարարական աշխատանքներ իրականացնելիս՝ որպես կապալառու ընկերություն մասնակցել է ՊՆ-ի կողմից կազմակերպված մրցույթներին և խորհրդակցություններին:

Սեյրան Օհանյանին պատկանող նշված ամառանոցի տարածք հերթական անգամ այցելության ժամանակ գնացել է Գրիգոր Բարսեղյանի հետ՝ նրա ավտոմեքենայով, որտեղ հանդիպել են Սեյրան Օհանյանին: Միասին շրջայց են կատարել, իրենց կողմից համապատասխան մասնագիտական խորհրդատվություն է տրվել աշխատանքների հաջորդականության, տեխնիկան գործընթացների, ինչպես նաև տարածքի բարեկարգման հետ կապված: Հյուրասիրությունից հետո իրենք վերադարձել են Երևան: Հաջորդ այցի ժամանակ տեղեկացել է, որ Գրիգոր Բարսեղյանի ուղարկած մասնագետները սալիկապատման և բարեկարգման աշխատանքներ են իրականացնում, սակայն ինքն անձամբ Գրիգորին չի դիմել այդ տարածքում շինարարական աշխատանքներ կատարելու համար: Տվյալ ամառանոցում կատարված աշխատանքների հետ կապված ինքը Լևոն և Գրիգոր Բարսեղյաններին որևէ գումար պարտք չի, որևէ խոսակցություն իրեն, այսպես կոչված, «ատկատ» տալու վերաբերյալ չի եղել:

Ինչ վերաբերում է տարածքում առկա շենք-շինություններին, ապա 2015 թվականի ընթացքում դրանք արդեն իսկ առկա են եղել:

11. **Վկա Սուլիկո Շուշանյանի ցուցմունքներով** այն մասին, որ 1996 թվականից մինչև 2017 թվականի նոյեմբերի 5-ն ընկած ժամանակահատվածում զբաղեցրել է Գեղարքունիքի մարզի նախկին Շորժա համայնքի ղեկավարի պաշտոնը, իսկ դրանից հետո՝ մինչև 2022 թվականի հոկտեմբերի 10-ը, զբաղեցրել է Գեղարքունիքի մարզի Շողակաթ խոշորացված համայնքի ղեկավարի պաշտոնը: Ներկայումս զբաղեցնում է Ճամբարակ խոշորացված համայնքի ղեկավարի խորհրդականի պաշտոնը: Սեյրան Օհանյանին ճանաչում է որպես ՀՀ պաշտպանության նախկին նախարարի, այլ որևէ փոխհարաբերություններ նրա հետ չունի և չի ունեցել:

Ինչ վերաբերում է Գեղարքունիքի մարզի Դրախտիկ բնակավայրի վարչական տարածքում՝ «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի սպասարկման տարածքում՝ Սևանա լճի ափին գտնվող, Սեյրան Օհանյանին պատկանող ամառանոցին, ապա ինքը՝ որպես Շորժա

բնակավայրի բնակիչ, ինչպես նաև այդ տարածքների երկար տարիների համայնքի ղեկավարի պաշտոնը զբաղեցրած անձ, տեղյակ է, որ այն պատկանում է Սեյրան Օհանյանին, սակայն կոնկրետ ինչ հանգամանքներում է նա այդ տարածքը ձեռք բերել, կոնկրետ երբ, տեղյակ չէ, քանի որ Սևանա լճի ափին գտնվող տարածքները գտնվում են «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի սպասարկման տարածքում և դրանց հատկացումը միայն ՊՈԱԿ-ի իրավասությունների մեջ է մտել: Այդ տարածքում առկա շենք-շինությունների կառուցումը սկսվել է դեռևս 2010 թվականից և ավարտվել մոտավորապես 2015-2016 թվականներին, հենց այդ տարիներից էլ խոսակցությունները տարածքում սկսել են շրջանառվել, որ ամառանոցը կառուցվում է Սեյրան Օհանյանի համար և նրան է պատկանում: Կոնկրետ ինքը երբևէ այդ ամառանոցի տարածք մուտք չի գործել, Սեյրան Օհանյանի հետ ամառանոցի կամ դրանում կառուցված շենք-շինությունների հետ կապված որևէ հարցով չի առնչվել, ավելին, որևէ տեղեկություններ չունի այն ձեռք բերելու և մյուս մանրամասների մասին: Մինչ օրս էլ, բոլորն էլ տեղյակ են, որ նշված ամառանոցը պատկանում է Սեյրան Օհանյանին և նրա ընտանիքի անդամներին, օգտագործվում է նրանց կողմից:

Ի պատասխան հարցին առ այն, որ քրեական վարույթով տվյալներ են ձեռք բերվել այն մասին, որ նշված հասցեում գտնվող, պետական սեփականություն հանդիսացող հողատարածքը վարձակալության պայմանագրով ձևականորեն գրանցված է Բենիամին Ղալեչյան տվյալներով անձի անվամբ, սակայն փաստացի այն պատկանում է Սեյրան Օհանյանին, պատասխանել է, որ Բենիամին Ղալեչյանը ծնունդով Գեղարքունիքի մարզի նախկին Արծվաշեն համայնքի բնակիչ է, ի պաշտոնե տեղյակ է, որ ՀՀ «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տարածքում առկա, Գեղարքունիքի մարզի Դրախտիկ համայնքի 1-ին փողոցի 71 հասցեում գտնվող 10526 քմ հողատարածքը վարձակալությամբ գրանցված է Բենիամինի անվամբ, սակայն կոնկրետ նա ինչ փոխհարաբերություններ ունի Սեյրան Օհանյանի հետ և ինչու է վերջինիս պատկանող ամառանոցի տարածքը գրանցված Բենիամինի անվամբ, ինքը չգիտի և ոչինչ այդ կապակցությամբ չի կարող ասել: Ամառանոցը կառուցվելուց հետո մինչ օրս այդ ամառանոց Սեյրան Օհանյանը կամ նրա ընտանիքի անդամներն ինչ հաճախականությամբ են այցելել, որքան ժամանակով են մնացել այդտեղ և ընդհանրապես բացի նրանցից, այդ ամառանոց ովքեր են այցելել, տեղյակ չէ:

12. **Վկա Միեր Կիրակոսյանի ցուցմունքներով** այն մասին, որ աշխատում է «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ում՝ որպես Արտանիշ մասնաճյուղի տնօրեն: Նշված ՊՈԱԿ-ում աշխատում է դեռևս 1995 թվականից, զբաղեցրել է տարբեր պաշտոններ, իսկ ներկայիս պաշտոնը զբաղեցնում է մոտավորապես 8-ից ավելի տարի: Արտանիշ մասնաճյուղի սահմանների մեջ են մտնում Սևանա լճի ջրային տարածքը՝ սկսած Գեղարքունիքի մարզի Շողակաթ խոշորացված համայնքի Ծափաթաղ բնակավայրից մինչև Դրախտիկ բնակավայրից մոտավորապես 3-4 կմ դեպի «Սևան» խոշորացված համայնքի Ծովագյուղ բնակավայրի ուղղությամբ: ՀՀ պաշտպանության նախկին նախարար Սեյրան Օհանյանին ինքը անձնապես չի ճանաչում, նրա հետ երբևէ որևէ փոխհարաբերություն չի ունեցել: «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տարածքի, մասնավորապես՝ իր ղեկավարած Արտանիշ մասնաճյուղի տարածքում գտնվող Դրախտիկ համայնքի 1-ին փողոցի 71 հասցեում գտնվող հողատարածքի վրա Սեյրան Օհանյանին պատկանող շինությունները կառուցվել են 2010-2015 թվականների ընթացքում, կոնկրետ ժամանակահատվածը չի հիշում: Այդ ժամանակ Սեյրան Օհանյանը զբաղեցրել է պաշտպանության նախարարի պաշտոնը: Այն, որ այդ ամառանոցը կառուցվել է Սեյրան Օհանյանի համար և նրան է պատկանել, դա բոլորն էլ իմացել են, քանի որ հնարավոր չէր այդ ծավալի շինարարություն այդտեղ իրականացվեր, դա պատկաներ Սեյրան Օհանյանին և դրա մասին ոչ ոք չիմանար: Նշված ամառանոցը մինչև օրս էլ, բոլորն էլ տեղյակ են, որ պատկանում է Սեյրան Օհանյանին և նրա ընտանիքի անդամներին, օգտագործվում է նրանց կողմից, թեև ինքը լսել է, որ այն գրանցված է ոչ թե Սեյրան Օհանյանի, այլ նրա հետ մտերիմ փոխհարաբերությունների մեջ գտնվող ինչ-որ Բենիամին Ղալեչյան տվյալներով անձի անվամբ: Այդ ամառանոցը կառուցվելուց հետո լսել է, որ Սեյրան Օհանյանը և նրա ընտանիքի անդամները, ըստ անհրաժեշտության, հանգստի նպատակով այցելել են այդ ամառանոց, սակայն ինչ հաճախականությամբ, որքան ժամանակով, ինքը չի կարող ստույգ ոչինչ ասել: Տեղյակ չէ, թե տարածքի պահպանություն ով է իրականացրել, սակայն այդ ճանապարհով անցնել-դառնալուց մուտքի մոտ նկատել է ինչ-որ պահնորդների: «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տարածքի, մասնավորապես՝ իր ղեկավարած Արտանիշ մասնաճյուղի տարածքում գտնվող Դրախտիկ համայնքի 1-ին փողոցի 71 հասցեում գտնվող հողատարածքի և դրանում առկա շինությունների՝ ՀՀ ՊՆ նախկին նախարարի պաշտոնը զբաղեցրած Սեյրան Օհանյանին պատկանելու

վերաբերյալ ինքն արդեն իսկ մի քանի անգամ դեռևս 2019 և 2020 թվականների ընթացքում ՀՀ պետական եկամուտների կոմիտեի քննչական վարչությունում քննված քրեական գործով իր ցուցմունքը տվել է: Այդ գործի շրջանակներում էլ, իր նկատմամբ ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարք կատարելու համար քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշում է կայացվել՝ վաղեմության ժամկետների անցած լինելու հիմքով: Նշված որոշումն իր նկատմամբ կայացվել է այն բանի համար, որ ինքը՝ որպես Արտանիշ մասնաճյուղի տնօրեն, չարաշահել է իր պաշտոնեական դիրքը, այն է՝ տեղյակ լինելով, որ այդ տարածքում Սեյրան Օհանյանն ապօրինի շենք շինություններ է կառուցել, որևէ միջոց չի ձեռնարկել դրանց կառուցումը, հողի զավթումը կասեցնելու ուղղությամբ: Ներկայումս ևս պնդում է, որ ինքն այդ միջոցները չի ձեռնարկել՝ հաշվի առնելով Սեյրան Օհանյանի անձը, որևէ այլ շահագրգռվածություն չի ունեցել:

13. Վկա Վաչե Աղաջանյանի ցուցմունքներով այն մասին, որ 2009 թվականից աշխատում է «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ում, որպես անտառապահ՝ տեղամասային տեսուչ: Իրեն ամրակցված են եղել ՊՈԱԿ–ի «Արտանիշ» մասնաճյուղի 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ պահաբաժինները, որոնք գտնվել են Երևան–Իջևան ավտոճանապարհից դեպի Շորժա տանող ավտոճանապարհի՝ Գեղարքունիքի մարզի Դրախտիկ համայնքի տարածքում: Նշված մասնաճյուղի տնօրենն եղել է Միհեր Կիրակոսյանը: Դրախտիկ համայնքի վարչական տարածքում գտնվող՝ «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի՝ իրեն ամրակցված պահաբաժնում՝ Սևանա լճի ափին ինքը նկատել է, որ շինարարություն է իրականացվել և որ այդ շինարարական հրապարակը պարսպապատված է եղել: Շուրջ 3 կամ չորս տարի առաջ Դրախտիկ գյուղի տարբեր բնակիչներից իմացել է, որ այդ տարածքը և շինությունները պատկանում են ՀՀ պաշտպանության նախկին նախարար Սեյրան Օհանյանին, այդ պատճառով էլ չի մտել այդ տարածք և չի ստուգել փաստաթղթերը: Տեսնելով շինարարական աշխատանքների իրականացումը, մասնավորապես՝ որ այն իրականացվում է անմիջապես ճանապարհի եզրին և դա բոլորի համար նկատելի է եղել, մտածել է, որ եթե նման ծավալի շինություններ են կառուցվում, ուրեմն դա համաձայնեցված է եղել «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի ղեկավարության հետ, և ամեն ինչ օրինական է, թեև իրեն իր վերադասներից որևէ մեկը չի ասել, որ ինքը մտնի այդ տարածք ու ինչ–որ հանգամանքներ պարզի: Ինքը, տեղյակ լինելով, որ այդ

տարածքում շինարարություն է իրականացվել, ունենալով իրեն ամրակցված պահաբաժիններում ապօրինի հողազավթումների և ապօրինի շինարարությունների կասեցման պարտականություն, իր այդ պարտականությունները չի կատարել՝ հաշվի առնելով Սեյրան Օհանյանի անձը: Զղջացել է իր կատարած արարքի համար, քանի որ ինքն ի պաշտոնե պարտավոր է եղել այդ տարածքում դեռևս 2010-2011 թվականներից սկսված շինարարությունը կասեցնել, որը չի կատարել, այդ կապակցությամբ կայացվել է համապատասխան որոշում՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով:

14. Վկա Վալենտին Պետրոսյանի ցուցմունքներով այն մասին, որ 2010-2017 թվականներին զբաղեցրել է Գեղարքունիքի մարզի Դրախտիկ համայնքի ղեկավարի պաշտոնը: ՀՀ պաշտպանության նախկին նախարար Սեյրան Օհանյանին ճանաչում է որպես Արցախի պատերազմի մասնակից, ՀՀ ՊՆ երկարամյա ծառայող, նրա հետ անձնական որևէ փոխհարաբերություն չունի: Ծովագյուղ-Ճամբարակ ավտոճանապարհին հարակից հատվածում՝ Դրախտիկ գյուղի և «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տարածքում գտնվող Դրախտիկ համայնքի 1-ին փողոցի 71 հասցեի հողատարածքը և դրանում առկա շինությունները պատկանում են Սեյրան Օհանյանին: Այդտեղ գտնվում է նրա ամառանոցը, որի վերաբերյալ նշված բնակավայրի բոլոր բնակիչներն էլ տեղյակ են եղել: Ինքը, այդ տարեթվերին հանդիսանալով այդ համայնքի ղեկավարը, քաջատեղյակ եղել է, որ դա պատկանել է Սեյրան Օհանյանին և նրա կողմից է այն օգտագործվել: Նշված տարածքում առկա շինությունները կառուցվել են 2010-2015 թվականների ընթացքում, սակայն կոնկրետ ում կողմից և ինչ ֆինանսական միջոցներով, ինքը որևէ տեղեկություն չունի: Ինքը, որպես այդ համայնքի ղեկավար, տեղյակ լինելով, որ այդ հողամասի վրա Սեյրան Օհանյանը շինարարություն է կատարում, նրա անձն իմանալով, թույլ չի տվել իրեն մտնել այդ տարածք, չի փորձել խոչընդոտել այդ շինարարությանը՝ հաշվի առնելով Օհանյանի անցած ուղին: Այդ իսկ պատճառով, որպես համայնքի ղեկավար միջոցներ չի ձեռնարկել հողամասի ինքնակամ զավթումը կասեցնելու և այն կատարող անձին վարչական պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ, դրանից հետո էլ ինքն Օհանյանին պատկանող այդ հողատարածքում կառուցված ամառանոցի առկայության պայմաններում, կազմել և հանձնել է այդ հողատարածքի վերաբերյալ ճարտարապետահատակագծային առաջադրանք, որի հիման վրա էլ արդեն իսկ

կատարվել են համապատասխան գրանցումներ: Ինքը այդ հողատարածքը Սեյրան Օհանյանին տրամադրելու, այն փաստացի այլ անձի անվամբ որպես սեփականություն գրանցված լինելու, ինչպես նաև այդտեղ կատարված շինարարական աշխատանքների և դրանց կատարողների մասին չգիտի և չի կարող ասել: Կոնկրետ իրեն ով է դիմել այդ հողատարածքի վերաբերյալ ճարտարապետահատակագծային առաջադրանք կազմելու և հատկացնելու հարցով, չի հիշում, սակայն այն, որ Սեյրան Օհանյանն անձամբ չի դիմել, դա փաստ է: Բենիամին Ղալեչյան տվյալներով անձի չի կարողանում հիշել, սակայն կարծում է, որ եթե ճանաչեր, կհիշեր: Ինքը միայն տեղյակ է, որ այդ հասցեում գտնվող ամառանոցը պատկանում է Սեյրան Օհանյանին, սակայն կոնկրետ հողատարածքն ում անունով է վարձակալությամբ գրանցված, ով կամ ովքեր են փաստացի այն օգտագործել և օգտագործում, ինչ ժամկետներով, տեղյակ չէ և ավելին ասել չի կարող: ՀՀ պետական եկամուտների կոմիտեի քննչական վարչությունում քննված մեկ այլ քրեական գործով իր կողմից կեղծ ճարտարապետահատակագծային առաջադրանք տալու և շինությունների ինքնակամ կառուցման փաստը չարձանագրելու, շինարարությունը չկասեցնելու համար քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշում է կայացվել՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցած լինելու, ինչպես նաև համաներման ակտ ընդունված լինելու հիմքերով:

15. Վկա Դավիդ Առաքելյանի կողմից 2018 թվականի հուլիսի 18-ին տրված ցուցմունքով այն մասին, որ 5-6 տարի է հիմնականում բնակվում է Գեղարքունիքի մարզի Դրախտիկ համայնքի 1-ին փողոցի 71 հասցեում գտնվող ամառանոցում, որի սեփականատեր հանդիսանում է ՀՀ պաշտպանության նախկին նախարար Սեյրան Օհանյանը: Ինքը, մտերիմ հարաբերություններ ունենալով վերջինիս հետ, նրա իսկ խնդրանքով, անշահախնդիր բնակվում է ամառանոցում և զբաղվում է դրա պահպանության հարցերով: Ամառանոցի պահպանության և հսկողության հարցերը Սեյրան Օհանյանն անձամբ վստահել է միայն իրեն: Հայտնել է, որ որպես ամառանոցի միակ սեփականատեր ճանաչում է Սեյրան Օհանյանին և ամառանոցի հետ կապված հարցերով միշտ դիմում է վերջինիս: Բենիամին Ղալեչյանն իր մորաքրոջ որդին է, ով, իր տվյալներով, ամառանոցի հետ որևէ կապ չունի, վերջինս, մասնագիտությամբ սանտեխնիկ է, երբևէ ՀՀ ՊՆ-ում չի աշխատել և երբևէ չի այցելել նշված ամառանոց:

16. Վկա Բենիամին Ղալեչյանի ցուցմունքներով այն մասին, որ ՀՀ ԱԺ

պատգամավոր, ՀՀ պաշտպանության նախկին նախարար Սեյրան Օհանյանին ճանաչում է 2000-ական թվականներից, երբ Արցախի Հանրապետության Ստեփանակերտ քաղաքում գտնվող, Սեյրան Օհանյանին պատկանող բնակարանում կատարել է վերանորոգման աշխատանքներ: Այդ ժամանակ էլ միմյանց հետ ծանոթացել են և մինչև օրս գտնվում են լավ փոխհարաբերությունների մեջ, ազգակիցներ չեն: «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տարածքում առկա՝ Գեղարքունիքի մարզի Դրախտիկ համայնքի 1-ին փողոցի 71 հասցեում գտնվող 10526 քմ հողատարածքն ինքը վարձակալության և կառուցապատման իրավունքով ձեռք է բերել դեռևս 2016 թվականի ընթացքում: Հողատարածքը ձեռք է բերել հետևյալ հանգամանքներում. այդ ժամանակ իր մտերիմ, ԱՄՆ-ի քաղաքացի Հաբեթը ցանկություն է հայտնել «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տարածքում՝ Սևանա լճի ափամերձ հատվածներից որևէ մեկում, հողատարածք վարձակալել՝ ներդրումներ կատարելու նպատակով, այն է՝ կառուցել հանգստի գոտի, ուստի խնդրել է իրեն հետաքրքրվել ու ազատ տարածք գտնել: Ինքն այդ հարցով դիմել է «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ին, որտեղից իրեն առաջարկվել է այդ տարածքը, որից հետո ինքը օրենքով սահմանված կարգով նախագիծ է ներկայացրել: Դրանից հետո արդեն մասնակցել է հայտարարված մրցույթին և հաղթող ճանաչվել ու այդ հողատարածքը 25 տարի ժամկետով հատկացվել է իրեն՝ վարձակալության և կառուցապատման հիմունքներով: Բացի այդ, հաջորդիվ իր և ՊՈԱԿ-ի միջև պայմանագիր է կնքվել երկու տարվա ընթացքում այդ տարածքում 250.000.000 ՀՀ դրամի ներդրումներ կատարելու վերաբերյալ: Աճուրդին մասնակցել են երկու այլ անձինք ևս, որոնց ինքը չի ճանաչել, սակայն ինքն է փաստացի հաղթող ճանաչվել: Նշված պայմանագրերով ինքը, հանդիսանալով այդ հողատարածքի վարձակալ, ցանկացել է պայմանագրով սահմանված իր պարտավորությունները կատարել, սակայն 2017 թվականի վերջերին Հաբեթը մահացել է, իսկ ինքը, քանի որ չի ունեցել համապատասխան ֆինանսական միջոցներ, այդպես էլ նշված հանգստի գոտին չի կառուցել: Դրանից հետո մոտավորապես 3-4 տարի առաջ, ինքը փաստաբանի միջոցով դիմել է Գեղարքունիքի մարզի Շողակաթ խոշորացված համայնքի ղեկավարին՝ ցանկանալով շինթույլտվություն ստանալ այդ տարածքում շինարարություններ կատարելու համար, սակայն մերժվել է: Այդ հողատարածքն իր կողմից վարձակալությամբ վերցնելու ժամանակ ինքն այդ տարածք չի այցելել, ընդամենը փաստաթղթերի հիման վրա ծանոթացել է հողատարածքի գտնվելու

վայրին, իսկ հողատարածք այցելել է այն ժամանակ, երբ ՀՀ պետական եկամուտների կոմիտեում քրեական գործ է քննվել և այդ ժամանակ էլ տեղեկացել է, որ իր վարձակալած հողատարածքի վրա առկա են կառուցված շինություններ: Այդ շինություններն ում կողմից են կառուցվել, երբ և ինչ հանգամանքներում, տեղյակ չէ, ինչպես նաև որևէ տեղեկություն չունի, թե դա ում է պատկանում, ինքն էլ այդ շինություններից չի օգտվել: Կոնկրետ այդ շինությունների հետ Սեյրան Օհանյանն ի՞նչ առնչություն ունի, տեղյակ չի և ոչինչ ասել չի կարող այդ կապակցությամբ:

Բենիամին Ղալեչյանը լրացուցիչ հարցաքննությամբ հայտնել է, որ իրեն Հաբեթի հետ ծանոթացել է իր ընկեր, միկրոբանդակագործ Էդուարդ Ղազարյանը: Հաբեթը ժամանակին Երևանի Մարգարյան հիվանդանոցի բաժնետերերից է եղել, ով 2018 կամ 2019 թվականին մահացել է, իսկ Էդուարդ Ղազարյանը մահացել է 2020 թվականին: Ինքը և Հաբեթը չեն այցելել այդ տարածք, չեն հասցրել, քանի որ Հաբեթը մահացել է:

17. Վկա Էդգար Գրիգորյանի ցուցմունքներով այն մասին, որ մինչև 2015 թվականը գտնվել է ՌԴ-ում, այնտեղ արտագնա աշխատանք է կատարել, իսկ դրանից հետո, երբ վերադարձել է ՀՀ, մինչև օրս չի աշխատում: Խոշոր գումարներ ընդհանրապես չի ունեցել: ՌԴ-ում գտնվելու ընթացքում ամբողջ աշխատածով մեքենա է ձեռք բերել, հետո արդեն ՀՀ-ում գտնվելու ժամանակ մեքենան վաճառել է, ապա այդ գումարով մի որոշ ժամանակ գոյատևել է: ՀՀ-ում գտնվելու ժամանակ ինչ աշխատանք եղել է, կատարել է և հոգացել իր կարիքները: Ընտանիքի անդամները ևս որևէ մեծ ֆինանսական միջոցների չեն տիրապետել: «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տարածքում որևէ հողատարածք վարձակալության և կառուցապատման իրավունքով ձեռք բերելու վերաբերյալ ինքը որևէ հայտ չի ներկայացրել, որևէ հողատարածքի ձեռք բերման մրցույթի չի մասնակցել: Ինչ վերաբերում է այն հանգամանքին, թե ինքն իբրև 2016 թվականին «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տարածքում գտնվող՝ Գեղարքունիքի մարզի Դրախտիկ համայնքի 1-ին փողոցի 71 հասցեի 10526 քմ հողատարածքը վարձակալության և կառուցապատման իրավունքով ձեռք բերելու համար ներկայացրել է 40.000.000 ՀՀ դրամի չափով բիզնես ծրագիր, այդպիսի բան չի եղել, որովհետև եթե 40.000.000 ՀՀ դրամ ունենար, բնակարան կգներ և ոչ թե վարձով կբնակվեր: ՀՀ պաշտպանության նախկին նախարար Սեյրան Օհանյանին ճանաչում է, որպես նախարար, հիմա էլ՝ որպես ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր, բայց նրա և նրա ընտանիքի անդամների հետ որևէ առնչություն չունի:

2015 թվականից մինչ օրս շահագործում է 093-03-93-88 հեռախոսահամարը: Հարցին այն մասին, որ ինքը նշում է, թե տարածքի վարձակալության համար որևէ մրցույթի չի մասնակցել, որևէ ներդրումային ծրագիր չի ներկայացրել, մինչդեռ իր AM 0880911 անձնագրային տվյալներով նշված մրցույթին մասնակցելու վերաբերյալ փաստաթղթեր են կազմվել, ով կարող էր իր անձնագրային տվյալներով նման շինծու փաստաթղթեր կազմել, հայտնել է, որ դա իր անձնագրային տվյալներն են, բայց ներկայումս իր անձնագիրը փոխվել է՝ ժամկետը լրանալու հիմքով, իսկ ով է իր այդ հին անձնագրային տվյալներով նման գործողություններ կատարել՝ չգիտի:

Հարցին այն մասին, որ ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունից ՀՀ «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տարածքում գտնվող՝ Գեղարքունիքի մարզի Դրախտիկ համայնքի 1-ին փողոցի 71 հասցեի 10526 քմ հողատարածքը վարձակալության և կառուցապատման իրավունքով ձեռք բերելու վերաբերյալ անցկացված մրցույթի վերաբերյալ փաստաթղթերի առգրավմամբ և դրանց զննությամբ պարզվել է, որ առգրավված փաստաթղթերում առկա գրասենյակային թիվ 4 գրքի 5-րդ էջում առկա են գրառումներ այդ մրցույթին նրա և Բենիամին Ղալեչյանի վերաբերյալ, մասնավորապես, համաձայն այդ գրառումների՝ 06.12.2016 թվականին մրցույթի վերաբերյալ ինքը հայտ է ներկայացրել, իսկ արդեն 07.12.2016 թվականին ներկայացրել է մրցույթի վերաբերյալ համապատասխան ծրարը և այդ գրառումներից իր անվան դիմաց առկա է ստորագրություն որպես հայտ ներկայացնողի, հայտնել է, որ ինքը նման գործարքի, աճուրդի, մրցույթի չի մասնակցել, և չէր կարող մասնակցել, քանի որ չի ունեցել նման ֆինանսական հնարավորություն: Ուսումնասիրելով նշված գրառումներով գրասենյակային գրքի էջում իր անվան դիմաց առկա ստորագրությունը՝ հայտնել է, որ այն իր ստորագրությանը նման է, սակայն իր ստորագրությունը չէ, ինքը չի կատարել այդ ստորագրությունը և որտեղ է կատարվել այդ ստորագրությունը՝ չգիտի:

Այն հարցին, թե իր անունով և իր անձնագրային տվյալներով նշված մրցույթի մասնակցության համար և մրցույթի փաթեթի համար 2016 թվականի դեկտեմբերի 6-ին՝ ժամը 13:06-ին և 13:07-ին, «Արարատբանկ» ԲԲԸ-ի Նոր Նորքի մասնաճյուղում «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի համապատասխան հաշվին կատարվել են վճարումներ՝ համապատասխանաբար 5000 ՀՀ դրամ և 3000 ՀՀ դրամ գումարների չափերով, իսկ արդեն մրցույթի անցկացման օրը՝ 12.12.2016 թվականին՝ ժամը 10:49:41-ին,

«Արդշինբանկի» Նոր Նորք մասնաճյուղում մրցույթի համար ներկայացված հայտի նախավճարի 5 տոկոսի չափով կատարվել է 26.315 ՀՀ դրամի վճարում, ուսումնասիրելով այդ վճարման անդորրագրերը, հայտնել է, որ այդտեղ նշվածն իր տվյալներն են, իր հեռախոսահամարն է, բայց ինքը նման վճարումներ չի կատարել, իսկ իր փոխարեն ով է կատարել, չի կարող ասել: «Բենիամին Ղալեչյան» տվյալներով անձին չի ճանաչում և, ուսումնասիրելով նրա՝ անձնագիր ստանալու մասին ձև 1 դիմումում առկա լուսանկարը, չի կարողանում մտաբերել, որ նման անձի ճանաչում է: Ինչ վերաբերում է «Արթուր Առաքելյան» տվյալներով անձին, ապա, նրա լուսանկարը տեսնելով, հայտնում է, որ այդ անձին ճանաչում է «կյաժ» մականունով: Լուսանկարում պատկերված «կյաժ» մականվամբ Արթուր Առաքելյանին ճանաչում է 2015 թվականից: Նրա հետ ծանոթացել է իր եղբոր՝ Արթուր Գրիգորյանի միջոցով: Այդ ժամանակ երկուսն էլ աշխատում էին ՀՀ պաշտպանության նախարարությունում, եղբայրը եղել է նախարարի ընդունարանում հերթապահ սպա, իսկ Արթուր Առաքելյանի հետ ծանոթացել է իր եղբոր միջոցով՝ նա որպես պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի վարորդ է ներկայացել: Դրանից հետո, որպես եղբոր գործընկեր և մտերիմ, ճանաչել է Արթուրին, ունեցել հանդիպումներ և լավ մարդկային փոխհարաբերություններ:

Հարցին այն մասին, թե իրեն 091-77-22-10 և 098-00-00-04 բջջային հեռախոսահամարները ծանոթ են թե ոչ, եթե այո ով կամ ովքեր են դրանք շահագործել կամ շահագործում, պատասխանել է, որ առաջին հեռախոսահամարն իրեն անծանոթ համար է, իսկ երկրորդ՝ 098-00-00-04 հեռախոսահամարը ծանոթ է, դա շահագործել է «կյաժ» մականունով տղան:

Հարցաքննության ընթացքում վկային են ներկայացվել քրեական վարույթով պարզված փաստական տվյալներ այն մասին, որ իր վերոնշյալ բջջային հեռախոսահամարի վերծանումների զննությամբ պարզվել է, որ իր հեռախոսահամարից Բենիամին Ղալեչյանի՝ 091-77-22-10 հեռախոսահամարին ելքային հեռախոսազանգ կատարվել է ընդամենը մեկ անգամ, որը կատարվել է 12.12.2016 թվականին՝ ժամը 11:01:15-ին, հեռախոսազանգի տևողությունը կազմել է 0:36 վայրկյան, և հեռախոսազանգը կատարելու ժամանակահատվածում իր հեռախոսահամարը սպասարկվել է Երևան քաղաքի Ռուբինյանց 28 հասցեն սպասարկող թիվ 28305410031862 ալեհավաքի սպասարկման տիրույթում:

Նույն ժամանակահատվածում իր բջջային հեռախոսահամարին Բենիամին Ղալեչյանի 091-77-22-10 բջջային հեռախոսահամարից ստացվել են երկու մուտքային հեռախոսազանգեր՝ 09.12.2016 թվականին և 12.12.2016 թվականին, մասնավորապես առաջին մուտքային զանգը ստացվել է 09.12.2016 թվականին՝ ժամը 19:29:05-ին, տևողությունը եղել է 1 րոպե 56 վայրկյան, հեռախոսահամարը սպասարկվել է Երևան քաղաքի Մոլդովական 27 հասցեն սպասարկող 28305410130938 ալեհավաքի տիրույթում, իսկ երկրորդ մուտքային հեռախոսազանգը ստացվել է 12.12.2016 թվականին՝ ժամը 10:33:22-ին, տևողությունը եղել է 1 րոպե 6 վայրկյան: Հեռախոսահամարը սպասարկվել է Երևան քաղաքի Հանրապետության Հրապարակի Կառավարության շենքի տարածքը սպասարկող թիվ 28305410132603 ալեհավաքի սպասարկման տիրույթում:

2016 թվականի դեկտեմբերի 12-ին՝ ժամը 12:00-ին, Կառավարության 3-րդ շենքի 5-րդ հարկում տեղի է ունեցել Հայաստանի Հանրապետության սեփականություն հանդիսացող՝ Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքի Դրախտիկ բնակավայրի տարածքում գտնվող «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի նշված հողամասը վարձակալության և (կամ) կառուցապատման իրավունքով տրամադրելու նպատակով ստեղծված միջգերատեսչական մրցութային հանձնաժողովի նիստը:

Այդ օրը Է.Գրիգորյանի անունից «Արդշինբանկ» ՓԲԸ-ի Նոր Նորքի մասնաճյուղում ժամը 10:49:41-ին կատարվել է վճարում՝ 26.315 ՀՀ դրամի չափով «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի համապատասխան հաշվին նշված մրցույթի մասնակցության նախավճարի 5 տոկոսի չափով:

Վերոնշյալ փաստական տվյալների կապակցությամբ Է.Գրիգորյանը կրկին պնդել է, որ այդ մրցույթի վերաբերյալ որևէ տեղեկություններ չունի, Բենիամին Ղալեչյանին չի ճանաչել և ճանաչում, չի կարող ասել, թե ինչպես են այդ հեռախոսազանգերը կատարվել այդ օրերին, իր համարից զանգ գնացել, կամ զանգ ստացվել, իր համար դա անհասկանալի է, կրկին պնդել է, որ ինքը որևէ գործարքից տեղյակ չէ, չի մասնակցել որևէ մրցույթի, որևէ գումար չի վճարել:

Հաջորդիվ, հարցաքննության ընթացքում վկային են ներկայացվել փաստական տվյալներ առ այն, որ իր վերոնշյալ բջջային հեռախոսահամարի վերծանումների զննությամբ պարզվել է, որ իր հեռախոսահամարից 09.01.2016 թվականից մինչև 12.12.2016 թվականը ընկած ժամանակահատվածում թվով 13 ելքային հեռախոսազանգեր

են կատարվել Բենիամին Ղալեչյանի մորաքրոջ որդի, ՀՀ պաշտպանության նախկին նախարար Սեյրան Օհանյանի մտերիմ և ՊՆ ծառայող Արթուր Մարտիկի Առաքելյանի՝ 098-00-00-04 հեռախոսահամարին: Այդ հեռախոսազանգերի ուսումնասիրությամբ հատկանշական է այն փաստը, որ այդ ելքային հեռախոսազանգերից 07.12.2016 թվականի երկու հեռախոսազանգերը կատարվել են քրեական վարույթով հետաքրքրություն ներկայացնող մրցույթի մասնակցության հայտերը ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն ներկայացնելու օրվան հաջորդող օրը, ինչպես նաև փաթեթները՝ ծրարը, ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն ներկայացնելու օրը: Ինչ վերաբերում է դեկտեմբերի 12-ին կատարված ելքային զանգերին, ապա դրանք համապատասխանում են նրա անունից «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի համապատասխան հաշվին նշված մրցույթի մասնակցության նախավճարի 5 տոկոսի չափով վճարում կատարելու օրվան, այնուհետ նիստը տեղի ունենալու ժամանակահատվածին:

Բացի այդ, նրա մուտքային զանգերի զննմամբ պարզվել է, որ 03.01.2016 թվականից մինչև 06.12.2016 թվականն ընկած ժամանակահատվածում նրա հեռախոսահամարին ստացվել են 13 մուտքային հեռախոսազանգեր՝ Արթուր Մարտիկի Առաքելյանի՝ 098-00-00-04 հեռախոսահամարից: Հատկանշական է, որ այդ հեռախոսազանգերից Արթուր Առաքելյանի 098-00-00-04 բջջային հեռախոսահամարից 06.12.2016 թվականին ստացված երեք մուտքային հեռախոսազանգերը համապատասխանում են քրեական վարույթով հետաքրքրություն ներկայացնող հողամասի վերաբերյալ հայտարարված մրցույթի մասնակցության հայտերը ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն ներկայացնելու, նշված մրցույթի մասնակցության համար և մրցույթի փաթեթի համար «Արարատբանկ» ԲԲԸ-ի Նորքի մասնաճյուղում կատարված համապատասխանաբար 3000, 5000 ՀՀ դրամ գումարների վճարման օրվան:

Բացի այդ հատկանշական է նաև այն հանգամանքը, որ նույն օրը՝ 06.12.16 թվականին, նույն բանկի նույն մասնաճյուղում ընդամենը րոպեների տարբերությամբ՝ ժամը 13:05-ին և 13:06-ին Բենիամին Ղալեչյանի կողմից նույն մրցույթի մասնակցության համար և մրցույթի փաթեթի ներկայացման համար նույն չափի՝ 3000 և 5000 ՀՀ դրամի չափով գումարներ են վճարվել Արթուր Առաքելյանի կողմից:

Նշված փաստական տվյալների կապակցությամբ Է.Գրիգորյանը պնդել է, որ այդ մրցույթի վերաբերյալ որևէ տեղեկություններ չունի, Արթուր Առաքելյանի կամ որևէ այլ

անձի հորդորով ինքը ձևականորեն չի մասնակցել որևէ մրցույթի, չի կարող ասել, թե դրանք ինչ վճարումներ են և ով կարող էր իր փոխարեն դրանք կատարել: Ինքը որևէ վճարում չի կատարել: Արթուր Առաքելյանը կամ իր եղբայրը՝ Արթուր Գրիգորյանը այդ գործարքին նույնիսկ ձևականորեն մասնակցելու համար իրեն չեն դիմել: Արթուրի՝ «կյաժի» հետ միշտ էլ հեռախոսազանգեր եղել են, միմյանց հետ շփվել են մեքենա լվանալու հետ կապված, քանի որ իրենց տունը մոտ է պաշտպանության նախարարության շենքին, որով և պայմանավորված շփումը եղել է, իսկ թե ինչպես են համընկել զանգերը մրցույթի վճարումների և հայտերի ներկայացման օրերին, տեղյակ չէ:

18. Վկա Գագիկ Վարդանյանի ցուցմունքներով այն մասին, որ հանդիսանում է «Բաղրամյանշին» ԲԲ ընկերության գործադիր տնօրենը: 2010 թվականից զբաղվում է շինարարական աշխատանքներով: Պաշտպանության նախարարության համար կատարել է տարբեր շինարարական աշխատանքներ, հիմնականում կառուցել է բնակելի շենքեր: ՊՆ կարիքների համար շինարարական աշխատանքներ կատարելու հանգամանքով պայմանավորված ճանաչում է Սեյրան Օհանյանին՝ որպես պաշտպանության նախարար: ՊՆ կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության պետ Աշոտ Գրիգորյանին ևս ճանաչում է աշխատանքի բերումով, նրա հետ գտնվել է նորմալ աշխատանքային փոխհարաբերությունների մեջ: Գրիգոր Բարսեղյանին ճանաչում է որպես պաշտպանության նախարարության աշխատակից: Լևոն և Գարեգին Բարսեղյաններին չի ճանաչում:

Չի հիշում, թե երբ, Ա.Գրիգորյանն իրենից հետաքրքրվել է արդյոք կան վարպետներ շինարարական աշխատանքներ կատարելու համար: Ինքը փոխանցել է հեռախոսահամարներ, նրանք պայմանավորվել են, իսկ թե հետո ինչ են արել, տեղյակ չէ: Աշոտ Գրիգորյանն իրեն չի ասել, թե ում տարածքում է իրականացվելու շինարարությունը և որտեղ է այն գտնվում: Իրենց կազմակերպությունը «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տարածքում՝ Գեղարքունիքի մարզի Դրախտիկ համայնքի 1-ին փողոցի 71 հասցեում շինարարական՝ բետոնային, կարկասային աշխատանքներ չի կատարել, բնականաբար չեն եղել վճարումներ և պայմանագրային պարտականություններ: Սևանա լճի ափին գտնվող այդ տարածք այցելել է մեկ անգամ՝ Աշոտ Գրիգորյանին վարպետների հետ ծանոթացնելու համար: Ովքեր են եղել վարպետները, չի հիշում, քանի որ հաճախակի աշխատողները փոխվել են, բացի այդ, արդեն անցել է շուրջ 10 տարի: Այդ վարպետները

վարձատրությունն ինչպես են ստացել, ում միջոցով, չգիտի, քանի որ դրանից հետո որևէ առնչություն չի ունեցել ոչ մի առիթով: 2015 թվականի ամռանը, երբ այցելել է այդ ամառանոցի տարածք, ավարտուն տեսքի մեկ շինություն է տեսել, դրսից՝ ճանապարհի կողմից տարածքը պարսպապատված է եղել, իսկ ներսում ինչ շինություններ են եղել՝ չի հիշում:

19. Վկա Դավիթ Կարապետյանի ցուցմունքներով այն մասին, որ 2010 թվականից հանդիսանում է «Կարափուլս» ՍՊ ընկերության հիմնադիր տնօրենը: Կազմակերպությունը զբաղվում է լողավազանների, շոգեբաղնիքների, սաունաների սարքավորումների ներմուծմամբ, մեծածախ վաճառքով և մոնտաժային աշխատանքներով: Ճանաչում է Սեյրան Օհանյանին, իսկ նրա ընտանիքի անդամներին չի ճանաչում: Սեյրան Օհանյանի հետ ծանոթացել է պաշտպանության նախարարությունում սաունայի, լողավազանի և շոգեբաղնիքի կառուցման աշխատանքներն իրականացնելու ժամանակ: Նրա հետ առնչվել է նաև, Դիլիջանում՝ «Լեռնային Հայաստան» առողջարանում ՊՆ-ի համար սաունա կառուցելու ընթացքում:

«Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տարածքում՝ Գեղարքունիքի մարզի Դրախտիկ համայնքի 1-ին փողոցի 71 հասցեում Սեյրան Օհանյանի կողմից շենք-շինություններ կառուցելուն անմիջական առնչություն չի ունեցել, ուղղակի իմացել է, որ իր ընկերությունից դուրս գրված սարքավորումները և նյութերը տեղափոխվել են նշված տարածք՝ լողավազան, սաունա և շոգեբաղնիք կառուցելու համար:

Իրեն տրվել է լողավազանի, շոգեբաղնիքի և սաունայի ծավալները, որի հիման վրա էլ համապատասխան սարքավորումներն ընտրել է ինքը: Գրիգոր Բարսեղյանը մարդկանց և մեքենա է ուղարկել իր ընկերության պահեստներ, ապրանքը բարձվել և ուղարկվել է անհրաժեշտ հասցե: Հաշիվ ապրանքագրերում որպես առաքման հասցե նշված է եղել Սովետաշենի զորամասը: Ապրանքները տրամադրելու համար իրեն դիմել է Գրիգոր Բարսեղյանը, այնուհետև իմացել է, որ լողավազանը, սաունան և շոգեբաղնիքը կառուցվելու է Դրախտիկ գյուղի՝ Սևանա լճին ափամերձ հատվածում: Իրենից խնդրել են տալ խորհուրդ և տրամադրել աշխատանքներ իրականացնողների, որն էլ ինքը կատարել է: Գրիգոր Բարսեղյանը հայտնել է, որ ամառանոցը պատկանում է ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանին: Գրիգոր Բարսեղյանն է անձամբ իրեն դիմել, որպեսզի խորհրդատվություն տրամադրի և անհրաժեշտ մասնագետներ հատկացնի այդ

աշխատանքների կատարման համար: Ընդհանուր մոտավորապես 14.000.000 ՀՀ դրամի գումարի չափով սարք սարքավորումներ է տրամադրել Գրիգոր Բարսեղյանին, որի համար վերջինս մոտավորապես 5.000.000 կամ 5.500.000 ՀՀ դրամ որպես կանխավճար գումար է փոխանցել, իսկ մնացած գումարը պետք է փոխանցվեր մեկ ամսվա ընթացքում, որն այդպես էլ չի փոխանցվել: Հետագայում դիմել է դատարան, և այդ ընթացքում պարզվել է, որ Գրիգոր Բարսեղյանը սնանկության գործընթացի մեջ է և այդպես էլ որևէ գումար չի ստացել:

Գումարների չվճարումը Գրիգոր Բարսեղյանը մեկնաբանել է նրանով, որ պաշտպանության նախարարությունն իրեն գումարներ չի վճարել նյութերի մատակարարման համար:

«Սիտտա գրուպ» ընկերության կողմից նշված ամառանոցի լողավազանի, շոգեբաղնիքի և սաունայի կառուցման համար պարտք մնացած գումարները վճարելու պահանջով Սեյրան Օհանյանին չի դիմել: Մեկ անգամ դիմել է Աշոտ Գրիգորյանին, ով հայտնել է, որ նրանք վճարել են Գրիգոր Բարսեղյանին, որից հետո հաջորդ քայլը եղել է դատարան դիմելը: Աշոտ Գրիգորյանին դիմել է, քանի որ ենթադրել է, որ կապալառու ընկերությունը ՊՆ-ի անունից է իրեն դիմել:

Տեղյակ չէ, թե իր կողմից նշված տարածք ուղարկված մասնագետները կոնկրետ որքան են վարձատրվել: Վերոգրյալ տարածք է այցելել երկու կամ երեք անգամ՝ աշխատակիցներին մասնագիտական խորհրդատվություն տալու համար: Այցելությունների ժամանակ տեսել է Գրիգոր Բարսեղյանին, մեկ կամ երկու անգամ էլ՝ Սեյրան Օհանյանին: Փաստացի այդ ժամանակ աշխատանքները կատարվել է հանգստի գոտու լողավազանի, շոգեբաղնիքի, սաունայի տարածքում: Այդտեղ առկա տունը և պահակատունն արդեն իսկ կառուցված են եղել: Պատրաստ է եղել նաև լողավազանի տարածքի կարկասը և պատերը՝ առանց հարդարման: Տարածքը եղել է պարսպապատված:

20. Վկա Վազգեն Նահապետյանի ցուցմունքով այն մասին, որ 2012-2013 թվականների ընթացքում ծառայել է ՀՀ պաշտպանության նախարարության 20440 զորամասի հատուկ նշանակության դասակում որպես ռազմական ոստիկան: Նշված զորամասը գտնվել է Երևան քաղաքում՝ Մալաթիա համայնքում: Իր ծառայությունն իրականացրել է Սեյրան Օհանյանին պատկանող ամառանոցի տարածքում, որը գտնվել է

Դրախտիկ համայնքում: Այդ տարածքը Սեյրան Օհանյանին պատկանելու մասին իմացել է իր անմիջական հրամանատարից, քանի որ նրա հանձնարարությամբ է այնտեղ ծառայություն իրականացրել: Հիշյալ ամառանոցի տարածքում, ծառայել է շուրջօրյա՝ «երկու օր աշխատանքի, երկու օր հանգիստ» գրաֆիկով: Ամառանոցի տարածքում ծառայություն են իրականացրել նաև ռազմական ոստիկանության այլ ծառայողներ:

Այդ տարածքում ծառայություն՝ այսպես կոչված պահպանություն կատարելու համար որպես ՊՆ ռազմական ոստիկանության ծառայողներ ստացել են աշխատավարձ, որը փոխանցվել է քարտային հաշվին՝ մոտավորապես 98.000 ՀՀ դրամ: ՀՀ պաշտպանության նախկին նախարար Սեյրան Օհանյանին պատկանող այդ տարածքում պահպանություն իրականացնելու ժամանակ վերջինիս հետ առնչություն չի ունեցել, իսկ նրա տիկնոջ հետ առնչվել է մեկ անգամ՝ նրա մեքենայից իրեր են իջեցրել ամառանոցի տարածքում գտնվող տուն: Նշված տարածքում պահպանություն իրականացնելու ժամանակ տարածքում եղել է առանձնատուն, պարիսպներ և դարպասներ, իսկ լճի հատվածում՝ աջակողմյան մասում, կառուցված է եղել տաղավար: Այլ շինություններ այդ ժամանակ չեն եղել, մյուս շինությունները կառուցվել են հետագայում՝ իր ծառայությունից հետո:

21. Վկա Արմեն Լազարյանի ցուցմունքով այն մասին, որ 2011 թվականի հուլիսի 8-ից մինչև 2016 թվականի նոյեմբերի 21-ը ընկած ժամանակահատվածում ծառայել է ՀՀ պաշտպանության նախարարության 29632 զորամասի պարետային ծառայությունում: Նշված ժամանակահատվածում, կոնկրետ ժամանակը չի հիշում, շուրջ 4-5 ամիս ծառայություն է իրականցրել Դրախտիկ գյուղի հարակից տարածքում գտնվող ՀՀ պաշտպանության նախարարի պաշտոնը զբաղեցրած Սեյրան Օհանյանին պատկանող առանձնատան տարածքում: Աշխատանքային գրաֆիկը եղել է «երկու օր աշխատանքի, երկու օր հանգիստ» գրաֆիկով՝ շուրջօրյա: Հիշյալ տարածքում ծառայություն է իրականացրել հրամանատարության կողմից տրված հանձնարարության հիման վրա:

Ծառայությունը կայացել է նրանում, որ ապահովել են տարածքի պահպանությունը, որի դիմաց որպես աշխատավարձ ստացել են ամսական մոտ 98.000-ից 100.000 ՀՀ դրամ:

Երբ սկսել է այդ տարածքում ծառայություն իրականացնել այդ ժամանակ այնտեղ կառուցված են եղել միայն պարիսպները և առանձնատունը, շինարարությունը գտնվել է ընթացքի մեջ: Տարածքում առկա մյուս շինությունները կառուցվել են իր կողմից այդտեղ

ծառայությունն ավարտելուց, այսինքն՝ 2012 թվականից հետո:

22. Վկա Տիգրան Շառյանի ցուցմունքով այն մասին, որ 2011-2014 թվականներին ծառայել է ՀՀ պաշտպանության նախարարությունում որպես ռազմական ոստիկան, իսկ 2014 թվականից մինչև 2023 թվականը՝ ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության պարեկ-վարորդ: 2011 թվականին ծառայության նշանակվելուց մոտ երկու ամիս անց վերադասի հանձնարարությամբ ծառայություն է իրականացրել Գեղարքունիքի մարզի Դրախտիկ համայնքում՝ Սևանա լճի ափին գտնվող ամառանոցում, որը պատկանել է Սեյրան Օհանյանին: Հիշյալ ամառանոցի տարածքում ծառայել է շուրջօրյա, «երկու օր աշխատանքի, երկու օր հանգիստ» գրաֆիկով: Ամառանոցի տարածքում ծառայություն են իրականացրել նաև ռազմական ոստիկանության այլ ծառայողներ:

Այդ տարածքում ծառայություն կատարելու համար որպես ՊՆ ռազմական ոստիկանության ծառայողներ ստացել են աշխատավարձ, որի չափը չի հիշում: Սկզբում, երբ գնացել է այդ տարածք ծառայության, այնտեղ ոչ մի շենք չի եղել, հետագայում կառուցվել են տունը, տաղավարը, ծառայողների հանգստի համար նախատեսված շինությունը և ավտոտնակը:

23. Վկա Արտաշ Անտոնյանի ցուցմունքով այն մասին, որ 2011 թվականի հուլիս-օգոստոս ամիսներից մինչև 2013 թվականի գարուն կամ ամառն ընկած ժամանակահատվածում ծառայել է ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության Երևան քաղաքում գտնվող զորամասերից մեկում՝ որպես շարքային: Նշված ժամանակահատվածում իր վերադասի հանձնարարությամբ ծառայություն է իրականացրել Գեղարքունիքի մարզի Դրախտիկ համայնքում՝ Սևանա լճի ափին գտնվող ամառանոցում, որը պատկանել է Սեյրան Օհանյանին: Հիշյալ ամառանոցի տարածքում ծառայել է շուրջօրյա, «երկու օր աշխատանքի, երկու օր հանգիստ» գրաֆիկով: Ամառանոցի տարածքում ծառայություն են իրականացրել նաև ռազմական ոստիկանության այլ ծառայողներ:

Այդ տարածքում ծառայություն կատարելու համար որպես ՊՆ ռազմական ոստիկանության ծառայող ստացել է 115.000-120.000 ՀՀ դրամ գումարի չափով աշխատավարձ: Տարածքում իր կողմից ծառայություն իրականացնելու ժամանակ առկա է եղել միայն տունը, ավտոտնակը և պարիսպները, իսկ մնացած շինությունները կառուցվել են հետագայում՝ երբ ինքն այլևս այդտեղ ծառայություն չի իրականացրել:

24. Վկա Անդրանիկ Օհանյանի ցուցմունքով այն մասին, որ 2011-2017

թվականներն ընկած ժամանակահատվածում ծառայել է ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության 20440 զորամասում՝ որպես ենթասպա: Նշված ժամանակահատվածում իր վերադասի հանձնարարությամբ ծառայություն է իրականացրել Գեղարքունիքի մարզի Դրախտիկ համայնքում՝ Սևանա լճի ափին գտնվող՝ Սեյրան Օհանյանին պատկանող ամառանոցում: Հիշյալ ամառանոցի տարածքում ծառայել է շուրջօրյա, «երկու օր աշխատանքի, երկու օր հանգիստ» գրաֆիկով: Ամառանոցի տարածքում ծառայություն են իրականացրել նաև ռազմական ոստիկանության այլ ծառայողներ:

Այդ տարածքում ծառայություն իրականացնելու համար որպես ՊՆ ռազմական ոստիկանության ծառայող ստացել է 120.000 ՀՀ դրամ գումարի չափով աշխատավարձ: Տարածքում իր կողմից ծառայություն իրականացնելու սկզբնական ժամանակահատվածում առկա են եղել պարիսպները և կիսակառույց տունը, այնուհետև ժամանակի ընթացքում ամբողջությամբ կառուցվել է տունը, ավտոտնակը, տաղավարը, պահակատունը, իսկ ամենավերջում նաև լողավազանի և սաունայի շենքը:

25. Վկա Հակոբ Առաքելյանի ցուցմունքով այն մասին, որ 2010-2017 թվականներն ընկած ժամանակահատվածում ծառայել է ՀՀ ՊՆ Ճամբարակում տեղակայված զորամասում՝ որպես պայմանագրային զինծառայող: Գեղարքունիքի մարզի Դրախտիկ համայնքում՝ Սևանա լճի ափին գտնվող՝ Սեյրան Օհանյանին պատկանող ամառանոցում ծառայություն չի իրականացրել, սակայն պարբերաբար այցելել է այդտեղ 2011-2014 թվականների ընթացքում ծառայություն՝ պահակություն, իրականացրած իր հորեղբոր որդուն՝ Դավիթ Առաքելյանին, ումից ևս տեղեկացել է, որ նշված ամառանոցը պատկանում է Սեյրան Օհանյանին:

26. Վկայի դատավարական կարգավիճակով հարցաքննված Սեյրան Օհանյանի ցուցմունքով այն մասին, որ Գեղարքունիքի մարզի Դրախտիկ գյուղում ինքը և իր մերձավոր ազգականներն իրենց անվամբ ամառանոց չունեն, սակայն իր կողմից նշված ամառանոցը պարբերաբար օգտագործվում է: Այդ ամառանոցում տարին մի քանի անգամ ինքը կազմակերպել է իր և որոշակի հյուրերի հանգիստը: Այն սեփականության իրավունքով իրեն չի պատկանել և չի պատկանում: Այդ ամառանոցում իրականացված շինարարական, բարեկարգման և վերանորոգման աշխատանքներն իրականացվել են իր անձնական միջոցներով, այդ հարցում իրեն օգնել են նաև իր ընկերները և հարազատները, որոնց տվյալները չի հայտնել՝ նպատակահարմար չհամարելով: Բացի այդ, նշված

աշխատանքների դիմաց վճարվել է նաև իր խնայողություններից: Հրաժարվել է պատասխանել այն հարցին, թե ում է պատկանում ամառանոցը և ինչ հիմքով է այն տրամադրվել իրեն:

27. Վկայի դատավարական կարգավիճակով հարցաքննված Արծվիկ Մինասյանի ցուցմունքով այն մասին, որ 2016 թվականի հոկտեմբեր ամսից մինչև 2018 թվականի մարտ ամիսը զբաղեցրել է ՀՀ բնապահպանության նախարարի պաշտոնը: Պաշտոնի նշանակվելուց հետո տեղեկացել է, որ Դրախտիկ համայնքի 1-ին փողոցի 71 հասցեում գտնվող հողատարածքը փաստացի, առանց օրինական հիմքերի օգտագործվում է Սեյրան Օհանյանի կողմից: Այդ փաստն արձանագրելու, համապատասխան իրավական գործընթաց նախաձեռնելու համար կազմակերպվել և անց է կացվել մրցույթ, որի ժամանակ հաղթող է ճանաչվել Բենիամին Ղալեչյանը: Նման դեպքերը բազմաթիվ են եղել և ինքը գործել է պետության շահերից ելնելով, քանի որ ցանկացել է օրինական դաշտ բերել նման ապօրինի կառույցները և համապատասխան վարձակալական վճարներ մուտքագրել բյուջե: Հարցին այն մասին, որ նշված հողամասի մրցույթի փաթեթում առկա փաստաթղթերի ցանկում առկա է եղել նաև Գեղարքունիքի մարզի Դրախտիկ համայնքի 1-ին փողոցի 71 հասցեում տեղակայված հողամասի ճարտարապետահատակագծային առաջադրանք, համաձայն որի՝ նշված հողամասը չկառուցապատված, միջին թեքություններով, կիսով չափ ծառապատված տարածք է, առանց այդ փաստաթղթի կարող էր մրցույթ անցկացվեր, թե՝ ոչ, պատասխանել է, որ այդ փաստաթուղթը մրցույթի անհրաժեշտ փաստաթուղթ է, որի հիմնական նպատակը կառուցապատվող տարածքի նկատմամբ որոշակի սահմանափակումների նախատեսումն է: Եթե որևէ շեղում լինի շինարարության ընթացքում այդ փաստաթղթից, ապա դա հիմք է եղել կասեցնելու կառուցապատումը, ինչպես նաև այդպիսի փաստաթղթում նկարագրված վիճակը հավանաբար համապատասխանեցվել է մինչև կառուցապատումը եղած վիճակին, որի պատճառով էլ նշվել է այդպես: Ինչ վերաբերում է հողամասի վրա շենք-շինությունների առկայության պայմաններում նշված մրցույթի անցկացմանը և ներկայացված բիզնես ծրագրին, ապա չի բացառում, որ այդ շինությունները համապատասխանել են ծրագրում նշված շինություններին, որոնք նախատեսված էին կառուցելու համար, այդ պատճառով էլ միջոցներ չեն ձեռնարկվել քանդելու ուղղությամբ, սակայն անգամ եթե պայմանագրի որևէ կետերի խախտումներ են թույլ տրվել, ապա այդ հարցերը ենթակա էին լուծման

բացառապես ազգային պարկի և հաղթող մասնակցի կողմից, քանի որ պայմանագիրը կնքվել է նրանց միջև:

28. Քրեական վարույթով տեղեկատվության պահանջների հիման վրա ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունից ստացված գրությունների, դրանց կից՝ «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տարածքում գտնվող, պետական սեփականություն և բնության հատուկ պահպանվող տարածք հանդիսացող, Գեղարքունիքի մարզի Դրախտիկ համայնքի 1-ին փողոցի 71 հասցեի 10526 քմ հողատարածքը վարձակալության և (կամ) կառուցապատման իրավունքով տրամադրելու նպատակով միջգերատեսչական մրցութային հանձնաժողովի կողմից անցկացված մրցույթի փաթեթում առկա փաստաթղթերի **զննության արձանագրություններով,** համաձայն որոնց՝ 28.09.2016 թվականին «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ–ի տնօրեն Աշոտ Գնդոյանը թիվ 25-214-Ն գրությամբ ՀՀ բնապահպանության նախարար Արծվիկ Մինասյանին է ներկայացրել նշված հողամասի վերաբերյալ սխեմատիկ հատակագիծ, ճարտարապետահատակագծային առաջադրանք և կազմված հարցը՝ միջգերատեսչական հանձնաժողովում մրցույթի ներկայացնելու համար:

Համաձայն նշված փաթեթում առկա հողամասի սխեմատիկ հատակագծի, ճարտարապետահատակագծային առաջադրանքի՝ հողամասը որևէ շենք-շինություններով ծանրաբեռնված չի եղել, ավելին՝ առկա է գրառում այն մասին, որ հողամասը չկառուցապատված, միջին թեքություններով, կիսով չափ ծառապատված տարածք է:

Այնուհետև, վերոնշյալ փաթեթի հիման վրա բնության հատուկ պահպանվող տարածքների հողամասերը վարձակալության և (կամ) կառուցապատման իրավունքով տրամադրելու նպատակով ստեղծված միջգերատեսչական մրցութային հանձնաժողովը 2016 թվականի հոկտեմբերի 5-ին՝ ՀՀ բնապահպանության նախարար Արծվիկ Մինասյանի նախագահությամբ կայացած նիստի ընթացքում, քննարկելով «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի՝ Դրախտիկ համայնքի ափամերձ հատվածի 1.0526 հա հողամասը կառուցապատման իրավունքով մրցույթի ներկայացնելու հարցը, միաձայն որոշել է ՀՀ կառավարության տարածքային զարգացման և բնապահպանական նախարարական կոմիտեի քննարկմանը ուղարկել մրցույթի պայմանները և սահմանված կարգով ընթացք տալ նշված հողամասը կառուցապատման իրավունքով մրցույթի ներկայացնելու մասին հարցին:

Նշված նիստից հետո բնապահպանության նախարար Արծվիկ Մինասյանը 2016 թվականի հոկտեմբերի 6-ին 1/03.1/12072 գրությամբ ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարար Դավիթ Հարությունյանին է ներկայացրել միջգերատեսչական մրցութային հանձնաժողովի հավանությանն արժանացած վերոնշյալ հասցեում գտնվող 1 միավոր հողամասի տվյալները և կից փաստաթղթերը: Ներկայացված փաստաթղթերում ևս ներառված են եղել հողամասը շենք-շինություններով ծանրաբեռնված չլինելու մասին իրականությանը չհամապատասխանող տեղեկություններ:

2016 թվականի հոկտեմբերի 27-ին մշտապես գործող տարածքային զարգացման և բնապահպանական նախարարական կոմիտեի նիստում քննարկվել է «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի՝ Դրախտիկ համայնքի սահմանում գտնվող նշված հողատարածքը մրցույթի ներկայացնելու մասին հարցը և որոշվել է հավանություն տալ բնության հատուկ պահպանվող տարածքների մրցութային հանձնաժողովի կողմից ներկայացված առաջարկությանը՝ ՀՀ բնապահպանության նախարար Արծվիկ Մինասյանին հանձնարարելով ապահովել մրցույթի թափանցիկությունը:

«Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի 12.11.2016 թվականի 207 համարում հրապարակվել է նշված հողատարածքի հողահատկացման մրցույթի վերաբերյալ հայտարարություն:

2016 թվականի դեկտեմբերի 12-ին միջգերատեսչական մրցութային հանձնաժողովի կողմից անց է կացվել մրցույթ, որին ըստ փաստաթղթերի հայտեր և գործարար ծրագրեր են ներկայացրել Բենիամին Ղալեչյանը և Էդգար Գրիգորյանը:

Մրցույթի արդյունքում միջգերատեսչական հանձնաժողովը, Արծվիկ Մինասյանի նախագահությամբ, միաձայն հաղթող է ճանաչել Երևան քաղաքի բնակիչ Բենիամին Սուրենի Ղալեչյանին:

«Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ–ի խորհրդի՝ 2016 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 16-03 որոշմամբ հավանություն է տրվել «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի և Բենիամին Ղալեչյանի միջև կնքվող 1.0526 հա չափով հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման մասին պայմանագրին՝ կառուցապատման վճարի չափ սահմանելով 631560 ՀՀ դրամ/տարի, իսկ պայմանագրի ժամկետ՝ 25 տարի:

«Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ–ի և Բենիամին Սուրենի Ղալեչյանի միջև 2017 թվականի մայիսի 3-ին կնքվել է պետական սեփականություն հանդիսացող՝ հիշյալ

հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման մասին թիվ 1552 պայմանագիր:

Զննությամբ պարզվել է, որ նշված հողամասի վերաբերյալ հայտարարված մրցույթի փաթեթում եղել են հետևյալ վճարման հանձնարարագրերի անդորրագրերը.

- Վճարման հանձնարարագրի թիվ 002657 անդորրագիր – համաձայն որի՝ 06.12.2016 թվականին՝ ժամը 13:05-ին, «Արարատբանկ» ԲԲԸ-ի Նոր Նորք մասնաճյուղում թիվ 373 դրամարկղի թիվ 241240055444200 կրեդիտ հաշվին վճարվել է 5000 ՀՀ դրամ, վճարողը եղել է Արթուր Առաքելյանը, շահառուն հանդիսացել է «Տեղեկատվական վերլուծական կենտրոն» ՊՈԱԿ-ը, վճարման նպատակը՝ Բենիամին Սուրենի Ղալեչյանի մրցույթի փաթեթի համար վճար:
- Վճարման հանձնարարագրի թիվ 002658 անդորրագիր – համաձայն որի՝ 06.12.2016 թվականին՝ ժամը 13:06-ին, «Արարատբանկ» ԲԲԸ-ի Նոր Նորք մասնաճյուղում թիվ 373 դրամարկղի թիվ 241240055444200 կրեդիտ հաշվին վճարվել է 3000 ՀՀ դրամ, վճարողը եղել է Արթուր Առաքելյանը, շահառուն հանդիսացել է «Տեղեկատվական վերլուծական կենտրոն» ՊՈԱԿ-ը, վճարման նպատակը՝ Բենիամին Սուրենի Ղալեչյանի մասնակցության վճար:
- Վճարման հանձնարարագրի թիվ 000463 անդորրագիր – համաձայն որի՝ 12.12.2016 թվականին՝ ժամը 10:55-ին, «Կոնվերս բանկ» ՓԲԸ-ի Զեյթուն մասնաճյուղում թիվ 33G դրամարկղի թիվ 2477201971250000 կրեդիտ հաշվին վճարվել է 31580 ՀՀ դրամ, վճարողը եղել է Բենիամին Սուրենի Ղալեչյան, շահառուն հանդիսացել է «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ը, վճարման նպատակը՝ մրցույթի նախավճար:
- Վճարման հանձնարարագրի թիվ 002659 անդորրագիր – համաձայն որի՝ 06.12.2016 թվականին՝ ժամը 13:06-ին, «Արարատբանկ» ԲԲԸ-ի Նոր Նորք մասնաճյուղում թիվ 373 դրամարկղի թիվ 241240055444200 կրեդիտ հաշվին վճարվել է 5000 ՀՀ դրամ, վճարողը եղել է Էդգար Գարիկի Գրիգորյանը, շահառուն հանդիսացել է «Տեղեկատվական վերլուծական կենտրոն» ՊՈԱԿ-ը, վճարման նպատակը՝ Էդգար Գարիկի Գրիգորյանի մրցույթի փաթեթի համար վճար:
- Վճարման հանձնարարագրի թիվ 002660 անդորրագիր – համաձայն որի՝ 06.12.2016 թվականին՝ ժամը 13:07-ին, «Արարատբանկ» ԲԲԸ-ի Նոր Նորք մասնաճյուղում թիվ 373 դրամարկղի թիվ 241240055444200 կրեդիտ հաշվին վճարվել է 3000 ՀՀ դրամ, վճարողը եղել է Էդգար Գարիկի Գրիգորյանը, շահառուն հանդիսացել է «Տեղեկատվական

վերլուծական կենտրոն» ՊՈԱԿ-ը, վճարման նպատակը՝ Էդգար Գարիկի Գրիգորյանի մասնակցության վճար:

- Դրամարկղի մուտքի թիվ 161212027791024 օրդեր- համաձայն որի՝ 12.12.2016 թվականին ժամը՝ 10:49:41-ին, «Արդշինբանկ» Նոր Նորք մասնաճյուղում դրամարկղի թիվ 2477201971250000 կրեդիտ հաշվին վճարվել է 26315 ՀՀ դրամ, վճարողը եղել է Էդգար Գրիգորյանը (հեռ.093039388), ստացողը հանդիսացել է «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ը, վճարման նպատակը՝ նախավճարի չափ 5% Էդգար Գրիգորյան:

29. Քրեական վարույթով ՀՀ կադաստրի կոմիտեից առգրավված՝ Գեղարքունիքի մարզի Դրախտիկ համայնքի 1-ին փողոցի 71 հասցեում գտնվող 1.0526 հա մակերեսով հողամասի վերաբերյալ կազմված **կադաստրային գործի զննությամբ**, համաձայն որի՝ 2017 թվականի մայիսի 22-ին Գեղարքունիքի մարզի Դրախտիկ համայնքի 1-ին փողոցի 71 հասցեում գտնվող 1.0526 հա մակերեսով հողամասի նկատմամբ ՀՀ կադաստրի կոմիտեի անշարժ գույքի իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում Բենիամին Սուրենի Ղալեչյանի անվամբ կատարվել է պետական գրանցում և վերջինիս տրվել թիվ 22052017-05-0015 վկայականը (հողամասի կադաստրային ծածկագիրը՝ 05-032-0971-0089): Կադաստրային գործում առկա՝ «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի և Բենիամին Սուրենի Ղալեչյանի միջև 2017 թվականի մայիսի 3-ին կնքված պետական սեփականություն հանդիսացող՝ հիշյալ հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման մասին թիվ 1552 պայմանագրի բաղկացուցիչ մաս հանդիսացող նշված հողամասի իրադրության հատակագիծ սխեմայի՝ հողամասը եղել է շենք-շինություններով չծանրաբեռնված տարածք, մինչդեռ քննությամբ պարզվել է, որ այդ հողատարածքը մինչև վարձակալության և կառուցապատման իրավունքով տրամադրելը եղել է արդեն իսկ շենք-շինություններով ծանրաբեռնված:

30. «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տարածքում գտնվող, պետական սեփականություն հանդիսացող, Գեղարքունիքի մարզի Դրախտիկ համայնքի 1-ին փողոցի 71 հասցեում գտնվող 10526 քմ հողատարածքի և դրա վրա առկա շինությունների **զննում կատարելու մասին 18.07.2018 թվականի արձանագրությամբ,** համաձայն որի՝ զննության կատարման դրությամբ այդ տարածքում արդեն իսկ առկա են եղել կառուցված թվով 6 շենք-շինություններ: Զննության մասնակից Գրիգոր Բարսեղյանը և Գագիկ Հայրապետյանը հայտարարել են, որ տարածքում գտնվող որպես լողավազան և

շոգեբաղնիք ծառայող շինության վրա իրենք 2015 թվականի ընթացքում կատարել են շինարարական աշխատանքներ, որը ընթացքում տարածքի նկատմամբ հսկողություն է իրականացրել Դավիդ Առաքելյանը, ով չի հերքել նշված հանգամանքը:

31. «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տարածքում գտնվող, պետական սեփականություն հանդիսացող, Գեղարքունիքի մարզի Դրախտիկ համայնքի 1-ին փողոցի 71 հասցեում գտնվող 10526 քմ հողատարածքի և դրա վրա առկա շինությունների **զննում կատարելու մասին 05.02.2025 թվականի արձանագրությամբ,** համաձայն որի՝ տարածքն ամբողջությամբ ցանկապատված է, տարածք մուտք գործելու համար առկա են երեք առանձին մուտքեր: Տարածքում առկա են կառուցված վեց շինություններ, որոնք ծառայում են որպես ավտոտնակ, տարածքի անվտանգության և պահպանության համար նախատեսված հանգստի սենյակներ, խորդանոց, առանձնատուն, փակ ամառային խոհանոց, լողավազան և շոգեբաղնիք: Զննության մասնակից Դավիդ Առաքելյանը հայտարարել է, որ նշված տարածքում առկա շինություններից առանձնատունը, ավտոտնակը, հարակից բնակելի շինությունը՝ առանձնատունը, փակ տաղավարը կառուցվել են 2012-2013 թվականների ընթացքում, իսկ լողավազանը և շոգեբաղնիքն իր մեջ պարունակող շինությունը կառուցվել է մոտավորապես 2015-2016 թվականների ընթացքում:

32. «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տարածքում գտնվող, պետական սեփականություն հանդիսացող, Գեղարքունիքի մարզի Դրախտիկ համայնքի 1-ին փողոցի 71 հասցեում գտնվող 10526 քմ հողատարածքի վրա ինքնակամ կառուցված շինություններից առանձնատանը կատարված **խուզարկության արձանագրությամբ,** համաձայն որի՝ նշված գործողության ընթացքում հայտնաբերվել են 01.07.2012 թվականին ՀՀ ՊՆ նախարար Սեյրան Օհանյանի 50 ամյակի կապակցությամբ Վրթանես Եպիսկոպոս Աբրահամյանի, ինչպես նաև ՀՀ ազգային անվտանգության ծառայության տնօրեն Գորիկ Հակոբյանի շնորհավորական նամակները:

33. Քրեական վարույթի նյութերին կցված՝ «Գազպրոմարմենիա» ՓԲԸ-ից ստացված գրության և կից փաստաթղթերի պատճենների **զննության արձանագրությամբ,** համաձայն որի՝ Դրախտիկ համայնքի 1-ին փողոցի 71 հասցեում գտնվող հողամասի վրա կառուցված շենք-շինությունների գազաֆիկացումն իրականացվել է 2012 թվականի մայիսին, և բաժանորդ է գրանցվել Արամ Եգանյանը, իսկ 2013 թվականի նոյեմբերին

կատարվել է բաժանորդի անվանափոխություն և բաժանորդ է գրանցվել Հասմիկ Մելիքյանը, վերջինս, ըստ նախաքննությամբ ձեռք բերված տվյալների հանդիսանում է Սեյրան Օհանյանի կնոջ մայրը:

34. Քրեական վարույթի նյութերին կցված՝ «Հայաստանի Էլեկտրական ցանցեր» ՓԲԸ–ից ստացված գրության և կից փաստաթղթերի պատճեների **զննության արձանագրությամբ,** համաձայն որի՝ Գեղարքունիքի մարզի Դրախտիկ համայնքի 1–ին փողոցի 71 հասցեում գտնվող հողամասի վրա կառուցված շենք-շինությունների էլեկտրաֆիկացումն իրականացվել է 2013 թվականի օգոստոս ամսից և բաժանորդ է հանդիսանում Սեյրան Օհանյանի կնոջ մայրը՝ Հասմիկ Մելիքյանը:

35. Վկա Բենիամին Սուրենի Ղալեչյանի շահագործած բջջային հեռախոսահամարի վերծանումների **զննության 07.11.2024 թվականի արձանագրությամբ,** համաձայն որի՝ Բենիամին Ղալեչյանը 2016 թվականի դեկտեմբերի 12-ին «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տարածքում առկա Գեղարքունիքի մարզի Դրախտիկ համայնքի 1-ին փողոցի 71-րդ հասցեում գտնվող 10526 քմ հողամասը մրցութային կարգով վարձակալության և (կամ) կառուցապատման իրավունքով տրամադրելու վերաբերյալ հայտարարված մրցույթի համար ՀՀ կառավարության 3-րդ շենքի 5-րդ հարկում տեղի ունեցած նիստի անցկացման օրը (երբ վերջինս հաղթող է ճանաչվել) մշտապես հեռախոսակապի մեջ է գտնվել Սեյրան Օհանյանի օգնական Արթուր Առաքելյանի կողմից շահագործված 098-00-00-04 հեռախոսահամարի հետ, ինչպես նաև նույն Արթուր Առաքելյանի եղբայր Դավիդ Առաքելյանի հետ:

36. Վկա Էդգար Գարիկի Գրիգորյանի շահագործած բջջային հեռախոսահամարի վերծանումների **զննության 13.12.2024 թվականի արձանագրությամբ,** համաձայն որի՝ Էդգար Գրիգորյանի շահագործած 093-03-93-88 բջջային հեռախոսահամարից Բենիամին Ղալեչյանի՝ 091-77-22-10 հեռախոսահամարին ելքային հեռախոսազանգ կատարվել է ընդամենը մեկ անգամ, որը կատարվել է 12.12.2016 թվականին՝ ժամը 11:01:15-ին, հեռախոսազանգի տևողությունը կազմել է 0:36 վայրկյան, և հեռախոսազանգը կատարելու ժամանակահատվածում Էդգար Գրիգորյանի հեռախոսահամարը սպասարկվել է Երևան քաղաքի Ռուբինյանց 28 հասցեում գտնվող ալեհավաքի միջոցով:

Նույն ժամանակահատվածում Էդգար Գրիգորյանի վերոնշյալ բջջային հեռախոսահամարին Բենիամին Ղալեչյանի 091-77-22-10 բջջային հեռախոսահամարից

ստացվել են երկու մուտքային հեռախոսազանգեր՝ 09.12.2016 թվականին և 12.12.2016 թվականին, մասնավորապես առաջին մուտքային զանգը ստացվել է 09.12.2016 թվականին՝ ժամը 19:29:05-ին, տևողությունը եղել է 1 րոպե 56 վայրկյան, Էդգար Գրիգորյանի հեռախոսահամարը սպասարկվել է Երևան քաղաքի Մոլդովական 27 հասցեում գտնվող ալեհավաքի միջոցով, իսկ երկրորդ մուտքային հեռախոսազանգը ստացվել է 12.12.2016 թվականին՝ ժամը 10:33:22-ին, տևողությունը եղել է 1 րոպե 6 վայրկյան: Էդգար Գրիգորյանի հեռախոսահամարը սպասարկվել է Երևան քաղաքի Հանրապետության Հրապարակի Կառավարության շենքի տարածքը սպասարկող ալեհավաքի միջոցով:

Ըստ քրեական վարույթով ստացված տվյալների՝ 2016 թվականի դեկտեմբերի 12-ին՝ ժամը 12:00-ին, Կառավարության 3-րդ շենք 5-րդ հարկում տեղի է ունեցել «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տարածքում ընդգրկված, պետական սեփականություն հանդիսացող՝ Գեղարքունիքի մարզի Դրախտիկ համայնքի 1-ին փողոցի 71 հասցեում գտնվող 10526 քմ հողատարածքի վարձակալության և (կամ) կառուցապատման իրավունքով տրամադրման հարցը քննարկող միջգերատեսչական մրցութային հանձնաժողովի նիստը:

Այդ օրը Էդգար Գրիգորյանի անունից «Արդշինբանկ» ՓԲԸ-ի Նոր Նորքի մասնաճյուղում ժամը 10:49:41-ին կատարվել է վճարում՝ 26.315 ՀՀ դրամի չափով «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի համապատասխան հաշվին նշված մրցույթի մասնակցության նախավճարի 5 տոկոսի չափով:

Էդգար Գրիգորյանի հեռախոսահամարից քրեական վարույթով հետաքրքրություն ներկայացնող ժամանակահատվածում թվով 13 ելքային հեռախոսազանգեր են կատարվել Բենիամին Ղալեչյանի մորաքրոջ որդի, ՀՀ պաշտպանության նախկին նախարար Սեյրան Օհանյանի մտերիմ և ՊՆ ծառայող հանդիսացած Արթուր Մարտիկի Առաքելյանի 098-00-00-04 հեռախոսահամարին:

Էդգար Գրիգորյանի նշված ելքային հեռախոսազանգերի ուսումնասիրությամբ պարզվել է, որ այդ ելքային հեռախոսազանգերից 07.12.2016 թվականի երկու հեռախոսազանգերը կատարվել են քրեական վարույթով հետաքրքրություն ներկայացնող մրցույթի մասնակցության հայտերը ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն ներկայացնելու օրվան հաջորդող օրը, ինչպես նաև փաթեթները՝ ծրարը, ՀՀ շրջակա

միջավայրի նախարարություն ներկայացնելու օրը: Ինչ վերաբերում է դեկտեմբերի 12-ին կատարված ելքային զանգերին, ապա դրանք համապատասխանում են Էդգար Գրիգորյանի անունից «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի համապատասխան հաշվին նշված մրցույթի մասնակցության նախավճարի 5 տոկոսի չափով վճարում կատարելու օրվան:

Էդգար Գրիգորյանի մուտքային զանգերի զննմամբ պարզվել, որ նույն ժամանակահատվածում Էդգար Գրիգորյանի հեռախոսահամարին ստացվել են 13 մուտքային հեռախոսազանգեր՝ Արթուր Մարտիկի Առաքելյանի՝ 098-00-00-04 հեռախոսահամարից:

Վերոնշյալ մուտքային հեռախոսազանգերի ուսումնասիրությամբ պարզվել է, որ Էդգար Գրիգորյանի կողմից Արթուր Առաքելյանի՝ 098-00-00-04 բջջային հեռախոսահամարից 06.12.2016 թվականին ստացված երեք մուտքային հեռախոսազանգերը համապատասխանում են քրեական վարույթով հետաքրքրություն ներկայացնող հողամասի վերաբերյալ հայտարարված մրցույթի մասնակցության հայտերը ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն ներկայացնելու օրվան, ինչպես նաև Էդգար Գրիգորյանի անունից նշված մրցույթի մասնակցության համար և մրցույթի փաթեթի համար «Արարատբանկ» ԲԲԸ-ի Նորքի մասնաճյուղում կատարված համապատասխանաբար 3000, 5000 գումարների վճարման օրվան:

Հատկանշական է նաև այն հանգամանքը, որ նույն օրը՝ 06.12.2016 թվականին, նույն բանկի նույն մասնաճյուղում ընդամենը րոպեների տարբերությամբ՝ ժամը 13:05-ին և 13:06-ին, Բենիամին Ղալեչյանի կողմից նույն մրցույթի մասնակցության համար և մրցույթի փաթեթի ներկայացման համար նույն չափի՝ 3000 և 5000 ՀՀ դրամ է վճարվել Արթուր Առաքելյանի կողմից:

37. Քրեական վարույթով ՀՀ կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովից ստացված Սեյրան Օհանյանի կողմից ՀՀ կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին ներկայացված՝ պաշտոնատար անձի՝ պաշտոնեական պարտականությունները ստանձնելու օրվա դրությամբ առկա գույքի, եկամուտների և շահերի վերաբերյալ 2021 թվականի, այնուհետ՝ պաշտոնատար անձի տարեկան՝ 2021, 2022 և 2023 թվականների գույքի, եկամուտների, շահերի և ծախսերի վերաբերյալ հայտարարագրերի **զննության արձանագրությամբ,** համաձայն որի՝ ներկայացված հայտարարագրերի

համապատասխան բաժնում Գեղարքունիքի մարզի Դրախտիկ համայնքի 1-ին փողոցի 71 հասցեում գտնվող հողամասի և դրա վրա կառուցված շենք-շինությունների վերաբերյալ որևէ նշում առկա չէ, այն դեպքում, երբ 2017 թվականի մայիսի 3-ին Դրախտիկ համայնքի 1-ին փողոցի 71 հասցեում գտնվող հողամասը 25 տարի ժամկետով վարձակալության և կառուցապատման իրավունքով Բենիամին Ղալեչյանին տրամադրելու վերաբերյալ կնքված պայմանագիրը դեռևս գործում է, վերոգրյալ գույքը չի քանդվել և մինչ օրս նշված հողատարածքը և դրա վրա գտնվող անշարժ գույքը պատկանում է Սեյրան Օհանյանին:

38. 2024 թվականի սեպտեմբերի 16-ին կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովից ստացված գրության, կից հայտարարագրված տվյալներում փոփոխություն կատարելու վերաբերյալ 2 դիմումի, 20 հայտարարագիր պարունակող երկու խտաֆայլի և հայտարարագրերի ցանկի տեսքով տեղեկատվության **զննության արձանագրությամբ,** համաձայն որի՝ նշված գրությունը ելքագրված է թիվ 01/2935-2024 համարով, ստորագրված կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի նախագահի պարտականությունները կատարող Մարիամ Գալստյանի կողմից և ուղղված է Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի պետության, սահմանադրական կարգի հիմունքների և հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների քննության գլխավոր վարչության չորրորդ վարչության պետ, արդարադատության առաջին դասի խորհրդական պարոն Արմեն Ումուրշատյանին:

Գրության բովանդակությունը հետևյալն է. *«Ի պատասխան 2024 թվականի սեպտեմբերի 12-ին Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով) ներկայացված Ձեր թիվ 04/04/283251-2024 գրության՝ տրամադրում եմ «Հանրային ծառայության մասին» օրենքի իմաստով հայտարարատու պաշտոնատար անձ Սեյրան Մուշեղի Օհանյանի (ծնվ.՝ 01.07.1962թ., ՀԾՀ՝ 1107621313) և նրա ընտանիքի անդամ Ռուզաննա Գուրգենի Խաչատրյանի կողմից Հանձնաժողով ներկայացված հայտարարագրերը:*

Տեղեկացնում եմ, որ Սեյրան Օհանյանի՝ 2021-2023 թվականների գույքի, եկամուտների, ծախսերի և շահերի հայտարարագրերի «Բ.1.4. Հայտարարատուի կողմից տվյալ տարվա ընթացքում 90 օրից ավելի փաստացի տիրապետվող անշարժ գույք կամ հայտարարատուի անունից, օգտին կամ հաշվին ձեռք բերված, երրորդ անձին սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույք, կամ անշարժ գույք, որից

փաստացի օգուտ է ստանում կամ այն տնօրինում է հայտարարատուն» բաժիններում հայտարարագրված չեն «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տարածքում առկա Գեղարքունիքի մարզի Դրախտիկ համայնքի 1-ին փողոցի 71 հասցեում գտնվող 10526 քմ հողատարածքի և դրանում առկա շինությունների վերաբերյալ տվյալներ:

Հարկ եմ համարում նշել, որ մամուլում 2023 թվականի հունվարի 26-ին տեղ գտած հրապարակումից հետո՝ 2023 թվականի հուլիսի 12-ին, Սեյրան Օհանյանի կողմից Հանձնաժողովի պաշտոնական էլեկտրոնային փոստին էլեկտրոնային նամակ է ուղարկվել՝ խնդրելով թույլատրել կատարել ուղղում՝ հնարավորություն տալով հայտարարագրել վերը նշված գույքը: Միաժամանակ նշել է, որ տվյալ անշարժ գույքն իր կողմից 2022 թ. և նախորդ հայտարարագրերում չի հայտարարագրվել, քանի որ այն իրեն չի պատկանում և իր կողմից փաստացի չի տիրապետվել 90 օրից ավելի (2022 թ.-ի ընթացքում այնտեղ անցկացրել է ոչ ավելի քան 15-20 օր), սակայն մամուլում և այլ հարթակներում գույքի վերաբերյալ շրջանառվող ապատեղեկատվությունը հաշվի առնելով՝ դիմում է նշված ուղղումը կատարելու համար:

Հայտարարագրված տվյալներում փոփոխություն կատարելու վերաբերյալ դիմումը սահմանված ձևաչափով ներկայացված չլինելով պայմանավորված՝ Հանձնաժողովը հայտարարատու պաշտոնատար անձ Սերյան Օհանյանին է ուղարկել սահմանված ձևաչափը և առաջարկել լրացնել այն և ներկայացնել Հանձնաժողով:

Սեյրան Օհանյանը 2023 թվականի հուլիսի 13-ին Հանձնաժողով է ներկայացրել հայտարարագրված տվյալներում փոփոխություն կատարելու վերաբերյալ դիմումը (առդիր՝ 1 դիմում), որից հետո՝ 2023 թվականի օգոստոսի 7-ին, Հանձնաժողովը հանձնված և հրապարակված հայտարարագրում անհամապատասխանությունն ուղղելու թույլտվություն տրամադրելու հարցը որոշելու համար գրավոր հարցում է ուղարկել ՀՀ գլխավոր դատախազություն՝ խնդրելով տրամադրել տեղեկություն գրությանը կից ցանկում նշված անձանց (այդ թվում՝ ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Սեյրան Օհանյանի) կողմից ներկայացված հայտարարագրերի՝ որևէ քրեական վարույթում ապացույց հանդիսանալու վերաբերյալ: Ի պատասխան հայցվող տեղեկության՝ 2023 թվականի սեպտեմբերի 1-ին ՀՀ գլխավոր դատախազությունից ստացվել է պատասխան գրություն, որ Հանձնաժողովի գրությանը կից ներկայացված ցանկում նշված անձանց կողմից (բացառությամբ մեկ անձի) ներկայացված հայտարարագրերը ապացույց չեն հանդիսանում:

Վերոնշյալ հանգամանքով պայմանավորված՝ դիմումը մերժելու հիմքեր առկա չեն եղել, սակայն, հայտարարագրված տվյալներում փոփոխություն կատարելու թույլտվություն դեռևս տրամադրված չէ հայտարարագրման էլեկտրոնային համակարգի ֆունկցիոնալության բացակայությամբ պայմանավորված: Հանձնաժողովի կողմից համապատասխան թույլտվությունները սկսել են տրամադրվել 2024 թվականի հուլիս ամսից և ըստ ներկայացված դիմումների ժամանակագրական հաջորդականության՝ Հանձնաժողովն ապահովում է դրանց սահմանված ընթացքը:

Տեղեկացնում եմ նաև, որ Հանձնաժողովը հայտարարատու պաշտոնատար անձ Սեյրան Օհանյանի և նրա ընտանիքի անդամների հայտարարագրերի վերլուծություն չի իրականացրել:

Հայտարարագրի՝ «Բ.1.4. Հայտարարատուի կողմից տվյալ տարվա ընթացքում 90 օրից ավելի փաստացի տիրապետվող անշարժ գույք կամ հայտարարատուի անունից, օգտին կամ հաշվին ձեռք բերված, երրորդ անձին սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույք կամ անշարժ գույք, որից փաստացի օգուտ է ստանում կամ այն տնօրինում է հայտարարատուն» դաշտում տվյալների՝ հայտարարագրման ենթակա լինելու, ինչպես նաև դրանց ուժի մեջ մտնելու հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Հանրային ծառայության մասին» օրենքով: Մասնավորապես, «Հանրային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2021 թվականի հունվարի 19-ի ՀՕ-51-Ն օրենքի (ուժի մեջ է մտել 17.02.2021թ. և տարածվել է տվյալ ամսաթվից հետո ներկայացման ենթակա պաշտոնեական պարտականությունների ստանձնման կամ դադարեցման, ինչպես նաև 2021 թվականի և հաջորդող տարիների տարեկան հայտարարագրերի նկատմամբ) 6-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ «Հանրային ծառայության մասին» օրենքի 40-րդ հոդվածը լրացվել է հետևյալ բովանդակությամբ 1.1-ին և 1.2-րդ մասերով՝ «1.1. Հայտարարագրում ներառվում է նաև հայտարարատուի կողմից փաստացի տիրապետվող գույքը, ինչպես նաև այն գույքը, որը սեփականության իրավունքով պատկանում է երրորդ անձի, բայց ձեռք է բերվել հայտարարատուի անունից, օգտին կամ հաշվին, կամ այդ գույքից փաստացի օգուտ է ստանում կամ այդ գույքը տնօրինում է հայտարարատուն:

1.2. Փաստացի տիրապետվող գույք է համարվում հայտարարատուին սեփականության իրավունքով չպատկանող, բայց նրա կողմից հաշվետու

ժամանակահատվածում 90 և ավելի օր փասպացի փիրապետվող կամ օգտագործվող (անկախ նշված իրավունքների պետական գրանցումից) անշարժ գույքը, տրանսպորտի միջոցը (բացառությամբ աշխատանքային (ծառայողական) հարաբերությունների արդյունքում անձի փիրապետմանը հանձնված անշարժ գույքի, տրանսպորտի միջոցի), թանկարժեք գույքը:»:

Միաժամանակ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ խնդրո առարկա հայտարարագրերի վերաբերյալ առկա են ուղղման դիմումներ՝ սփորև ներկայացնում եմ ներկայացված հայտարարագրերում ուղղում կատարելու վերաբերյալ կարգավորումները:

Մասնավորապես, «Հանրային ծառայության մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ (...) Հայտարարատու պաշտոնատար անձը, նրա ընտանիքի անդամը հանձնված և հրապարակված հայտարարագրում իրենց հայտնաբերած անհամապատասխանությունը վերացնելու նպատակով կարող են դիմել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով: Հանձնաժողովը մերժում է դիմումը, եթե դրանում նշված փվյալի անհամապատասխանությունն այլ կերպ բացահայտված է (...):

Հանձնաժողովն իր՝ 2020 թվականի նոյեմբերի 12-ի N 04-Ն որոշմամբ սահմանել է, թե որ դեպքում է հայտարարագրված փվյալների անհամապատասխանությունը համարվում այլ կերպ բացահայտված: Մասնավորապես, որոշման Հավելված 1-ի 10-րդ կետից բխում է, որ հայտարարագրված փվյալների անհամապատասխանությունը համարվում է այլ կերպ բացահայտված հետևյալ դեպքերից որևէ մեկի առկայության դեպքում՝

1. եթե դա մինչև հայտարարատուի կողմից Հանձնաժողովին ուղղման դիմում ներկայացնելը բացահայտվել է Հանձնաժողովի կողմից կամ ցանկացած այլ անձի կողմից և որի մասին Հանձնաժողովը տեղեկացվել է, կամ

2. երբ փվյալ հայտարարատու պաշտոնատար անձի կամ նրա ընտանիքի կազմի մեջ մտնող անձի կամ կուսակցության հայտարարատու պաշտոնատար անձի նկատմամբ հարուցվել է քրեական գործ, որտեղ որպես ապացույց օգտագործվելու են հայտարարատու պաշտոնատար անձի, նրա ընտանիքի անդամների, կուսակցության հայտարարատու պաշտոնատար անձի հայտարարագրերը և որը ավարտված չէ, կամ

3. հայտարարատու պաշտոնատար անձի կամ հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի անդամի կամ կուսակցության հայտարարատու պաշտոնատար անձի

նկատմամբ Հանձնաժողովում սկսվել է հայտարարագրերի ստուգում կամ համալիր վերլուծություն կամ առկա է հարուցված վարույթ:

Խնդրում եմ ընդունել ի գիտություն, որ 2024 թվականի հունիսի 3-ին Սեյրան Օհանյանի կողմից Հանձնաժողով է ներկայացվել մեկ այլ դիմում, որով վերջինս խնդրել է թույլ տալ իր՝ 2023 թվականի գույքի, եկամուտների, ծախսերի և շահերի հայտարարագրում հայտարարագրված տվյալներում փոփոխություն կատարել՝ ավելացնել 5,531,796 ՀՀ դրամի չափով կենսաթոշակը, որը չի լրացվել հայտարարագրում (առդիր 2՝ դիմում), որի հիման վրա փոփոխություն կատարելու ընթացքը դեռևս ապահովված չէ վերը նշված պատճառաբանությամբ:

Առդիր՝ հայտարարագրված տվյալներում փոփոխություն կատարելու վերաբերյալ 2 (երկու) դիմում, 20 (քսան) հայտարարագիր պարունակող 2 (երկու) խտրաֆայլ և հայտարարագրերի ցանկ»:

Գրությունը կից տրամադրված երկու դիմումների զննությամբ պարզվել է, որ 1-ին դիմումը ՀՀ ԱԺ «Հայաստան» խմբակցության ղեկավար, պատգամավոր Սեյրան Մուշեղի Օհանյանի դիմումն է ուղղված կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի նախագահ տիկին Հայկուհի Հարությունյանին: Դիմումը տպագիր է և ունի հետևյալ բովանդակությունը. *«Դիմում՝ հայտարարագրված տվյալներում փոփոխություն կատարելու վերաբերյալ, ուղղման ենթակա հայտարարագրի տարեթիվը՝ 2022, ուղղման ենթակա հայտարարագրի տեսակը՝ տարեկան, ուղղման ենթակա հայտարարագրի հանձնման ամսաթիվը՝ 02.06.2023: Վրիպակի կամ ոչ ամբողջական տվյալի մանրամասն նկարագրությունը՝ Գեղարքունիքի մարզ, Ճամբարակ համայնք, Դրախտիկ գյուղ, 1-ին փողոց 71 հողամաս/ վկայական թիվ 22052017-05-0015/ հասցեով նշված անշարժ գույքը պատկանում է Բենիամին Սուրենի Ղալեչյանին, ում համաձայնությամբ ես երբեմն օգտվել եմ տվյալ անշարժ գույքից:*

Վրիպելու պատճառը՝ Տվյալ անշարժ գույքի մասին իմ կողմից չի նշվել 2022թ. և նախորդ հայտարարագրերում, քանի որ այն ինձ չի պատկանում և իմ կողմից փաստացի չի տիրապետվել 90 օրից ավելի, ինչպես հայտարարագրում է պահանջվում (2022 թ. ընթացքում այնտեղ ես անցկացրել եմ ոչ ավելի քան 15-20 օր): Եվ այժմ լրացնում եմ այս տեղեկությունը՝ մամուլում, այլ հարթակներում այս անշարժ գույքի վերաբերյալ շրջանառվող ապատեղեկատվությունը հաշվի առնելով:

Դիմումը ստորագրված է և ձեռագիր գրառված Սեյրան Օհանյան»:

2-րդ դիմումը կրկին ՀՀ ԱԺ «Հայաստան» խմբակցության ղեկավար, պատգամավոր Սեյրան Մուշեղի Օհանյանի դիմումն է ուղղված կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի նախագահի պարտականությունները կատարող Մարիամ Գալստյանին: Դիմումը տպագիր է և ունի հետևյալ բովանդակությունը. *«Հարգելի տիկին Գալստյան, խնդրում եմ Ձեր հանձնարարականը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի համապատասխան ստորաբաժանմանը, որպեսզի ինձ թույլատրվի լրացում կատարել 2023թ. հայտարարագրիս մեջ: Նախապես տեղեկացված լինելով, որ որոշ տվյալներ՝ այդ թվում , կենսաթոշակ, ներբեռնվելու են ինքնաշխատ կերպով, մեր կողմից կենսաթոշակին հատկացված դաշտը չի լրացվել:*

Դիմումը ստորագրված է և տպագիր գրառված «Հայաստան» խմբակցության ղեկավար Սեյրան Օհանյան»:

Գրության կից ներկայացված 2 (երկու) էլեկտրոնային խտաֆայլեր - դրանք Ռուզաննա Գուրգենի Խաչատրյանի կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին ներկայացված 2011, 2012, 2013, 2014, 2015, 2021, 2022 և 2023 թվականների, ինչպես նաև Սեյրան Մուշեղի Օհանյանի կողմից ներկայացված 2011, 2012, 2013, 2014, 2015, 2016, 2021, 2022 և 2023 թվականների հայտարարագրերն են:

Նշված հայտարարագրերի զննությամբ պարզվել է, որ Գեղարքունիքի մարզի Դրախտիկ համայնքի 1-ին փողոցի 71 հասցեում գտնվող անշարժ գույքը Սեյրան Օհանյանի և նրա կնոջ՝ Ռուզաննա Խաչատրյանի կողմից ներկայացված չէ:

39. Շինարարատեխնիկական և ապրանքագիտական համալիր փորձաքննության թիվ 33532410 եզրակացության համաձայն՝

«(...)ՀՀ, Գեղարքունիքի մարզ, Ճամբարակ համայնք, գյուղ Դրախտիկ, 1-ին փողոց, հ. 71 (կադաստրային ծածկագիր՝ 05-032-0971-0089) հասցեում գտնվող հողամասում առկա են 1229.8 քմ մակերեսով ինքնակամ կառույցներ:

(...):

Հետազոտման առարկա հանդիսացող անշարժ գույքի բաղկացուցիչ մաս կազմող շենք-շինությունների վերարտադրման արժեքները 2015 թվականի դրությամբ բերված է ստորև.

Անվանումը		Վերարտադրման արժեքը ՀՀ դրամ (2015թ. դրությամբ)
1	Բնակելի տուն	**37,966,302**
2	Ավտոտնակ	**5,969,879**
3	Պահակատուն	**13,064,287**
4	Խորդանոց	**1,032,682**
5	Լողավազան	**59,718,223**
6	Ամառային խոհանոց	**3,646,744**
7	Պարիսպ	**3,494,868**
Անշարժ գույքի բաղկացուցիչ մասի(շենք-շինությունների) վերարտադրման արժեքը		**124,892,985**

Այսպիսով, նշված շենք-շինությունների վերարտադրման արժեքը 2015 թվականի դրությամբ կարող էր կազմել **124 892 985 ՀՀ դրամ,** 2016 թվականի դրությամբ՝ **125 394 158 ՀՀ դրամ**, 2017 թվականի դրությամբ՝ **119 583 363 ՀՀ դրամ**, 2018 թվականի դրությամբ՝ **135 229 944 ՀՀ դրամ**, 2019 թվականի դրությամբ՝ **140 560 433 ՀՀ դրամ,** 2020 թվականի դրությամբ՝ **132 976 832 ՀՀ դրամ,** 2021 թվականի դրությամբ՝ **123 369 193 ՀՀ դրամ**, 2022 թվականի դրությամբ՝ **145 065 256 ՀՀ դրամ**, 2023 թվականի դրությամբ՝ **166 402 824 ՀՀ դրամ**, իսկ 2024 թվականի դրությամբ՝ **189 579 853 ՀՀ դրամ**:

(...)»:

40. Հայտարարագրերի լրացուցիչ զննության 2025 թվականի փետրվարի 25-ի արձանագրությամբ, համաձայն որի՝ զննության են ենթարկվել Ռուզաննա Գուրգենի Խաչատրյանի՝ 2011, 2012, 2013, 2014, 2015, 2021, 2022 և 2023 թվականների, ինչպես նաև Սեյրան Մուշեղի Օհանյանի՝ 2011, 2012, 2013, 2014, 2015, 2016, 2021, 2022 և 2023 թվականների հայտարարագրերը:

Նշված զննությամբ, ի թիվս այլնի, հաստատվել է, որ՝

- Սեյրան Օհանյանը 2011 թվականի սկզբում ունեցել է 7.500.000 ՀՀ դրամ, իսկ հարկային տարվա վերջում՝ 11.500.000 ՀՀ դրամ:

Հարկային տարվա ընթացքում եկամտի չափը կազմել է 7.166.712 ՀՀ դրամ:

- Ս.Օհանյանը 2012 թվականի սկզբում ունեցել է 11.500.000 ՀՀ դրամ, իսկ

հարկային տարվա վերջում՝ 14.000.000 ՀՀ դրամ:

Հարկային տարվա ընթացքում եկամտի չափը կազմել է 7.166.712 ՀՀ դրամ:

- Ս.Օհանյանը 2013 թվականի սկզբում ունեցել է 14.000.000 ՀՀ դրամ, իսկ հարկային տարվա վերջում՝ 16.000.000 ՀՀ դրամ:

Հարկային տարվա ընթացքում եկամտի չափը կազմել է 7.166.712 ՀՀ դրամ:

- Ս.Օհանյանը պաշտոնական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու օրվա դրությամբ առկա գույքի, եկամուտների և փոխկապակցված անձանց հայտարարագիրը ներկայացրել է 18.04.2014 թվականին:

Նշված հայտարարագրի համաձայն՝ ունեցել է 16.000.000 ՀՀ դրամ, իսկ եկամտի չափը կազմել է 9.406.487 ՀՀ դրամ:

- Ս.Օհանյանը 2014 թվականի սկզբում ունեցել է 16.000.000 ՀՀ դրամ, իսկ հարկային տարվա վերջում՝ 17.500.000 ՀՀ դրամ:

Հարկային տարվա ընթացքում եկամտի չափը կազմել է 9.339.602 ՀՀ դրամ:

- Ս.Օհանյանը 2015 թվականի սկզբում ունեցել է 17.500.000 ՀՀ դրամ, իսկ հարկային տարվա վերջում՝ 18.000.000 ՀՀ դրամ:

Հարկային տարվա ընթացքում եկամտի չափը կազմել է 9.339.602 ՀՀ դրամ:

- Ս.Օհանյանը պաշտոնական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու օրվա դրությամբ առկա գույքի, եկամուտների և փոխկապակցված անձանց հայտարարագիրը ներկայացրել է 10.10.2016 թվականին:

Նշված հայտարարագրի համաձայն՝ ունեցել է 18.000.000 ՀՀ դրամ, իսկ եկամտի չափը կազմել է 7.004.701 ՀՀ դրամ, իսկ որպես պաշտոնը դադարեցնելու տարեթիվ նշված է 08.09.2016թ.:

- Ռուզաննա Խաչատրյանը 2011 թվականի ընթացքում դրամական միջոցներ և եկամուտներ չի ունեցել:

- Ռ.Խաչատրյանի եկամուտը 2012 թվականին կազմել է 1.854.000 ՀՀ դրամ:

- Ռ.Խաչատրյանի եկամուտը 2013 թվականին կազմել է 1.698.000 ՀՀ դրամ:

- Ռ.Խաչատրյանի եկամուտը 2014 թվականին կազմել է 1.698.000 ՀՀ դրամ:

- Ռ.Խաչատրյանի եկամուտը 2015 թվականին կազմել է 1.698.000 ՀՀ դրամ:

Այսպիսով, 2011 թվականին Սերյան Օհանյանն ունեցել է 7.500.000 ՀՀ դրամ, իսկ պաշտոնը դադարեցնելու՝ 08.09.2016թ. դրությամբ՝ 18.000.000 ՀՀ դրամ դրամական

միջոցներ: 2011 թվականին հայտարարագիր ներկայացնելու օրվանից մինչև պաշտոնը դադարեցնելու օրը՝ 08.09.2016թ., վերջինիս եկամուտը կազմել է 47.184.041 ՀՀ դրամ:

2011-2015 թվականների ընթացքում Ռուզաննա Խաչատրյանի եկամուտը կազմել է 6.948.000 ՀՀ դրամ:

Վերոգրյալ տվյալները թույլ են տալիս արձանագրելու, որ Գեղարքունիքի մարզ, Ճամբարակ համայնքի Դրախտիկ գյուղի 1-ին փողոցի 71 հողամասում առկա գույքի՝ 2016 թվականի դրությամբ 125 394 158 ՀՀ դրամ շուկայական արժեքն էականորեն գերազանցում է 2011-2016 թվականների ընթացքում Ս.Օհանյանի և Ռ.Խաչատրյանի կողմից հայտարարագրված դրամական միջոցների և ստացված եկամուտների հանրագումարը:

41. Թիվ 90101617 քրեական վարույթով Վալենտին Աթաբեկի Պետրոսյանի նկատմամբ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 315²-րդ հոդվածով և 314-րդ հոդվածի 1-ին մասով վաղեմության ժամկետն անցած լինելու, ինչպես նաև համաներման ակտի ընդունման հիմքերով քրեական հետապնդում չիրականացնելու մասին **2020 թվականի մարտի 4-ի որոշմամբ:**

Հիշյալ որոշմամբ մինչդատական վարույթն իրականացրած մարմինը հաստատված է համարել, որ Վալենտին Աթաբեկի Պետրոսյանը, 2010-2017 թվականներին հանդիսանալով Գեղարքունիքի մարզի Դրախտիկ համայնքի ղեկավար, հաստատապես տեղյակ լինելով ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի կողմից Դրախտիկ համայնքի 1-ին փողոցի 71 հասցեում առանց համապատասխան թույլտվության ամառանոց կառուցելու հանգամանքի մասին, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 8-րդ կետի համաձայն ունենալով ինքնակամ շինությունը կանխարգելելու ու կասեցնելու, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով դրա հետևանքների վերացումն ապահովելու լիազորություն, դիտավորությամբ չի կատարել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով սահմանված համայնքի ղեկավարի իր լիազորությունները, ինքնակամ կառույց իրականացրած անձի նկատմամբ չի կիրառել վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսդրությամբ նախատեսված վարչական պատասխանատվության միջոցներ:

Բացի այդ, Վ.Պետրոսյանը, հաստատապես իմանալով Դրախտիկ համայնքի 1-ին փողոցի 71 հասցեի հողամասում արդեն իսկ կառուցված Սեյրան Օհանյանի ամառանոցի

առկայության մասին, կազմել և հանձնել է պաշտոնական փաստաթուղթ հանդիսացող կեղծ ճարտարապետահատակագծային առաջադրանք, որում մտցրել է կեղծ տեղեկություններ այն մասին, որ նշված հողամասը չկառուցապատված, միջին թեքություններով, կիսով չափ ծառապատված տարածք է, որը հիմք ընդունելով, 12.12.2016 թվականին միջգերատեսչական հանձնաժողովի կողմից անցկացված մրցույթի արդյունքում «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի հետ կնքված պայմանագրի հիման վրա Բենիամին Սուրենի Ղալեչյանը նշված տարածքի նկատմամբ ձեռք է բերել կառուցապատման իրավունք:

42. Թիվ 90101617 քրեական վարույթով Միհեր Արշակի Կիրակոսյանի նկատմամբ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասով վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով քրեական հետապնդում չիրականացնելու մասին **2020 թվականի մարտի 4-ի որոշմամբ:**

Հիշյալ որոշմամբ մինչդատական վարույթն իրականացրած մարմինը հաստատված է համարել, որ «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի «Արտանիշ» մասնաճյուղի ղեկավար Միհեր Արշակի Կիրակոսյանը, հանդիսանալով պաշտոնատար անձ, անձնական այլ շահագրգռվածությունից ելնելով չի կատարել իր ծառայողական պարտականությունները, մասնավորապես՝ հաստատապես իմանալով, որ պետական սեփականություն հանդիսացող՝ Գեղարքունիքի մարզի Դրախտիկ համայնքի 1-ին փողոցի 71 հասցեի հողամասի վրա ապօրինի կառուցվում են ինքնակամ շենք-շինություններ, միջոցներ չի ձեռնարկել դրանք կասեցնելու ուղղությամբ, այդ մասին չի կազմել արձանագրություն (ակտ) և անհապաղ չի ներկայացրել վերադասության կարգով, որի հետևանքով պետական սեփականություն հանդիսացող հողամասը զավթվել է և այն չի ծառայել իր նպատակներին:

43. Թիվ 90101617 քրեական վարույթով Վաչե Մանթաշի Աղաջանյանի նկատմամբ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասով վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով քրեական հետապնդում չիրականացնելու մասին **2020 թվականի մարտի 4-ի որոշմամբ:**

Հիշյալ որոշմամբ մինչդատական վարույթն իրականացրած մարմինը հաստատված է համարել, որ Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի «Արտանիշ» մասնաճյուղի տեսուչ Վաչե Մանթաշի Աղաջանյանը, հանդիսանալով պաշտոնատար անձ, անձնական այլ

շահագրգռվածությունից ելնելով չի կատարել իր ծառայողական պարտականությունները, մասնավորապես՝ հաստատապես իմանալով, որ պետական սեփականություն հանդիսացող՝ Գեղարքունիքի մարզի Դրախտիկ համայնքի 1-ին փողոցի 71 հասցեի հողամասի վրա ապօրինի կառուցվում են ինքնակամ շենք-շինություններ, միջոցներ չի ձեռնարկել դրանք կասեցնելու ուղղությամբ, այդ մասին չի կազմել արձանագրություն (ակտ) և անհապաղ չի ներկայացրել վերադասության կարգով, որի հետևանքով պետական սեփականություն հանդիսացող հողամասը զավթվել է և այն չի ծառայել իր նպատակներին:

ՀՀ Սահմանադրության 96-րդ հոդվածի համաձայն.

«(...)

2. Պատգամավորի նկատմամբ քրեական հետապնդում կարող է հարուցվել միայն Ազգային ժողովի համաձայնությամբ: Պատգամավորն առանց Ազգային ժողովի համաձայնության չի կարող զրկվել ազատությունից, բացառությամբ երբ նա բռնվել է հանցանք կատարելու պահին կամ անմիջապես դրանից հետո: Այս դեպքում ազատությունից զրկելը չի կարող տևել յոթանասուներկու ժամից ավելի: Պատգամավորին ազատությունից զրկելու մասին անհապաղ տեղեկացվում է Ազգային ժողովի նախագահը»:

«Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքի 108-րդ հոդվածի համաձայն.

«1. Պատգամավորի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելուն կամ նրան ազատությունից զրկելուն համաձայնություն տալու մասին միջնորդագիրը գլխավոր դատախազը ներկայացնում է Ազգային ժողովի նախագահին: Ազգային ժողովի նախագահն այդ մասին անմիջապես տեղեկացնում է միջնորդագրում նշված պատգամավորին, իսկ դրա անհնարինության դեպքում հանդես է գալիս հայտարարությամբ: Միջնորդագրին կցվում է պատգամավորի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելուն կամ նրան ազատությունից զրկելուն համաձայնություն տալու մասին Ազգային ժողովի որոշման նախագիծը:

(...)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 37-րդ հոդվածի համաձայն.

« 1. Մինչդատական վարույթի ընթացքում վերադաս դատախազը՝

(...)

9) հսկող դատախազի առաջարկությամբ դիմում է իրավասու մարմիններ՝ քրեական հետապնդման անձեռնմխելիությունից օգտվող անձանց նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու կամ նրանց ազատությունից զրկելու համաձայնություն ստանալու միջնորդությունով.

(...)»:

2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի համաձայն.

«1. Հանցավոր ճանապարհով ստացված գույքի փոխարկումը (կոնվերտացումը) կամ փոխանցումը (եթե հայտնի է, որ այդ գույքն ստացվել է հանցավոր գործունեության արդյունքում), որը նպատակ է ունեցել թաքցնել կամ խեղաթյուրել այդ գույքի հանցավոր ծագումը կամ օժանդակել որևէ անձի, որպեսզի նա խուսափի իր կատարած հանցանքի համար պատասխանատվությունից, կամ գույքի իրական բնույթը, ծագման աղբյուրը, գտնվելու վայրը, տնօրինման եղանակը, տեղաշարժը, իրավունքները կամ պատկանելիությունը թաքցնելը կամ խեղաթյուրելը (եթե հայտնի է, որ այդ գույքն ստացվել է հանցավոր գործունեության արդյունքում) կամ գույք ձեռք բերելը կամ տիրապետելը կամ օգտագործելը կամ տնօրինելը (եթե այդ գույքի ստացման պահին հայտնի էր, որ այն ստացվել է հանցավոր գործունեության արդյունքում)՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով:

2. Նույն արարքը, որը կատարվել է՝

1) (...):

3. Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝

1) առանձնապես խոշոր չափերով,

2) (...),

պատժվում է ազատազրկմամբ՝ վեցից տասներկու տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա:

4. Սույն հոդվածում խոշոր չափ է համարվում հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհազարապատիկը գերազանցող գումարը (արժեքը), իսկ առանձնապես խոշոր չափ է համարվում հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի տասհազարապատիկը գերազանցող գումարը

(արժեքը):

5. Սույն հոդվածի իմաստով հանցավոր ճանապարհով ստացված գույք է համարվում սույն օրենսգրքի 103.1-ին հոդվածի 4-րդ մասով նախատեսված գույքը, որն ուղղակի կամ անուղղակի առաջացել կամ ստացվել է սույն օրենսգրքով նախատեսված հանցագործությունների կատարման արդյունքում»:

2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի համաձայն.

«1. Պաշտոնատար անձի կողմից իր պաշտոնեական դիրքը ծառայության շահերին հակառակ օգտագործելը կամ ծառայողական պարտականությունները չկատարելը՝ շահադիտական, անձնական այլ շահագրգռվածությունից կամ խմբային շահերից ելնելով, որն էական վնաս է պատճառել անձանց, կազմակերպությունների իրավունքներին ու օրինական շահերին, հասարակության կամ պետության օրինական շահերին (գույքային վնասի դեպքում՝ հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի չափը գերազանցող գումարը կամ դրա արժեքը)՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը հինգ տարի ժամկետով, կամ կալանքով՝ երկուսից երեք ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը չորս տարի ժամկետով:

(...):

2. Նույն արարքը, որն անզգուշությամբ առաջացրել է ծանր հետևանքներ՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից վեց տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

3. Սույն գլխում պաշտոնատար անձինք են՝

1) մշտապես, ժամանակավորապես կամ առանձին լիազորությամբ իշխանության ներկայացուցչի գործառույթներ իրականացնող անձինք.

2) պետական մարմիններում, տեղական ինքնակառավարման մարմիններում, դրանց կազմակերպություններում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության զինված ուժերում, Հայաստանի Հանրապետության այլ զորքերում և զինվորական

միավորումներում մշտապես, ժամանակավորապես կամ առանձին լիազորությամբ կազմակերպական-տնօրինչական, վարչատնտեսական գործառույթներ իրականացնող անձինք:

(...)»:

Նույն օրենսգրքի ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի համաձայն.

«1. Պաշտոնատար անձի կողմից կաշառք ստանալը, այսինքն՝ պաշտոնատար անձի կողմից անձամբ կամ միջնորդի միջոցով իր կամ այլ անձի համար դրամ, գույք, գույքի նկատմամբ իրավունք, արժեթղթեր կամ որևէ այլ առավելություն ստանալը կամ պահանջելը կամ ստանալու խոստումը կամ առաջարկն ընդունելը՝ կաշառք տվողի կամ նրա ներկայացրած անձի օգտին պաշտոնատար անձի կողմից իր լիազորությունների շրջանակում որևէ գործողություն կատարելու կամ չկատարելու կամ իր պաշտոնեական դիրքն օգտագործելով այդպիսի գործողություն կատարելուն կամ չկատարելուն նպաստելու կամ ծառայության գծով հովանավորչության կամ թողտվության համար՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը հինգ տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

2. Պաշտոնատար անձի կողմից կաշառք ստանալը՝ կաշառք տվողի կամ նրա ներկայացրած անձի օգտին ակնհայտ ապօրինի գործողության կամ անգործության համար՝

(...):

3. Նույն արարքը, որը կատարվել է՝

1) (...):

4. Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ կամ երրորդ մասով նախատեսված արարքները, որոնք կատարվել են՝

1) (...),

2) առանձնապես խոշոր չափերով,

3) (...)՝

պատժվում են ազատազրկմամբ՝ յոթից տասներկու տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա:

5. (պարբերությունն ուժը կորցրել է 05.12.06 ՀՕ-256-Ն)

Սույն գլխում խոշոր չափ է համարվում հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից հազարապատիկը չգերազանցող գումարը (արժեքը):

Սույն գլխում առանձնապես խոշոր չափ է համարվում հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկը գերազանցող գումարը (արժեքը)»:

2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 314.3-րդ հոդվածի համաձայն.

«1. «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի իմաստով հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձի կողմից հայտարարագրերում կեղծ տվյալ ներկայացնելը կամ հայտարարագրման ենթակա տվյալը թաքցնելը՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկից երեքհազարապատիկի չափով կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

2. Նույն արարքը, որը հանգեցրել է առանձնապես խոշոր չափերով գույքի կամ եկամտի չհայտարարագրմանը՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից չորս տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա»:

ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածի համաձայն.

«1. Հանցավոր ճանապարհով ստացված գույքի փոխարկումը (կոնվերտացումը) կամ փոխանցումը (եթե հայտնի է, որ այդ գույքն ստացվել է հանցավոր գործունեության արդյունքում), որը նպատակ է ունեցել թաքցնել կամ խեղաթյուրել այդ գույքի հանցավոր ծագումը կամ օժանդակել որևէ անձի, որպեսզի նա խուսափի իր կատարած հանցանքի համար պատասխանատվությունից, կամ գույքի իրական բնույթը, ծագման աղբյուրը, գտնվելու վայրը, տնօրինման եղանակը, տեղաշարժը, տեղաբաշխումը, իրավունքները կամ պատկանելությունը թաքցնելը կամ խեղաթյուրելը (եթե հայտնի է, որ այդ գույքն

ստացվել է հանցավոր գործունեության արդյունքում) կամ գույք ձեռք բերելը կամ տիրապետելը կամ պահելը կամ օգտագործելը կամ տնօրինելը (եթե այդ գույքի ստացման պահին հայտնի էր, որ այն ստացվել է հանցավոր գործունեության արդյունքում)՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝

1) (...):

3. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝

1) (...),

3) առանձնապես խոշոր չափերով՝

պատժվում է ազատազրկմամբ՝ վեցից տասներկու տարի ժամկետով:

4. Սույն հոդվածում խոշոր չափ է համարվում 5 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող գումարը (արժեքը), իսկ առանձնապես խոշոր չափ՝ 10 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող գումարը (արժեքը):

5. Սույն հոդվածի իմաստով՝ հանցավոր ճանապարհով ստացված գույք է համարվում սույն օրենսգրքի 121-րդ հոդվածի 10-րդ մասով սահմանված գույքը, որն ուղղակիորեն կամ անուղղակիորեն ստացվել է կամ առաջացել սույն օրենսգրքով նախատեսված հանցագործությունների կատարման արդյունքում»:

ՀՀ քրեական օրենսգրքի 435-րդ հոդվածի համաձայն.

«1. Կաշառք ստանալը՝ պաշտոնատար անձի կողմից անձամբ կամ միջնորդի միջոցով իր կամ այլ անձի համար գույք, ներառյալ դրամական միջոց, արժեթուղթ, վճարային այլ գործիք, գույքի նկատմամբ իրավունք, ծառայություն կամ որևէ այլ առավելություն ստանալը, պահանջելը, կաշառք տալու առաջարկ ներկայացնելը կամ կաշառք տալու առաջարկը կամ խոստումն ընդունելը՝ իր իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով կաշառք տվողի կամ նրա մատնանշած անձի օգտին գործողություն կատարելու կամ չկատարելու համար՝

պատժվում է կարճաժամկետ ազատազրկմամբ՝ մեկից երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը հինգ տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝

1) մի խումբ պաշտոնատար անձանց կողմից,

2) (...):

3. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝

1) (...)

3) առանձնապես խոշոր չափերով՝

պատժվում է ազատազրկմամբ՝ յոթից տասներկու տարի ժամկետով»:

ՀՀ քրեական օրենսգրքի 441-րդ հոդվածի համաձայն.

«1. Պաշտոնատար անձի կողմից իր իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն ի վնաս պետական կամ ծառայողական շահերի օգտագործելը կամ իր ծառայողական պարտականությունը չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը կամ այնպիսի արարք կատարելը, որը չի բխում իր լիազորություններից կամ դուրս է իր լիազորությունների շրջանակից, որն էական վնաս է պատճառել անձի կամ կազմակերպության իրավունքներին, ազատություններին կամ օրինական շահերին կամ հասարակության կամ պետության օրինական շահերին՝

պատժվում է տուգանքով՝ քսանապատիկից քառասնապատիկի չափով, կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ երեքից յոթ տարի ժամկետով, կամ ազատության սահմանափակմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ մեկից երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ մեկից չորս տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը՝

1) (...),

2) պատճառել է առանձնապես խոշոր չափերի գույքային վնաս,

3) (...),

4) կատարվել է մի խումբ պաշտոնատար անձանց կողմից նախնական համաձայնությամբ կամ

5) անզգուշությամբ առաջացրել է այլ ծանր հետևանք՝

պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով:

(...):

4. Սույն հոդվածի 1-ին մասի իմաստով՝ գույքային վնասի դեպքում էական է համարվում խոշոր չափերի գույքային վնասը»:

ՀՀ քրեական օրենսգրքի 444-րդ հոդվածի համաձայն.

«1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձի կողմից հայտարարագրում կեղծ տվյալ ներկայացնելը կամ հայտարարագրման ենթակա տվյալը թաքցնելը կամ հայտարարագիրը օրենքով սահմանված պատասխանատվության կիրառումից հետո՝ 30 օրվա ընթացքում, չներկայացնելը՝

պատժվում է տուգանքով՝ տասնապատիկից երեսնապատիկի չափով կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ երկուսից հինգ տարի ժամկետով, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

2. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձի կողմից հայտարարագրում կեղծ տվյալ ներկայացնելը կամ հայտարարագրման ենթակա տվյալը թաքցնելը, որը հանգեցրել է առանձնապես խոշոր չափերով գույքի կամ եկամտի կամ ծախսի չհայտարարագրմանը՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից վեց տարի ժամկետով:

3. Սույն հոդվածի իմաստով՝ առանձնապես խոշոր չափ է համարվում 1 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող գումարը (արժեքը)»:

Այսպիսով, գնահատելով քրեական վարույթով հավաքված ապացույցները վերաբերելիության, թույլատրելիության, հավաստիության, իսկ բոլոր ապացույցների համակցությունը՝ բավարարության տեսանկյունից՝ պետք է արձանագրել, որ առկա են բավարար փաստեր ՀՀ ազգային ժողովի ութերորդ գումարման պատգամավոր Սեյրան Օհանյանի նկատմամբ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասով, 311-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով, 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 314.3-րդ հոդվածի 2-րդ մասով (համապատասխանում են 2022 թվականի հուլիսի 1-ին ուժի մեջ մտած ՀՀ քրեական օրենսգրքի 441-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ, 4-րդ և 5-րդ կետերին, 435-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետին, 296-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետին, 444-րդ հոդվածի 2-րդ մասին) հանրային քրեական հետապնդում հարուցելու համար, ուստի հիմք ընդունելով ՀՀ ազգային ժողովի ութերորդ գումարման պատգամավոր Սեյրան Օհանյանի նկատմամբ հանրային քրեական

հետապնդում հարուցելու համաձայնություն ստանալու համար ՀՀ Ազգային ժողով դիմելու վերաբերյալ հսկող դատախազի առաջարկությունը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 96-րդ հոդվածով, «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ Սահմանադրական օրենքի 108-րդ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով,

Մ Ի Ջ Ն Ո Ր Դ Ո Ւ Մ Ե Մ՝

Տալ համաձայնություն՝ ՀՀ ազգային ժողովի ութերորդ գումարման պատգամավոր Սեյրան Մուշեղի Օհանյանի նկատմամբ հանրային քրեական հետապնդում հարուցելու վերաբերյալ:

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ԴԱՍԻ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ **ԱՆՆԱ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ**